



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

960

Հիր բագաջնություն

Ա. Դեմքինը 1888

82

C-53

2011

Ex 2003

82
ԱՊ-53


ՎԻԼԻԱՄ ԶԵԿՈՂԻՐԻ

ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ

ՈՂՅԵՐԳԱԽԹԻԻՆ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱՃՐՎ:

{Ժարդ մանեց

ՍՏ. ՄԱԼԻԿԱՍԵԱՆՑ



Ա. ԳԵՏՏԵՐՅՈՒԹՎ
ՏՊԵՐՄՆ Ի. Ն. ՍԿՈՐՈԽՈՎՈՎԸ
1888

1804

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ

Վառջին անգամ հրատարակելով Ա կլիմամ Շ էկապիրի
«Լիր թագաւոր» (King Lear) ողբերգութեան հայերէն թարգ-
մանութիւնը՝ անհրաժեշտ եմ համարում մի քանի խօսք ասել
նորա արտաքին կողմբի մասին, իրու բացատրութիւն այն լե-
զուային նոր կիրառութիւններին, որոց կհանդիպի ընթերցողը
առա մէջ:

Թարգմանութեան մէջ ես հետեւ եմ գլխաւորապէս Հէյն-
րիխ Ֆօսսի (Heinrich Voss) գերմաներէն չափաւոր թարգմանու-
թեան, որ բնագրին, այսինքն անգղիերէնին բոլորովին զուգըն-
թաց է, վասն զի տող առ տող և մէծ մասամբ նաև բառ առ բառ
թարգմանութիւն է անգղիերէնից: Գերմաներէնի և անգղիերէնի
մերձաւոր նմանութեան պատճառով շատ տեղ ունի նաև բնագրի
բարակ իմաստները, հանձարաւոր խօսքերն ու բառախաղները,
այնպէս որ ամենայն հաւատարմութեան արժան է նա, և բոլոր
թարգմանութիւններին մէջ ամենամօտն է բնագրին, բացի մի քա-
նի տեղերից, հարկաւ, ուր ստանաւորի յանգերին պատճառով
թարգմանիչն ստիպուած է եղել բնագրից փոքր ինչ շեղիլ, պահ-
պանելով միենոյն ժամանակ տողերի կարգն և իմաստի ճշտու-
թիւնը:

«Եղին արժանաւորութիւնն ունի նաև Ֆրանսուա-Ա իկառ
Հենրի (François-Victor Hugo) գաղղիերէն թարգմանութիւնը,
այս տարբերութեամբ միայն, որ արձակ գրուածք է, բայց նորա
մէջ բնագրի տողերը միմեանցից բաժանուած են գծիկներով: Այս
կերպով չափաւոր գրութեան կապանքներից արձակուած լինելով
և միենոյն ժամանակ բնագրի տողերը պահպանելով՝ այս թարգ-
մանութիւնը կրկնակի յարգ ունի մէկ ուրիշ թարգմանչի համար,
որ կարող է այնտեղ գտնել բնագրի մէկ՝ արտաքին ձևի և թէ
ներքին իմաստի անվիճելի հարազատ փոխադրութիւնը: Աչքի
առաջ ունեցել եմ նաև Լը Տուրնեօրի (Le Tourneur) և Պրուժինինի



2481-57

(Дружининъ) գաղղիերէն և ոսերէն թարգմանութիւնները, որոց առաջինն արձակ է, իսկ երկրորդը չափաւոր և մեծ մասամբ ճիշտ ։ իւղոյի գաղղիերէն թարգմանութեան հետ։ Նարկ եղած ժամանակ երբեմն դիմել եմ նաև բնագրին՝ համեմատութեան համար։ Այս կերպով իմ թարգմանութեանս ճշութիւնն և կարելի հաւատարմութիւնն երաշխաւորուած են։

«Եթի թարգմանոր»ի «Խախին նիւթը քաղել եմ Գ. Նիւգոյի ներածութիւնից (իմ հատոր), իսկ ծանօթութիւնների մեծ մասը Դրուժինինից և նոյն Գ. Նիւգոյից։

Նայերէն թարգմանութեանս մէջ մի երկու քերականական նորութիւններ եմ մտցրել որոց վերայ դարձնում եմ մեր մամուլի ուշադրութիւնն։ Ես առանց վարանումի և մեծ ուրախութեամբ կհաւանէի քննադատութեան հետ, եթէ նա ապացուցանէր իմ շարժառիթների անհիմն լինելը, կամ ցոյց տար միջոցներ, որոնցով աւելի դիւրաւ կարելի լինէր հասնել իմ նախադրեալ նպատակին, այն է, թարգմանական գրուածքի լեզուին հարազատութեան և իմաստի պարզութեանն և անշփոթութեանը։ Ես իմ կողմից անտեղի չեմ համարում համառօտապէս բացատրել թէ այդ նորութիւնները և թէ նոցա գործածելուս շարժառիթները։

Ահա նոքա.

Ա. Աս, դա, նա ցուցական գերանունների իգական սեռի ձևերն—սէ, դէ, նէ.

Բ. Լ' (լիւ փշիկով).

Գ. Աս, դա, նա գերանունների տրական և հայցական հոռովարն,—Տր. սորան, դորան, Այց. սրան, դրան, և

Դ. Կարելի միօրինակութիւն այն բառերի հոլովմունքին մէջ, որոնք վերջին վանկում ունին ու ի ձայնաւորներն։

Ե. Գիտեմ, որ շատերը պիտի վրդովուին, տեսնելով իմ թարգմանութեանս մէջ գործածուած սէ, դէ, նէ,—ցուցական գերանունների իգական սեռը, միմիայն այս պատճառով, որ սասհայրերիս մէջ նորութիւն է այս գործածութիւնն։ Ուրիշ որ և է պատճառ չեն կարող ունենալ նոքա, որոնք դէմեն այս նորութեան, վասն զի վերոյիշեալ ձևերի թէ՛ ծագումն և թէ նպատակայարմարութիւնն օրինաւոր են, և ես նոցա կիրառութիւնը նորոգել եմ՝ բաւական խորհրդածած լինելով նոցա վերայ թեր և դէմ։ Ահա ասիկ իմ շարժառիթները։

Նայերէն լեզուն անտարակոյս ունեցել է նախամատենաւորական գարերում վերայիշեալ գերանունների իգականներն, (այս կամ ուրիշ ձևի տակ—հոգ չէ). վասն զի պատկանելով հնդիկ-եւրոպական մեծ ձիւղին թէ՛ բառական և թէ՛ քերականական կազմութեամբ՝ հիմնապէս պէտք է նմանութիւն ունենար նորա հետ։ Ի՞նչ էլ որ ժամանակով ասէ համեմատական լեզուագիտութիւնն հայերէնի բռնած տեղի մասին հնդիկ-եւրոպական լեզուների շարքում, թէ՛ ապացուցանէ նորա պատկանիլը սլաւո-լիթուայեան, թէ՛ իրանական լեզուախմբին^{*)} նոյն հետեւութիւնը գարձեալ կմնայ, վասն զի ինչպէս սլաւո-լիթուայեան նոյնպէս և իրանական լեզուներն արականի, իգականի, (ոմանք նաև չէզոքի) տարբեր վերջաւորութիւններն ունին, և եթէ ոմանց մէջ նոքա պակասում են՝ այս պէտք է վերադրել նոյնպէս մոռացութեան, ինչպէս և հայերէնին մէջ։ Այս խնդրից դուրս է, թէ ի՞նչպէս է մոռացուել մեր մէջ այս իգական գերանունների գործածութիւնն. մենք այստեղ միայն մատնացոյց ենք անում հայերէնին խիստ մօտ և արենակից մի ուրիշ լեզուի, նոր պարսկերէնին վերայ, որ կորցրել է նոյնպէս գոյականների և գերանունների սեռերը միանգամայն; մինչդեռ նորա նախատիպները (զանդիկ, պահլաւիկ և բէհիստանի արձանագրութիւնների լեզուն) պահել են երկուքն էլ։—Ավ որ վորքը ինչ ուշադիր լինի, թէ որչափ բազմաթիւ գերականական ձևեր կորցրել է հայերէն լեզուն իւր նախամատենագրական բազմադարեան գործածութեան մէջ՝ նա չի զարմանար, որ սա, դա, նաև ևս կորցրած լինին իրանց իգականի վերջաւորութիւններն։

Այս գերանունների իգականները գործածել են Ե. գարում խորենացին և Պատիթ անյաղթը, որոնք իբրև գասական հեղինակներ ունին հեղինակութիւն և կարող են մեզ դիւրացնել նոյնի գործածութիւնը։ Ես չեմ կարող համաձայնիլ բոլորովին մեր մէջ ընդհանուր գարձած այն կարծիքին, թէ նոքա այս արել են կոյր յունամոլութեամբ միայն։ Այս ենթագրութիւնն ի հարկէ պատիւ չէ բերում այն հեղինակներին, որոնք, մեր մատենագրութեան աստղերը, իրը թէ չեն ունեցել ոչինչ հասկացողութիւն

^{*)} 1882 թուից յետոյց, երես այս յառաջարանը գրուած է թարգմանութիւնից յետոյց և այժմ տպվում է անփոփոխ լեզուագիտութիւնն յայտնեց որոշ կարծիք այս խնդրի մասին։

լեզուի օրէնքներին վերայ և ոչինչ ճաշակ, այլ եղել են կոյլու հետեղներ յոյնին առանց հարկի: Աւելի հաւանական է, թէ նոր քա հարկադրուած են եղել գործածել այս ձեւերն: Ա ասն զերբ նորքա, թողնելով հայկական և ընդհանրապէս արևելեան լեզուների պարզ ոճն և համառօտ նախագասութիւններն, մտան Յունաստան, վարժուցան յունարէնի ձեւոր ու զարդարուն ու ձին և երկար պարբերութիւններին, երբ իրանք էլ սկսեցին նոյն լեզուով խօսիլ և ձառել յոյների ատեաններում, վերջապէս երբ որ ձեռնարկեցին յոյն հանձարի արտադրութիւններն հայերէնի վերածելու՝ այն ժամանակ զգացին, թէ պակաս է հայերէնի մէջ միջի այլոց մի բան ևս, սեռը, և այս պակասութիւնը կարելի նոյն գերանունների իգական սեռերի գործածութիւնն. վերանորոգեցին ասում եմ, վասն զի (ինչպէս կարծում է Աւսուցչ Ք. Պատկանեան) նոքա հաւանօրէն երբեմ լսած պէտք է լինէին ժողովրդին մէջ նոյնի գործածութիւնը, որ, ինչպէս տեսանք՝ հին ժամանակ հայերէնի մէջ անշուշտ գոյութիւն ունէր: — «Ի՞յն գերանունների իգականները գործածել են նաև մեր նոր գրադէտներից շատերը*» Տաճկահայաստանում, և սոցա ճաշակին և գրելու տաղանդին վերայ ի հարկէ ոչ ոք չի վիճեր:

Եւրոպական լեզուների մեծ մասին մէջ թէ՝ գյականները և թէ գերանունները սեռ ունին. եթէ առաջինները մասամբ խոչընդուած են լեզուի դիրութեան՝ սորա փոխանակ նոքա և մանաւանդ գերանունները իրանց սեռերով շատ նպաստում են նորաւանդ պարզութեան: Կարդացէք ժամանակակից եւրոպացի հեղինակ պարզութեան: Կարդացէք ժամանակակից եւրոպացի հայերի վիպասանութիւնները և դուք իսկոյն կհամաձայնիք ասածիս հետ, թէ առանց գերանունների սեռերին՝ խիստ գժուարահականական կլինէր լեզուն:

Իայց վերցիշեալ երեք կէտերը բաւական չէին ինձ համոզ զելու, որ սա, գա, նաշի իգական սեռերը գործածեմ: «Առքա ինձ համար միայն օրինաւոր գարձրին և իրանց հեղինակութեամբ ինձ համար միայն օրինաւոր գարձրին և իրանց հարդար միայն է այս իգական գերանունների: Եթէ մենք ցանկաւագունն է այս իգական գերանունների: Եթէ մենք ցանկաւագունն է այս իգական գերանուններին՝ եթէ ուղում ենք, որ

մեր լեզուն այնչափ կատարելագործուած և հարուսա լինի բառերով ու դարձուածներով, որ առանց փոքր գժուարութեան կարողանայինք որ և է շարագրութիւն դիւրաւ հայերէն թարգմանել, եթէ վերջապէս կամենում ենք ազատել հայերէնը արեւելեան լեզուների գանգաղ ու թմրեցնող ոճից և հետզհետէ մօտեցնել եւրոպական կենդանի լեզուներին՝ պէտք է լրացնենք մեր լեզուն, պէտք է աշխատինք նրան դիւրաթեք, ճկուն դարձնել պէտք է ջանանք մանաւանդ, որ հայերէն լեզուն չունենայ այնպիսի քերականական և բառական թերութիւններ, որոց պատճառով մի գրուածք անհասկանալի և մութ լինի: Զէ կարելի ուրանալ, որ բառերի պակասորդը լրացնելու մեծ ջանք կայ մէջ. իսկ քերականական թերութիւններին վերայ այնչափ չէ մտածվում: Կարո՞լ ենք մենք հայերէնի ներկայ գրութեան մէջ եւրոպական որ և է լեզուից մի շեֆ-ճօւնր թարգմանել, նոյնպէս վայելուս ոճով, պարզ լեզուով, բառերի բարակ նշանակութիւններով, ինչպէս բնագինն է, և միենոյն ժամանակ հաւատարիմ մնալ բնագրին: Մասնաւորում եր խօսքս «Լիր թագաւորի» մասին. ի՞նչ պէտք է անէ հայ թարգմանին, երբ, Լիրի հարցմունքին՝ թէ ո՞վ յանդնեցաւ այնչափ արհամարհել իւր սուրբ հանդակի աստիճանն, որ նրան շղթայեց՝ Վէնտ պատասխանում է.

«Sie und Er,

Eu'r Sohn und Eure Tochter»*).

Կոնէ ես հարկ համարեցի թարգմանել՝

«Լու և Նէ, արքայ, Զեր ուստրն ու գուստրը»:

Կամ; երբ, Լիր խենթացած ժամանակ իւր գոտրերին դատաստանի կանչելիս՝ Լոդար ասում է.

«Sieh, wie er da steht und mich anstarrt! —

Liebelst du vor Gericht, schöne Dame?»**)

Ես ստիպուած էի Նէ-ի գործածութիւնը մացնել, որպէս զերոյիշեալ տողերը թարգմանելիս՝

«Այսկեք, ի՞նչպէս

«Լու այդտեղ կանդնել վերաս է յառում

Ա առլառ աչքերը: — Աիրունիկ առնեն,

Դատիդ ատեն էլ սիրութառմես գու: —

*) Հեքիմեան, Պէտեկթաշլեան, Խորեն արքեպիսկոպոս Գալֆայեան, և այլն:

**) Բ. արարուած, Դ. տեսարան:

**) Գ. արարուած, Զ. տեսարան.

Նաև Հասկացուի գործածուած սյն տիկին բառին փոխանակ. այլ ընթերցողը կարողանայ մակաբերել, թէ Եղդար նա բառով ուրիշին է ակնարկում, այսինքն գեին: — Կարող էր կարդացողն առանց մեծ գժուարութեան հասկանալ Եղմունդի մենախօսութիւնն, (Աէրի և Հաւատարմութեան երդում տըւի ես, ևլն. *), եթէ նա և Անդի գործածութիւնը մտցուած չլինէր, որոց օգնութեամբ շատ դիւրին և պարզ է պյն հասկանալ:

Այս տնսակ օրինակները բազմաթիւ են, իսկ եւրոպական մատենագրութեան մէջ՝ անթիւ, որոց երկիմաստութիւնից եթէ մենք կամենում ենք Խոյս տալ՝ պէտք է գործածենք վերցիշեալ գերանուների իդական սեռերն:

Դ. Լ'ի (լիւն փշիկով) ծագումի, գործածութեան և Հնչիւնի ջատագովութիւնն ընթերցողը կարող է գտնել Շագրատունու Դպէտս զարդացելոց Քերականութեան վերջում, առանձին ընդարձակ ճառին մէջ. (նորա հերքումը, որ գրել է Գարբիէլ արքեպիսկոպոս Այլվալեան՝ տպուած է Ա Ենեսիկում բայց հրատարակուած չէ). ուստի ես անօգուտ եմ Համարում կրկնել այն՝ ինչ որ արդէն այնչափ պերճաբանօրէն ասել է մեր երկելի հայագէտն. միայն հարկ եմ Համարում իմ կողմից աւելցնել, թէ նորա (Շագրատունու) ճառն աւելի թէօրետիկական և լեզուագիտական նշանակութիւն և հիմ ունի. իսկ իմ գործածութիւնն՝ աւելի գործական: Ես Լ'ը գործածել եմ՝ ուր որ հարկ է եղել ճշտիւ տառադարձնել եւրոպացների (կակուղ) 1-ի Հնչիւնը, (Ասերէն 2-ի). բայց ուշադրութիւն չեմ դարձնում այն բառերին վերայ, որոց գրութիւնն ու Հնչիւնը արդէն միանգամ ընդունուած են, (օրինակ՝ Սաղմոս, Պուկաս, Ապողոն, ալէլուեայ, ևլն.) և որոնք ես գրում եմ առանց փշիկի: Առնենք երեք բառ, ալբան, ալբան և ալբան. սոցա հայերէն ճիշտ տառադարձութիւններն են՝ ալբանի, այլբանի և ալ'բանի. Երկրորդ և երրորդ բառերը թէ՛ սսերէնում և թէ հայերէնում տարբեր Հնչիւններ ունին: Կոյնպէս Gloster հայերէն Գլոստեր է, և ոչ Գլոսդէր. sol, la՝ հայերէն սօլ', լ'ա են, և ոչ սօլ, լա, ևլն: Յոյս ունիմ, թէ այս գործածութեան նպատակայարմարութիւնն ու ծագումը (Շագրատունու ճառը կարդալուց յետոյ) ըն-

թերցողին համար շատ շօշափելի և ակներև են, ուստի այս մասին երկարելն աւելորդ եմ համարում:

Դ. Աս, դա, նա ցուցական գերանունների եզակիի հետագայ հոլովմունքը — Ա. սորա, գորա. Տ. սորան, գորան. և. սըրան, գրան. Ը. և Վ. սորանից, գորանով՝ բոլորովին կամայական է իմ կողմից: Որովհետև այս գերանունների հոլովական արմատներն են միանգամայն առ և առ ևս յարմար դատեցի, տարբերութեան համար, հայցական հոլովում գործածել առ արմատը, իսկ միւս հոլովերում՝ առ: Սոցա իգականներն ի հարկէ այս տարբերութիւնը չեն կարող ունենալ, այլ հոլովվումն՝ սէ, դէրա, նէրան, սէրան, դէրանից, նէրանով, և յոդնակին՝ սէրանք, դէրանց, նէրանցից....

Դ. Գալով վերջապէս վերջի վանկում առ և չ ձայնաւորներն ունեցող բառերի հոլովմունքին, որոնք առհասարակ թեք հոլովերում կորցնում են այդ ձայնաւորներն՝ ես այս կանոնն միայն ընդհանրացրել եմ, կարելի եղածին չափ, (ոչ առանց բացառութեան), այնպէս որ գործածել եմ կին, կնի. գուստը, գստրի. տուն, տնի, ելն, ինչպէս գործածում ենք սիրտ, սրտի, քուն, քնի: Իսկ այն երկավանկ և բազմավանկ բառերն, որոնք չ ձայնաւորին վերայ են վերջանում՝ հոլովվումն, ինչպէս ընդհանրապէս՝ որդի, որդու, որդուց, ևայլն:

Ա. Ա.

27 Հոկտ. 1882
Ս. Գետերբուրգ.

ԵԽՐ ԹԱԳԱՒՈՐԻ

ՆԱԽԿԻՆ ՆԻՒԹԸ

ԺԱՅ. դարի սկզբներում (Կ) քսֆորդի աւագ-սարկաւագն Վալետէր ՄԵպս, մի գիտնական և հին ժամանակագրութիւնների շատ հետաքրքիր եկեղեցական, երբ Ճանապարհորդութիւններ էր առում Վնդղիայի այլ և այլ կողմերը, երկրի պատմութեանը վերաբերեալ նոր նիւթեր գտնելու նպատակով՝ Տրետոնի լեզուով մի ձեռագիր գրութիւն գտաւ, որի մէջ աւանդգում էին առապելական պատմութիւններ անդղիական շատ թագաւորների մասին, Տրոյիայի առնուելուց մինչև մեր թուականի Լոյ դարը: Այս ձեռագիրն իւր նիւթի նորութեան և հետաքրքրութեան պատճառով շուտով լատիներէն թարգմանուեցաւ Վալետէրի մի բարեկամին ձեռքով և նորա խնդրելով, և յետոյ նորմանդական պալատի խրախուսելով, (որ այս գրքին մէջ տեսնում էր իւր անհիերքելի ծագումն արոյացիներից) փոխադրուեցաւ նաև գաղղիերէնի ոտանաւորով, և այս կերպով ժողովրդականութիւն գտաւ: Այս հաստ գրքին մէջ, որ կոչվում է Տրուդոսի վիպասանութիւն (Roman de Brut) պատմվում է ի միջի այլոց և հետեւեալը.

«Ծալ'աղուղի որդին Լիր (Leir) թագաւորը երեք գուստը
ունէր, Կորնորիլ', Ուագաւ և Կորդէլ'. վաթսուն տարի թագա-
ւորելուց յետոյ մի օր նէրանց կանչեց և հարցրեց, թէ ո՞րը նէ-
րանցից նրան աւելի է սիրում:

«Պարնորիլ՝ ասաց, թէ նրան սիրում է իւր կեանքից աւելի, և լիր նէրան տուեց իւր թագաւորութեան երրորդ մասն և պահեց Ակովտիայի (որ յառաջ կոչվում էր Ալբանի) դքսին Ամալգամիսին Տէտ:

«Երկրորդը, Ուագաւ, ասաց, թէ իւր դէպի հայրն ունեցած սէրն անսահման է. և լիր նէրան տուեց իւր թագաւորութեան երրորդ մասը և պսակեց Վորնվալ'ի գքսին Հէննինի հետ:

«Երրորդը, Կորդէյլ՝, ասաց, թէ նրան սիրում է, ինչպէս
որ հարկ է, որ գուստը սիրէ իւր ծնողներին. Նէ նրան սիրում
է, որչափ որ արժան է. և Լիր բարկանալով այս պատասխանին
վերայ՝ նէրան անիծեց և ժառանգութիւնից զրկեց:

«Ղայց Գաղղիայի Ագանիպպուս թագաւորը լսած լինելով
Կորդէյլ'ի գեղեցկութեան մասին՝ գալիս է Լիբից Նէրա ձեռքը
խնդրելու. Լիր թէպէտ սկզբից չէ կամենում՝ բայց վերջապէս
համաձայնում է Ագանիպպուսի խնդրին, որ և Կորդէյլ'ի հետ
դառնում է Գաղղիա:

«Այս, որ ամբողջ թագաւորութիւնը բաժանել էր երկու աւագ գստրերին մէջ՝ պայմանի համաձայն՝ պէտք է նէրանց մօտ ապրէր փոխ առ փոխ, յիսուն ասպետներով։ Ակիզը գործը խաղաղ էր գնում և ՎԱՐքանի գուշաը նրան լաւ էր պահում. բայց Գորնորիլ՝ խիստ աղահ լինելով՝ համոզեց իւր մարդին, թէ թագաւորի յիսուն ասպետները շատ են և թէ պէտք է նոցանից քսանը պակսեցնել, որ և կատարեցին։ Այս երբ տեսաւ նոցայս արած՝ շատ բարկացաւ և նոցա թողնելով գնաց իւր միւս փեսային, Գորնվալի՛ դքսին մօտ։ Ուսագաւ իւր քոյրեց աւելի խիստ լինելով՝ ասպետների թիւն իջեցնում է երեսունից մինչեւ տասն և յետոյ մինչև հինգ. թագաւորը նորից դառնում է Գորնորիլի՛ մօտ, բայց սէ երկնքի վերայ երդվում է, թէ նրան միայն մէկ ասպետով կրնգունէ, ոչ աւելի։

«Այս ժամանակ Լիր միտքն է բերում իւր կորցրած մեծութիւնն, և տխրում է. յիշում է, թէ որչափ անիրաւ գտնուեցաւ դէպի Կորդէյլը, յիշում է նոյնպէս նէրա խօսքը, թէ նէ նրան սիրում է ինչպէս պէտք է սիրել ծնողներին. ուստի դիմում է Գաղղիա, իւր զստրի օդնութեանն:

«Կորդէյլ՝ երբ հօր կողմից եկած պատգամաւորից լսում է նորա կրած անպատութիւններն՝ իսկոյն թագաւորական զգեստ և քառասուն շքաղիք ասպետ յուղարկում է նորան, որոց հետ միասին Լիր թագաւորավայել պատուով մտնում է դաղղիական արքունիքն: «Կորա կրտսեր փեսան լնդունում է նրան մեծ սիրով, տալիս է նորան մի բանակ, որի օգնութեամբ Լիր յաղթում է միւս երկու փեսաններին և թագաւորում է մինչեւ իւր մահը:

«Կորան յաջորդումէ Առրղել, որի թագաւորութեան հին-

գերողդ տարին՝ քեռորդիներն ապստամբում են նէրա դէմ և կալանաւորում են: Կորդէյլ մեռնում է բանդին մէջ»:

Փիլիպպոս Արդնէյի «Արկադիա» վիպասանութեան մէջ յիշատակվում է հետեւեալը.

«Կաղապահայի թագավորութեան մէջ մի սաստիկ ցուրտ օրիշանները մրրիկից պատսպարուելու համար մի անձաւի մէջ մըսան։ Յանկարծ նոքա լսեցին խօսակցութիւն դրսում երկու մարդի մէջ։ Երբ անձաւից դուրս եկան՝ տեսան նոքա մի երիտասարդ, որ առաջնորդում էր աչքերը փորուած մի ծերունու։ Ուշադրէտ երկուքն էլ շատ վշտալի դէմք և պատառոտուն հագուստ ունէին՝ բայց կար նոցա մէջ աղնուականութեան մի նշան։

«Աշխաններն հարցրին, թէ ով են նոքա. և երիտասարդը պատմեց, թէ այն ծերունին իւր հայրն է և երբեմն Պափղագոռնիայի թագաւորն էր. բայց նորա չար որդին նրան գահից զրկեց և աչքերը կուրացրեց, որից ծերունին այն աստիճան յուսահատութեան մէջ ընկաւ՝ որ իրանից խնդրեց նրան մի ժայռի գլուխ բարձրացնել, որպէս զի այնտեղից վար նետուի և սպանուի, բայց թէ ինքը չհնազանդեցաւ իւր հօր այս կամքին։ Յետոյ ինդրեց երիտասարդը, որ գթան իւր հօր վերայ և պատսպարեն նրան։

«Օերունին մեջ մտնելով՝ պատմում է, թէ իւր որդու,
Էռնատուսի այս պատմածն ճշմարիտ է, բայց շատ թերի, վասն
զի նա չկամեցաւ իւր հօր թեթևամտութիւնն և իւր առաքինու-
թիւնը պատմել։ Պատմեց ինքն իւր կողմից, թէ այն չար որդին
իւր ապօրէն զաւակն է, որ Էռնատուսի վերայ նախանձելով՝
սկսեց սրան ատել, նախատել և ամբաստանել վերան, մինչև այն
աստիճան՝ որ ինքը թագաւորն իւր ծառաներին հրամայեց՝ նրան
անտառը տանել և սպանել։ Բայց ծառաները գթալով Էռնա-
տուսի վերան՝ աղատում են, և նա իբրև զինուոր ասպրելով՝ իւր
քաջութիւնների պատճառով փոքր ինչ բարձր աստիճանի է հաս-
նում և լուսմ է, թէ ի՞նչ է անցնում իւր հօր գլխից։—Իսկ ա-
պօրէն որդին Պէկսիրտուս, գրաւելով հօրը բոլոր հաւատարմու-
թիւնն՝ իւր ձեռքն է առնում նորա բոլոր իշխանութիւնը, զըս-
կում է նրան թագաւորութիւնից, կուրացնում է աչքերն և ար-
ձակում, մաս սպառնալով այն մարդին, որ համարձակի նորան
առաջնորդել։ Իսկ ինքը նորա տեղ թագաւոր է նստում։ Էռն-

Նատուս լսելով հօր թշուառութիւնը՝ գալիս գտնում է նրան և
սկսում է առաջնորդել: Ո՞ի անգամ նա կամցաւ ժայռից վար
նետուիլ և մեռնիլ, որպէս զի թէ իրան փրկէ և թէ իւր որ-
դուն, բայց էոնատուս նրան չժողեց:

«Ո՞ինչեն թագաւորը պատմում էր այս բաներն՝ նորա ապօրէն որդին Պլէկսիրտուս եկաւ հասաւ նոյն տեղը քառասուն ձիաւորներով՝ որպէս զի սպաննէ իւր հօր և եղբօր և անձամբ հանդիսատես լինի: Բայց ծերունուն և Լէոնատուսին պաշտպանեցին այնտեղ գտնուող իշխաններն և Պոնտոսի թագաւորն, որ երազ տեսած լինելով՝ թէ վտանգ կայ այն պահոն՝ հարիւր ձիաւորով օգնութեան էր եկել: Օներունու կողմը յաղթումէ. Պլէկսիրտուս փախչում ամրանում է մի պահով տեղում: Խոկ իշխանները ծերունուն տանում են նորա մայրաքաղաքն, ուրտեղ նա թագը գնումէ իւր Լէոնատուսի գլուխն և իսկզյն մեռնում է, չկարողանալով դիմանալ իւր հոգեկան յուզմունքներին: Լէոնատուս գնում է պաշարել իւր եղբօր Պլէկսիրտուսին, որ տեսնելով թէ քաղցածութիւնից պիտի մեռնի՝ անձնատուր է լինում եղբօրն և խոնարհութիւն է կեղծում: Լէոնատուս ներում է նորան և երկու եղբայրներն հաշտիում են»:

ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐՆ

Լիր, Ռարիտանիայի թագաւորը:

ԳԱՂՂԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐԸ:

ԲՈՒՐԳՈՆԻ ԴՈՒՔԸ:

ԿՈՐՆՎԱԼԻ ԴՈՒՔԸ:

ԱԼ'ԲԱՆԻ ԴՈՒՔԸ:

ԿԵՆՏԻ ԿՈՄՍԸ:

ԳԼՈՍՏԵՐԻ ԿՈՄՍԸ:

ԷԴԳԱՐ, ԳԼ'ՈՍՏԵՐԻ հարազատ
որդին:

ԷԴՑՈՒՆԴ, ԳԼ'ՈՍՏԵՐԻ ապօրինի
որդին:

ԿՈՒՐԱՆ, պալատական:

ՄԻՇ ՃԵՐՈՒՆԻ, ԳԼ'ՈՍՏԵՐԻ ա-
ւատառուն.

ՄԻՇ ԲԺԻՇԿ:

ԽԵՂԿԱՏԱԿԸ 1.իր թագաւորի:

ՈՍՎԱԼԴ, ԳԱՌՆԵՐԻ լուսնե-
կապետը:

ՄԻՇ ՍՊԱՅ, 1.շմունդի հրամա-
նին տակ:

ՄԻՇ ԱՍՊԵՏ, Կորդելիային յա-
րած:

ՄԻՇ ՄՈՒՆԵՏԻԿ:

ԳՈՆԵՐԻԼ' }
ՀՈԵԳԱՆ } 1.իրի դստբերն:
ԿՈՐԴԵԼԻԱ }

1.իրին ուղեկցող ԱՍՊԵՏՆԵՐ,
ՍՊԱՅՆԵՐ, ՍՈՒՐՑԱՆԴԱԿՆԵՐ,
ԶԻՆՈՒՈՐՆԵՐ:

Նքաղիր դահլիճ Լիր թագաւորի պալատում:

Կերս են մտնում Ալնծ, Գլ.ՊԱՏԵՐ և Լիթոնին:

ԿԱՇ

Ես կարծում էի, թէ թագաւորն աւելի համակրում է
Ելբանի դքսին, քան թէ Կորնվալին:

ԳԼ.ՊԱՏԵՐ

Մեղ էլ այդպէս էր երեսում. բայց այսօր, երբ նա իւր
թագաւորութիւնը բաժանում է ամենելին չենկատվում, թէ
որին է նա գերագասում. վասն զի բաժիններն այնպէս հա-
ւասար են՝ որ մարդ որչափ էլ քննէ, չե կարող ասել թէ
այս մէկը միւսից լաւ է:

ԿԱՇ

Սա ձեր որդին չէ, միլ'որդ:

ԳԼ.ՊԱՏԵՐ

Նորա կրթութեան մասին ես եմ հոգացել տէր: Եյս
բանը խոստովանելիս ես այնչափ յաճախ կարմրել եմ՝ որ
այժմ արդէն սովորական է եղել ինձ:

ԿԱՇ

Չեմ կարող ձեղ հասկանալ...

ԳԼՈՒԽԵՐ

Բայց սորա մայրն և ես միմեանց շատ լաւ էինք հասկանում: և մեր այս համաձայնութիւնից նէրան վիճակուեցաւ մի որդի ունենալ օրօրոցում յառաջ՝ քան թէ մի ամուսին ունենար իւր անկողնում: ‘Եշմալում էք այժմ յանցանքին ինչութիւնը:

ԱԼՅԱՏ

Ես չեմ կամենար, որ զգործուեր այդ յանցանքը, որն այսպիսի փառաւոր արդասիք է ունեցել:

ԳԼՈՒԽԵՐ

Բայց ես, տէր, օրինական մի որդի էլ ունիմ, սորանից մի քանի տարով մեծ, որին սորանից աւելի չեմ սիրում: Թէ եւ այս չարածմին փութաց աշխարհ գալու՝ յառաջ քան թէ իրան խնդրել էին՝ բայց սորա մայրը գեղեցիկ էր և սորա ծննդեան ժամանակ ինձ այնքան ցնծութիւն պատճառեց, որ այս չարին ճանաչել հարկադրուեցայ:—Եզմունդ, ճանաչում ես այս ազնուական լորդին:

ԵԳՄՈՒՆԴ

ՈՉ միշտ:

ԳԼՈՒԽԵՐ

Աէնտի կոմն է: Յարդիր նրան իրուեւ իմ թանկագին բարեկամիս:

ԵԳՄՈՒՆԴ

Զեր յարգութեան խնարհ ծառայ եմ:

ԱԼՅԱՏ

Դուք հաճելի էք ինձ, և ես կկամենայի ձեզ հետ աւելի մօտ ծանօթանալ:

ԵԳՄՈՒՆԴ

Ես կջանամ, միշտ, ձեր յարգանքին արժանաւոր լինել:

ԳԼՈՒԽԵՐ

Ինը տարի օտարութեան մէջ է անցրել և նորից պիտի դնայ: (Փառվէք յայներ են լուս-մ): Թագաւորը գալիս է: ‘Եւրա էն մանու-մ իր, որի առջևից մի ըստ էն գանձու-մ, ԿՈՐՆՎԱՐ’, ԱՌԱՆԻ, ԳՈՐՆԵՐԻԼ’, ՀՈԵ-ԳԱՆ. ԿՈՐԴԵԼԻԱ, և օքանուիՄ:

(Լ.Ի.Պ. ԳԼՈՒԽԵՐ)

Գնա սպասաւորել Գաղղիոյ թագաւորին և Ըուրգոնի գքսին:

ԳԼՈՒԽԵՐ

Պատրաստ եմ, արքայ: (Գնու-մ էն ԳԼՈՒԽԵՐ և Լուս-նոր):

Լ.Ի.Պ.

Պարզում եմ աշա

Իմ մըտքիս խորհուրդն: Ի՞րեք քարտէսը: (Բնու-մ էն մի ժամանք):

Գիտացէք, որ երեք մաս բաժանեցինք

Մեր տէրութիւնն ու բարեհաճեցանք

Մեր ծերութիւնից բառնալ ամեն հող

Եւ աշխատութիւն: Թողլ այժմէն գործեն

Կայտառ ոյժերը: Խոկ մէնք՝ թեթեցած՝

Ճանապարհ հորդենք գեպի գերեզման:

Կորնվալ’ մեր որդի, և նոյնչափ սիրուած

Որդի Ելքանի, մէնք որոշեցինք

Եյժմէն հաստատել մեր աղջիկների

Օժիտը, որպէս զի ապագայում

Որ և իցէ վէճ տեղիք ըունենայ:

Գաղղիոյ արքայն և Ըուրգոնի դուքսն

Երկար ժամանակ մըրցում են արդէն

Մեր կըրտակը զըրտի սէրն զըրտակու

Եւ ըսպասում են մեր պալատումը.

‘Նոքա պատասխան կըստանան այսօր: —

Եյժմ, որ հեռացանք թագաւորական

Բոլոր հոգսերից և արդիւնքներից
Ասացէք, զըստիկոս, երեքիցդ որի՞ն
Ճամար կարող եմ ասել՝ թէ նէ ինձ
Ամենքից աւել է սիրում որ ևս
Այստեղ շըռայլեմ ճոխագոյն բարիք՝
Ուր կաւելանայ անձի արժանիք։
Դու, իմ անդրանիկ Գոներիլ, սկսիր։

ԿՈՒՅԵԼԻԱ

Եմ սէրս չեն կարող լիով բացատրել
Բառեն, ով իմ հայր, ևս սիրում եմ ձեզ
Աւել քան աչքիս լցոն, ազատութիւնն
Եւ օդը. բոլոր անգին գանձերից
Առաւել. ինչպէս մի կեանք, ճոխացած
Առողջութիւնով, փառքով՝ մեծութեամբ
Եւ գեղեցկութեամբ, այնպէս շատ՝ որչափ
Որ և է ատեն սիրել է մի դուսար
Եւ մի հայր՝ սիրուել. որի մօտ համր է
Լեզուն, և շունչը արկար։ Սիրում եմ
Չեզ գեր ի վերոյ քան չափ ու նպատակ։

ԿՈՒՅԵԼԻԱ (առանցին)

Ինձ ի՞նչ է մընում. սիրել և լլուել։

Լ.Ի.Պ. (Գանելին)

Այս երկիրներին—տես, մինչեւ այստեղ—
Եի խիտ անտառով, շըքեղ դաշտերով,
Առատ գետերով, լայն հովիաներով—
Տիրուշին ևս գու։ Ալքանիի և
Քո սերունդներիդ լինին յաւիտեան։
Իսկ ի՞նչ կասես գու, մեր երկրորդ դըստիկ,
Առընվալի կին, սիրելի Ճուղան։

Հ.Ա.Գ.Ա.Կ.

Միհնոյն տարբից ննք ես և իմ քոյրս.
Ինձ էլ նոյն չափով եմ գընաշատում։

Արբում եմ սրբումն այն բոլոր սէրս,
Ինչ որ բացատրեց Գոներիլ. միայն
‘Նէ շատ քիչ ասաց։ Ես թըշնամի եմ
Ամենայն տեսակ ցընծութիւնների,
Որ սեփական են մեր ըզդայութեան։
Եւ երջանիկ եմ ըզդում ինձ միայն
Չեր սիրով, ով իմ անգին թագաւոր։

ԿՈՒՅԵԼԻԱ (առանցին)

Խեղձ Ասրդելիա. բայց ինչու իսեղձ։ Ես
Գիտեմ թէ որչափ իմ սէրս մեծ է
Քան լեզու։

Լ.Ի.Պ.

Քեղի և սերունդներիդ
Թաղ ժառանգութիւն լինի յաւիտեան
Այս երկրոգ մասը մեր սիրուն երկրի,
Որ Գոներիլի բաժինից վար չէ
Եւ գեղեցկութեամբ, ընդարձակութեամբ
Եւ արժանիքով։ Իսկ դու, ցընծութիւն
Եմ վերջին, բայց ոչ նրազ սիրելի,
Որի նորափթիթ սէրի առիթով
Մըցում են կաթը Բուրգոնի և որթն
Գաղղից. գու ի՞նչ կարող ես ասել
Որով ըստանաս երկրոգ բաժինը,
Որ քան քոյրերինդ աւելի ճոխ է։

ԿՈՒՅԵԼԻԱ

Աչինչ, մեծարգոյ հայր։

Լ.Ի.Պ.

Աչինչ։

ԿՈՒՅԵԼԻԱ

Աչինչ։

ԼԻՒ

Ոչքնչեց ծընում է միայն ոչինչ:
Միւսանդամ խօսիր:

ԿՈՐԴԵԼԻՒ

Կ-նչ թըշուառ եմ ես.

Որստինըս լեզուով չեմ կարող յայտնել:
Չեզ սիրում եմ, տէր, ինչպէս որ իմ պարտքու
չբամայում է, ոչ աւել ոչ պակաս:

ԼԻՒ

ԵՇ, Առողելեա, գէթ փոքր ինչ ուղղեր
Խօսքը, և բաղդիդ զըլին մի զարներ:

ԿՈՐԴԵԼԻՒ

Ո-վ իմ բարի հայր և տէր, գուք եք ինձ
ԿԾնել և սիրել կըրթութիւն արւել
Սոցա փոխարէն շնորհակալ եմ ես.
Հնազանդում եմ ձեզ սիրում և յարգում,
Խնչպէս օրէնքն է: Եթէ յիրաւի
Քոյլերս միայն ձեզ են սիրում, ինչու
Վանուին ունին: Թէ ես մարդի գնամ՝
Չեռքիս զըրաւին հետ նա կըստանայ
Աէսն իմ պարագերիս, սէրիս ու խնամքիս:
Ուստի ես բընաւ, քոյրերիս նըման
Չէի պըսակուիր, եթէ ես հօրը
Միայն սիրելի:

ԼԻՒ

Եւ այդ խօսքերիդ

Համաձայն է սիրուդ:

ԿՈՐԴԵԼԻՒ

Եյն, տէր արքայ:

ԼԻՒ

Եյլպէս մանկամարդ և այդքան դըմնեաց:

ԿՈՐԴԵԼԻՒ

Եյսպէս մանկամարդ, հայր իմ, և պարզսիրտ:

ԼԻՒ

Լաւ, և քեզ օժիտ առ պարզսրտութիւնդ.
Թաղ վրկայ լինին սուրբ լըմն արեւի,
Ենհաս խորհուրդը խաւար գիշերի,
Կ աստղակամարի ազգեցութիւնքը,
Որով գալիս ենք աշխարհ ու զընում—
Եհա ուրանում եմ ամեն խընամք
Սէր ու հայրական պարտականութիւն
Եւ արենական ազգականութիւն,
Եյժմ և յաւիտեան համարում եմ քեզ
Օտար իմ սրբախս, օտար իմ աչքիս:
Բարբարոս Պակիւթն և այն մարգակերն,
Որ որդու մըսով փորն է կըշտացնում՝
Եյնչափ մօա են ինձ և կը վայելեն
Իմ կարեկցութիւնս և օգնութիւնը՝
Որչափ դու, թէպէտ երբեմն իմ զաւակ:

ԱՅՆ

Տէր արքայ . . .

ԼԻՒ

Ելոհիր, Աէնա, մի կանոնիր գու
Վիշապին և իւր կատաղութեան մէջ:
Նէրան ամենքից շատ էի սիրում,
Նէրա խընամքին էի կամենում
Յանձնել ծերութիւնս—(Արքելապին) Հեռացիր աչքից:
Խնչպէս որ ճիշտ է, թէ դադաղիս մէջ
Աը գտնեմ հանգիստ՝ նշնպէս և այս, որ
Ակրցնում եմ քեզնից սիրաը հայրական:—
Ուրէ թագաւորն, ով զընաց ետէն: (Մէ շատրէն ժնու-ճէ):
Բուրզոնին կանչել: (Մէ ս-լին էլ ժնու-ճէ):—Աղմնվալ,
Վլ'բանի,

Երկու դըստրելիս օժիտին վերայ
Առէք այս երրորդ բաժինն էլ: Իսկ նէ
Թող ամուսնանայ այն գոռողութեամբ,
Որին անուանում է ճշշմարտութիւն:
Տալիս եմ համայն իմ իշխանութիւնս
Բոլոր աստիճանն և արդիւնքներով:
Իսկ մենք՝ ուղեկցող հարիւր ասպետով
Միայն, որոց ձեր հաշուով պիտ պահէք՝
Ուզում ենք մի մի ամիս փոխ առ փոխ
Չեզ մօտ ապրիլ: Մեզ պահում ենք միայն
Վնունն ու պատիւ մի թագաւորի,
Իսկ իշխանութիւն, գանձն ու վարչութիւն,
Սիրելք որդիք, ձերը կը լինին.
Եւ առհաւատչեայ՝ ահա այս թագը.
(Առջելք ուստի նահանջութեամբ է նոցա)
Չեր մէջ բաժնեցէք:

ԵՐԵՎԱՆ

Օգոստավիառ. Լիլ

Վիեղ, որ իբր արքայ ևս միշտ պատռւել եմ,
Սիրել՝ իբրև հօր, պաշտել՝ իբրև տէր
Եւ իբր իշխանիս աղօթքումն յիշել...

۱۴۹

Լարուած է աղեղն. Խուսափիր նետից:

412

Թաղղ վերաս թըռչի, թէկւ սրլաքը
Սիրտըս խոցուի էլ: Երբ արքայն խելքը՝
Աէստն էլ թող կորցնէ իւր պատկառանքը:
Եյդ ի՞նչ ես անում դու, այ ծերունի:
Կարծում ես, երբ որ զօրութիւնն ընկծի
Ըողոքորթութեան առջև՝ կը վախնայ
Պարտքը խօսելուց: Երբ անմրասութեան
Մէջ է ընկրղմում իշխանութիւնը՝
Վանրուութեան պարտքն է ճրշմարտութիւն:

Գլուխի՞ր այդ վրձիոդ և մըտածելով
Փոխի՞ր անխոչեմ ու շտապ հըրամանդ:
Թառդ վրկայ լինի կեանքըս՝ որ կըրտսեր
Դուսարբդ քեզ մի մազ պակաս չէ սիրում:
Ենսիրտ չեն նոքա, որոց համեստ ձայնն
Շաշուկ-շառաշուկ թընդիւն չէ հանում:

114

Կըսիր, Կէնտ, կեանքըդ մազեց է կախուած:

Կեանքս ևս միշտ դիտել եմ իբրև գըռաւ
Ծըռնամիներիդ դիմազրաւելու.
Ուստի չեմ վախնար փըրկանք տալ նըրան՝
Երբ քո փըրկութիւնն է իւր առիթը:

三

Հեռացի՞ր աչքից

412

Աւզի՞ղ զիտէ, Լիր,
Եւ թող՝ որ մընամ ես անդլուգուելի
Վչքիրիդ առջեւ:

14

Ապողօն վրկալ . . .

ԱՐԵՎԱՏ

Եպողոն վրկայ, ալքայ, որ դու զուր
Երդում ես անում աստուածներին փրայ:

ל. ל.

Օստան, լստամբակ . . . : (Ձեւուր այն չգլուխ):

ԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

“**Կաղաքեցէք, տէր:**

ԱԼԵՆՑ

Օ՞ն և ըսպաննիր բքժիշկվդ, որով
Նիւանդութիւնիդ հատուցում կանես:
Յետ առ պարզեներդ, կամ թէ ոչ՝ քանի
Շունչ կայ բերանումն՝ ևս չեմ գալարիր
Վեղ յանդիմանել թէ վատ ևս անում:

Լ.Ի.Բ

Լըսիր, ապրստամբ, հըպատակութեանդ
Պարտքով լըսիր ինձ: Որովհետեւ մեզ
Ուխտադրուժ անել կամեցար, (որ մենք
Երբէք եղած չենք) և յանդընեցար
Խափանել վըճիոն մեր իշխանութեան՝
(Որին չեն ներում մեր աստիճանն ու
Ծագաւորութիւնն) —ուրիշն ըստացիր
Վարձատըրութիւնդ մեր տէրութիւնից:—
Հինգ օր քեզ միջոց եմ տալիս՝ գործերդ
Աարգի գընելու. վեցերորդ օրը
Ետելի կրոնակդ մեր երկրին դարձրու:
Եթէ յաջորդող տասներորդ օրը
Դատապարտ մարմինդ մեր տէրութեան մէջ
Դեռ գըտնըրւի՝ այն վերջին վայրկեանդ է:
Աորիր առջեկցո: Երամազդ վըկայ,
Որ այս մեր վըճիոն անդառնալի է:

ԱԼԵՆՑ

Ուրեմն բարեաւ մընաս, տէր. եթէ
Եյսպէս գատեցիր՝ արտասահմանումն
Է աղատութիւնն, իսկ աքսորն այստեղ: (Առեւելեայն)
Մանկամարդ աղջեկ, թող քեզ հետ լինի
Երկնից զօրութիւնն, քեզ՝ որ խորհում ես
Եղնիւ, և խօսքը՝ ճըշմարտութիւն է:
(Հաւելեայն և Առելեայն)

Եսկ ձեր մեծ խօսքերն արդեամբ հաստատուին:
Սիրուն բառերը տան և լաւ գործեր: (Այսանելեայն)

Մնաք բարով և դուք, իշխանք: Եյստեղից
Եքսորուած՝ Անտու գնում է հին սըստով
‘Նոր երկիր: (Գնու-Ճ է):

‘Ելք էն հանու-Ճ Գլուսէր, ԳԱՂՂԻԱՅԻ ԹԱ-
ԳԱԽՈՐԸ, ԲՈՒՐԳՈՆԻ ԴՈՒՔՄԱՆԵՐ:

ԳԼՈՒՍԻՇ

Տէր իմ ահա Գաղղից

Վլքայն և Բուրգոնն:

Լ.Ի.Բ

Իմ պատուելի դուքս,
‘Խախ ձեզ եմ զիմում, որ թագաւորին
Դէմ ախցիան էք մեր զըստրի համար.
Վահք, առ նըւազն ինչ էք պահանջում,
Վմուսնանալու համար նէրա հետ,
Եթէ դուք նէրան զեռ կամենում էք:

ԸՈՒՐԳԱՌԱՄ ԴԱՄԱԲԱՐ

Զերդ մէծութիւն, ևս գոհ եմ նրանով
Կոչ որ միանգամ արդէն վըճուցիք.
Եւ դուք, վըստահ եմ, բան չէք պակսեցներ:

Լ.Ի.Բ

Իմ գերազնիւ դուքս, քանի որ նէրան,
Մէնք սիլում էինք՝ այդ էր նէրա զինն:
Իսկ այսօր ընկաւ նէրա արժանիքն:
Եհա կանգնած է նէ ձեր առջեսում.
Եթէ այդ փոքրիկ խաղալեկին մէջ
Մի բան, կամ նոյն ինքն՝ իմ տաելութեան
Միակ օժիտով — հաճելի է ձեզ
Ետէք, ձերն է նէ:

ԸՈՒՐԳԱՌԱՄ ԴԱՄԱԲԱՐ

Կոչ պատասխանելու
Զեմ զիտեր:

Լ.Բ.Պ.

Սէլան իւր պակասութեամբ
Հանդերձ, որ ունի, մեզ օտարացած,
Մեր ատելութեան միայն որդեպսած,
Լոկ մեր անէծքի օժտով, որին մենք
Երդմամբ ուրացնէք—ուղղում էք առնել
Թէ թողնել:

ԲՈՒԴՎԱՐՆԵՐ ԴԱԼԵՔՄՆ

Տէր իմ, ներեցէք, որ ես
Եյս գէպքում յետ եմ առնում ընտրութիւնս:

Լ.Բ.Պ.

Եւ թողէք. այդ է, յանուն արարչիս
Երդվում եմ, գէլա բոլոր ունեցածն,
Որ ձեզ թըւեցի: (Գաղրիայն Շահաւոյն)
Ձեզ դալով արքայ,
Ելբէք չեմ կարող անարգել ձեր սէրն
Եյն աստիճան՝ որ ձեզ առաջարկեմ
Եմ ատածո. ուստի ձեր սիրտը դարձրէք
Ուրիշն վերայ, որ արժանագին
Լինի, քան թէ այս թըւշուառ արարածն,
Որին բընութիւնն իւրն համարելու
Ամօթ է կըսում:

ԳԵՂԳԻՎՅԻ ԹԵՎԵՆՈՐՆ

Բայց տարօրինակ

Է այս ինձ, թէ սէ, որ վայրկեան մ'յառաջ
Ձեր սիրելագոյնն էր և առարկայ
Ձեր գովասանէքին, ծերութեան նեցուկ,
Երժանագոյնը և լաւագոյնը
Ձեր սրբաի համար՝ մի ակլնթարթում
Ի՞նչ անսերելի յանցանէք գործեց, որ
Հիմնովն իրզեց ձեր սէրն ու շնորհք:
Նէ կամ բընութեան օրէնքների գէմ

Սոսկալի եղեռն պիտ' լինի գործած,
Կամ ձեր նախկին սէրն անարժան կերպով
Գըրաւել էր նէ, որ ես ներանից
Չեմ կարող յուսալ, չենթաղբելով այն
Գործ մէկ հըրաշքի:

ԱՐԴԴԵԼԻՄ (Է-Ե հօն)

Որովհետեւ ես

Չունիմ այն կոկիկ շողաբորժ արուեստն,
Որ աննըպատակ խօսիմ, այլ առանց
Շաղփաղի խօսքերի կատարում եմ այն,
Ինչ որ խորհում եմ՝ երդմնեցուցանում
Եմ ձեզ թագաւոր, որ յայտնէք, թէ ոչ
Յանցանք կամ արատ, աղտեղի գործ կամ
Սնբարժական ընթայքս էր առիթ,
Որ ինձնից վերցրիք ձեր գութն ու խնամք:
Եյլ մի թերութիւն, որով գոհ եմ ես—
Եյս՝ որ ես չունիմ հրապուրիչ հայեացք
Եւ շողոմարար լեզու, որ ինձ շատ
Ուրախացնում է, թէև սորանով
Օըրկվում եմ նոյնպէս և ձեր շընորհքից:

Լ.Բ.Պ.

Լաւ էր, որ բընաւ գու չը ծնէիր,
Քան այդպէս կոպիտ և ինձ անհաճոյ:

ԳԵՂԳԻՎՅԻ ԹԵՎԵՆՈՐՆ

Միայն այս, մի լոկ ամօթխածութիւն,
Որ յաճախ արգելք է լինում ասել
Ինչ որ սրբառմ կայ: Դուք ի՞նչ էք ասում
Օրիորդին, գուքս: Աէրը սէր չէ, երբ
Ճեռը լառնվում են օտար հաշիներ:
Ուղղում էք նէրան. ինքն է իւր օժիտն:

ԲՈՒԴՎԱՐՆԵՐ ԴԱԼԵՔՄՆ (Լ.Ե.Յ.)

Օգոստափառ Լիր, արեք միայն այն՝
Ինչ որ խոստացաք ինքնին, և իսկըն

Առաջելիային ևս կառնեմ ինձ կին,
Երբեք Բուգդոնի զըքսուհի:

11

Baptist

Երդուելի հմ արդէն. Խօսքս անփոփոխ է:

ԲՈՒՐԳՈՒՄԻ ԴԱԼԱԲԱՆ (ԱՐԵՎԵԼԿԱՍՏՈՒՆ)

Յաւում եմ, որ դուք այդպէս կորցնելով
Զեր հօր՝ կորցնում էք ձեր ամուսինն եւ

ԿՈՐՆԵԼԻ

Հանգիստ թող լինի դուքսն. որովհետեւ
Լոկ հաշիւնելին են իւր սէրն՝ ևս նորան
Այս չեմ լինելու:

ԳԵՂԱԿԱՅԻ ԹԵՐԵՄՆՈՒ

Վիրուն - Առլոգելեա,

Եյսպէս աղքատ բայց և այսպէս հարուստ,
Թէպէտել լրքեալ բայց միանդամայն
Պատուական, ատուած՝ սակայն պաշտելի,
Ես տէր եմ լինում քեզ ու քո գանձիդ:
Թռող օրինաւոր լինի վերցընել
Եյն՝ որ ձրգեցին: Ի՞այց այս ի՞նչ զարմանք,
Սասուածներ, նոցա ցուլու արհամարհանքն
Եւելի վառեց բոլըռքեց իմ սէրս:— (Ա. Ելին)
Քո գուստարբդ, որին ժառանիզութիւնից
Զըրկած ընտրութեանս առջև ձրգեցիր—
Իմն է. (Ե-ր վայսամբն) թագուշի սիրուն Պաղու
Խոնաւ Բուրդոնի զըրքսերն չեն կարող
Խըլել ինձանից այս անզին գանձը: (Առբելլայն)
Քընքըշ հըրաժեշտ տուր, Արդգելիա,
Պըժընդակ տոհմիդ. կոլցնելով այս տեղն՝
Ուրիշ լաւագոյն մի տեղ կը գրտնես:

14

Երքայ Գաղղիոյ, դու նէրան առար.
Թող քոնը լինի միշտ. ևս այդպիսի
Դըստրին չեմ ուզում, և չեմ կամենում
Եւ նէրան տեսնել: (Արքելիսայն) Բաղդիդ ընդ առաջ
Գընա, զբակրւած մեր օրհնութիւնից
Սէրից և շնորհքից: Գընանք, ազնիւ դուքս:
(Փողէրէ յացն: Գնում էն)

ՎԵՐԱՎԵՐՅԱ ԹԵՎԳԵՄՈՐՆ (Կոբելիան) Քըլերիդ հրաժեշտ առւր, Կոբելիա:

ԿԱՐԴԱՔԵՐԸ

Դառւք, անզին դանձեր մեր հօլն, թողնում է
Չեղ Արտելիան, աչքն արտասուքով:
Գիտեմ ի՞նչ էք դուք, սակայն իբրև քցը
Դըժուարանում եմ ձեր պակասութիւնքն
Ընունովն ասել: Յարգեցէք մեր հօր.
Յանձնում եմ նրան ձեր գրնահատուած
Արտին. բայ աւաղ, եթէ ինձ սիրէր
Նա ինչպէս յառաջ՝ նորան լաւագոյն
Ես պատըսպարան կը տայի: Նրկուքդ
Եւ միեաք բարով:

ՀԱՅԿԱՆ

Վեպ պարտքը մեղի

Առաջնային հարցեր:

ԳՈՎԱՐ

Խորհիր մանաւանդ,
Վնչպէս զոհ անես ամուսնիդ, որ քեզ
Բաղդին ապաստան մնացածը՝ վերցրեց
Եբը ողջմութիւն։ Պառն օրովհետեւ
Որդիական սէրի մէջ պակասեցար՝
Նրժանի է, որ բաժինքի պակասն
Ել չը պակասի։

ԿՈՐԴԵԼԻՒՆ

Աը գայ ժամանակ,
Աըքացուի, ինչ որ ծածկեց մարդաշաճ
Աեղծաւորութիւնն, և ամօթտապարտ
Աը միայ խարզախն ի վերջոյ: Բարիք
Վամ ձեզ ցանկանում:

ԳԵՂԳԵՑՅԻ ԹԵՎԵՌՈՒՐՅԻ

Գշնանք, Աոլոցելսա:
(Թափառովն և Աոլոցելսա գնում էն):

ԳՈՒՅՆԵՐԻՆ՝

Քոյլիկ, քեզ կարեսոր խօսքեր ունիմ ասելու այնպիսի
մի գործի մասին, որ մեզ երկուքիս էլ է վերաբերում: Աար-
ծում եմ, թէ մեր հայրն այս երեկոյ կերթայ այս տեղեց:

ՀՈՎԳԵՆՅԻ

Եյո, և քո մօտ կը գայ: Հետեւեալ ամիս կվերագառնայ
մեր մօտ:

ԳՈՒՅՆԵՐԻՆ՝

Տեսնում ես, որչափ կամակոր է նա այժմ, ծերութեան-
ժամանակ: Սորա մի գեղեցիկ օրինակն հէնց նոր տեսանք:
Նա միշտ ամենքից աւելի մեր կրտսեր քոյլին էր սիրում:
և յանկարծ ինչ գատարկ պատճառով դուրս արաւ նէրան:
Նորա այս պակասամիտ ընթացքն աչքի շատ է զարնում:

ՀՈՎԳԵՆՅԻ

Յանցանքը ծերութեանն է: Բայց նա միշտ էլ իւր ա-
րածը չէ դիտցել:

ԳՈՒՅՆԵՐԻՆ՝

Իւր ամենալաւ և առողջ արիներումն էլ նա ինքնի-
ւան զսպել չէր կարող: Ուրեմն մենք պէտք է տանինք ոչ մի-
այն նորա մէջ խոր արմատացած թերութիւններն, այլ և այ-

2481.52

քմահաճ զայրացկոտութիւնը, որ գոլիս է մաղձոտ և հե-
ւանդոտ ծերութեան հետ:

ՀՈՎԳԵՆՅԻ

Երեւում է, որ մենք էլ շատ անգամ պիտի ենթար-
կուինք նորա փոփոխամոռութեան, ինչպէս է Աէնաի արտաք-
սումը:

ԳՈՒՅՆԵՐԻՆ՝

Նա գեռ զբաղած է Գաղղիայի թագաւորին ձանա-
պարհ ձգելով: Խնդրում եմ քեզ միասին գործենք. եթէ մեր
հայրն այդ զայրացկոտութիւնը մեր վերայ էլ գործ դնէ՝ նո-
րա այժմեան առատաձեռնութիւնը մեզ համար նախատինքի
աղքիւր կլինի:

ՀՈՎԳԵՆՅԻ

Սորա վերայ գեռ կմտածենք:

ԳՈՒՅՆԵՐԻՆ՝

Պէտք է վճռական մի բան անել և մանաւանդ՝ երկա-
թը գեռ տաք տաք՝ ծեծել: (Գնում էն):
(ԷՒՍՈՒՆԴ նէլս է ճանաւ, մի նամակ յեւունունը)

Բընութիւն¹⁾, դուն ևս իմ աստուածն, միայն
Վեզ ևմ հնազանդում: Խնչու խոնարհիմ
Փուծ սովորութեան և ներեմ անմիտ
Գասաւորութեան, որ ժառանգութիւն
Կըլեն, վասրն զի տապը, տասներկու

1) Բնութիւն բառին տակ հզմունդ զմբոնումէ ոչ թէ մի աստուածացին գոյու-
թիւն, այլ լոկ մի հակացացութիւն՝ հակառակ ընդհանուր սովորութեան և կիանքի
պայմաններին: Նա ուզում է ասել թէ որովհետեւ քաղաքային պայմաններից դուրս է
ծնել պէտք է որ հնազանդի բնութեան օրէնքներին, որոնք ոչ ինչ տարբերութիւն
չնա գնում կամ այն պայմաններում ծնուածներին մէջ Ստիվենս:—Եզմունդ դի-
մումէ բնութեան, ինչպէս իւր աստուածին՝ այն խորհրդով՝ որ ասօրինի ծնունդնե-
րին կըչումնն էils naturel, (բնական կամ բնութեան որդի): Նա՝ որ բնութեան օրէն-
քով իւրի գործութեան գործութեան որդին է nullins filius (ոչ ուրուք որդի): Աէսոն:



Լուսնեակ եղբօրիցս յառաջ ծընայ ես:
 Խը ապօրինի և ինչո՞ւ ըստոր,
 Երբ մարմնիս կազմուածքն ամուր է նոյնպէս
 Եւ հոգիս աղնիւ, նոյնչափ բարեձեւ
 Ու աղատ է դէմքս, ինչպէս մի պարկեշտ
 Տիկինի որդուն: Խնչո՞ւ կրնքում ին
 Մեղ ապօրինի, անարդ բառելով:
 Յած, ապօրինի՛: Մե՛նք, որ բընութեան
 Կայտառ անչանքում աւելի եռանդ
 Եւ ուժեղ կազմուածք ըստացանք, քան թէ
 Չանձրացած, թրմրած առագաստի մէջ
 Կոյութիւն առնող մի խումբ յիմարներ,
 Որ ծընողների կէս մի քընին մէջ
 Են շինվում և կէս մարդուն ժամանակ:
 Օ՛ն ուրեմն, Էգկար, օրինական ծնունդ,
 Քո երկիրներիդ ես տէր կը դառնամ:
 Ապօրէն Էպմունդն օրինականին
 Չափ մեր հօր սէրին իրաւունք ունի:
 Օրինակա՞ն, ահ, ի՞նչ կոկիկ բառ է:
 Իմ օրինական պարոն, քեզ տեսնեմ.
 Այս նամակն եթէ ներգործէ՝ դիտումն
 Յառաջ թէ երթայ՝ ապօրէն Էպմունդն
 Օրինականին կը խախտէ տեղեց:
 Ես կը մեծանում, ես բաղդ կը զբանեմ...
 Ապօրէնին հետ եղեք, աստուածներ:

(Նէր և ճառագութ ԳԼՈՒՏԵՐ):

ԳԼՈՒՏԵՐ (առանցին).

Աէնար արտաքսուած այսպէս. Պաղպից
 Երբայն վըշտացած. թագաւորը զնաց.
 Իւր իշխանութիւնն ամբողջ բաժանուած:
 Եւ այս ամենը մի վայրկեանի մէջ:
 (Նէրագութ և Էպմունդին):
 Էպմունդ, ի՞նչ նոր լուր ունիս:
 Ժամ չէ անցնում, որ անվայել դործով

ԼՌՄՈՒՆԴ (նամակն առանցին)՝
 Ոչինչ նորութիւն չգիտեմ, տէր:
 ԳԼՈՒՏԵՐ
 Խնչո՞ւ այդպէս շտապով պահում ես այդ նամակն:
 ԼՌՄՈՒՆԴ
 Ոչինչ նորութիւն չգիտեմ, տէր,
 ԳԼՈՒՏԵՐ
 Խո՞չ թուղթ էր այդ, որ կարգում էիր:
 ԼՌՄՈՒՆԴ
 Ոչինչ, տէր:
 ԳԼՈՒՏԵՐ

Ոչինչ: Հապա ինչո՞ւ այնպէս սարսափած և շտապով
 զրպանդ դնել փութացիր: Ոչինչը պէտք չունի, որ այդպէս
 պահուի: Տուր տեսնեմ: Եթէ ոչինչ է ախոց հարկաւոր չի
 լինիր:

ԼՌՄՈՒՆԴ
 “Երեցէք ինձ, տէր. Եղբօրիցս մի նամակ է, որ դեռ ամ
 բողջ չեմ կարգացել. բայց որչափ հասկացայ՝ ձեզ կարգալու
 համար զրուած չէ:

ԳԼՈՒՏԵՐ
 “Նամակը տուր, ասում եմ:

ԼՌՄՈՒՆԴ
 Թէ տամ, թէ չտամ՝ անիրաւութիւն արած կլինիմ:
 Կարգացածիցս որչափ կարողացայ հասկանալ՝ պարսաւելի
 բան է:

ԳԼՈՒՏԵՐ (նամակն առանցին նորանից).
 Տուր, տեսնեմ, տուր:

ԵԳՄՈՒՆԻ

Խրլւ արդարացում եղբօրս՝ յոյս ունիմ թէ այս զրել
է իմ աղնուութիւնս փորձելու համար միայն:

ԳԼՈՒՍՏԵՐ (Էտքում է).

«Եյս կարգն, այս պատիւն, որ տալիս ենք ծերութեան՝
«թունաւորում են մեր կեանքի ամենալաւ օրեկն: Մեր բաղը
«դը խլում է ձեռքերիցս մինչև այն ժամանակն, որ մենք
«ծերանալով այլ ևս չկարողանանք նորանով ուրախանալ:
«Ես տեսնում եմ, որ յիմարական և պարզամիտ սորկու-
«թիւն է մեր հպատակութիւնը ծեր բռնաւորին առջեւ, որ
«տիրում է մեր վերայ ոչ այն պատճառով, որ զօրութիւն
«ունի, այլ վասն զի մենք տանում ենք նորան: Խնձ մօտ եկ,
«որ այս մասին ընդարձակ խօսիմ: Եթէ հայրս կամենար քը-
«նիլ մինչև այն ժամանակ, որ ևս նրան արթնցնէի՝ դու յա-
«ւիտեան տէր կը լինէիր նորա եկամուտների կէսին և սիրե-
«լի քո եղբօր, Եղդարին»: Փահ, զաւադրութիւն: «Քնիլ,
«մնչ ևս նրան արթնցնէի»: «Տէր իշխէնք եկամուտների կէսին»: —
«Եմ որդիւ, Եղդարը: Եւ նս կարողացաւ ձեռքը բարձրա-
ցնել այս տողելքը զբելու, և նս սիրտ ունեցաւ այս բանը խոր-
չելու: — Երբ ստացար այս նամակն, ովք բերեց:

ԵԳՄՈՒՆԻ

«Նամակն ինձ ոչ զբերեց. սենեակումս գտայ այն. պա-
տուհանից է ներս ձգուած:

ԳԼՈՒՍՏԵՐ

Պիտե՞ս, որ սա եղբօրդ ձեռքն է:

ԵԳՄՈՒՆԻ

Եթէ բովանդակութիւնը լաւ լինէր՝ կերդուէի, որ իւր
դրութիւնն է. բայց քսնի որ այսպիսի բովանդակութիւն ու-
նի՝ շատ ցանկանում եմ կարծել թէ նորանը չէ:

ԳԼՈՒՍՏԵՐ

Սա նորան դրութիւնն է:

ԵԳՄՈՒՆԻ

«Նորանն է, տէր: Բայց ևս վստահ եմ, թէ նորա սիրան
համաձայն չէ այս դրուածին:

ԳԼՈՒՍՏԵՐ

Յառաջ երբէք քեզ հետ խօսք չէ բացել նա այս մասին:

ԵԳՄՈՒՆԻ

Ոչ երբէք, տէր: Միայն, յաճախ լսել եմ նորանից, թէ
Երբ հայրերը ծերանալ են սկսում և որդիներն հասունանալ՝
յաւ է, որ հայրը որդու խնամքին յանձնէ իրան և ստա-
ցուածքին կառավարութիւնը:

ԳԼՈՒՍՏԵՐ

Եյ անպիտան, անպիտան. նոյն իմաստն է և նամա-
կին մջ: Ապիրատ, չարագործ որգի, զարշելի՝, վայրենի՛ գա-
զան և աւելի վատ քան վայրենի զաղաններն: — (Օպաւային)՝
Պնա նրան փնտուիր. ևս կամենում եմ նրան բանգել: Պար-
շելի՝ տղայ. ուր է նա:

ԵԳՄՈՒՆԻ

Ուղեղը չեմ գիտեր, տէր: Եթէ հաճէիք ձեր զայրոյթն
գէպի եղբայրս առժամանակ ծածկել, մինչև նորա դիտաւո-
րութիւնն աւելի ստուգէիք՝ աւելի ապահով կլինէիք դուք.՝
վասն զի եթէ նորա դէմ բռնութիւն գործ գնեք և յետոյ
իմանաք, թէ այս բոլորը մի պարզ սխալմունք է՝ ձեր պա-
տուին վերայ արատ կդայ և ձեր որդու հնաղանդութեան կը
տաք վերջին հարուածը: Ես կեանքս պատրաստ եմ զրա-
գնելու, թէ սորանով եղբայրս կամեցել է միայն փորձել իւր
հաւատարմութիւնս դէպի ձեզ առանց որ և է չար գիտա-
ռութեան:

ԳԼՈՒՍՏԵՐ

Կարծում ես այգպէս:

ԵՒՄՈՒՆԻ

Եթէ յարմար դատէք՝ ձեզ այնպիսի տեղ կտանիմ, որ
կարողանաք ձեր ականջով լսել այս մասին իմ խօսակցու-
թիւնս եղօրս հետ և անձամբ տեղեկանաք: Հենց այս գի-
շեր պէտք է այս անել:

ԳԼՈՍՏԵՐ

Աս չէ կարող այսպիսի հրէշլինել:

ԵՒՄՈՒՆԻ

Կնտարակցս ոչ:

ԳԼՈՍՏԵՐ

Եւր հօր գէմ, որ նրան անչափ և գորովագին սիրում
է:—Երկինք և երկիր:—Եղմունդ, դակիր նրան, յայտնի արա
ինձ նորա խորհուրդը խնդրում եմ քեզ: Պործիր ինչպէս
ազդում է խոհեմութիւնդ: Բոլոր կարողութիւնս տալու
պատրաստ եմ, այս գործը ճշտիւ իմանալու համար:

ԵՒՄՈՒՆԻ

Ես կդնամ նրան վնտուելու: Ի՞անն այնպէս կշինեմ, ինչ-
պէս որ յարմար դայ, և ամեն ինչ ձեզ կ'իմացնեմ:

ԳԼՈՍՏԵՐ

Երեի և լուսնի վերջի խաւարումները ոչինչ բարի բան
չն գուշակում: Թակէտ բնական օրէնքների գիտութիւնը
կարող է նոցա այս կամ այն մեխութիւնը տալ՝ սակայն սո-
րանով նոցա հարուածները բնութեան վերայից չեն վերա-
նար: Վէրը ցամաքած. բարեկամութիւնը պաղած. եղբայր
եղբօր գէմ է ենում: Քաղաքներում խոռվութիւն, դիւղե-
րում երկպառակութիւն. պալաներում դաւ. հօր ու որդու
մլջ եղած կապը խզվում է: Իմ անաստուած որդուս վերայ
այս գուշակութիւնները կատարուեցան. սա—որդին է հօր
գէմ ելած: Թագաւորն օրէնքից դուրս է ենում սա—հայրն
է որդուն դէմ: Վէր լաւ օրէրն անցան զնացին: «Նենդու-
թիւն, խարդախութիւն, դաւ և ամենակործան կարգադրու-

թիւններ հանապազ մեզ հալածում են մինչեւ գերեզմանի
դուռն:—Եղմունդ, այն թշուառականին պիտի գտնե՛ս: Քեզ
վնաս չի հասնիր: Ճանք մի՛ խնայեր:—Նզնիւ, բարեհոգի Աէնտն
էլ արտաքսուած: Նորա յանցանքն է արդարամտութիւն:—
Առսկալի՛ է սոսկալի՛:

(Պահուած է):

ԵՒՄՈՒՆԻ

Եյս ամենն աշխարհի պարտադիր յիմարութիւններն
են: Վէր բաղդն հէնց որ ծուռ է բունում—որ յաձախ պա-
տահում է մեր վարքի վատութիւնից—սկսում ենք մեր գըժ-
քաղդութեան մեղքը բարդել արեին, լուսնին, աստղերին վե-
րայ, որպէս թէ մենք ապիրատ ենք լինում հարկաւորապէս.
յիմար՝ երկնքի հրամանով. ստահակի, գող և գաւաճան ենք
լինում երկնագունդների զօրութեամբ. հարթեցող, խաբերայ
և պղծագործ՝ մոլորակների անդիմաղրելի աղղեցութեամբ. և
վերջապէս ի՞նչ չարիք էլ որ գործենք՝ բոլորն աստուածային
ակնարկութեամբ են: Բողարածի մի զարմանալի հնարք՝ իւր
անառակութիւններն աստղերին վերայ բարդելու: Հայրս մօրս
հետ պառկեցաւ վիշապի պոչին տակ և ես մեծ արջին տակ
աշխարհ եկայ—սորանից հետեւում է, թէ ես կոշտ ու վա-
ւաշ եմ: Հրամե՛լ էք: Ես նոյնը կլինէի, եթէ տիեզերքի ա-
մենակցս աստղն էլ շողոված լինէր ապօրինի յղութեանս
անկողնին վերայ: Եղգարը...:

(ԷՂԳԱՐ նէր և նդուած):

(Առանցին): Եւ յանկարծ նա այստեղ ինչպէս մի հին
կատակերգութեան վախճանը: Իմ գերս պիտի լինի յաւսահատ
մելամաղձութիւն և հառաջանք, Բէղլ'ամցի Տոմին պէս:—
(Բարձր): Ո՞հ, այդ խաւարումներն երկպառակութիւններ են
գուշակում: Փա, սօլ', լ'ա, մի¹):

2) Ըեկապիր գիտմամբ է գրեւ այստեղ ձայների այս տարօրինակ յաջորդութիւնը:
Նրաժշտութեան վերայ գրող արեղաներն ասում են «mi contra fa est diabolus»:
(մի՛ ֆ աշի հանդէպ՝ սատանայ է): Եղմունդ ընկնելով նոյն հոգեկան դրութեան մէջ
ինչպէս հայրն, որ խօսում էր ամեն տեսակ խառնակութիւնների մասին՝ նոցա համե-
մատումէ այս ձայների աններդաշնակութեան հետ:— Կամ թէ, այս տարօրինակ յա-
ջորդութիւն ունեցող ձայները նորա հոգեկան գրութեան արտայացառութիւններն են:

ԵՐԳԱՅԻ

Ե՞նչպէս ես, Եղմունդ եղբայր, ի՞նչ խոր մտածմունքների մէջ ես ընկղմել:

ԵՐԳԱՅԻՆԴԻ

Եղբայր, մտածում եմ այն գուշակութիւններին վերայ, որ մի քանի օր յառաջ կարդացի այս նոր խաւարումների մասին:

ԵՐԳԱՅԻ

Ե՞նչ լսւ բանով ես զբաղուած:

ԵՐԳԱՅԻՆԴԻ

Հաւատացնում եմ քեզ ինչ որ այնտեղ զբուած են գժբաղաբար բոլորը կատարվում են. օրինակ, անբնական կրուիւներ որդիների և ծնողների մէջ, ժանտախտ, սով, հին բարեկամութիւնների քակտում, պետութեան մէջ երկառակութիւն, սպառնալիք և չարամաղթութիւն թագաւորի և իշխանների դէմ, անշիմն կասկածոտութիւն, բարեկամների արտաքսում, զօրքերի ցրվում, պսակի քակտում. . . որ մէին ասեմ:

ԵՐԳԱՅԻ

Պաղմոց է որ աստեղազիտութեան աշակերտել ես:

ԵՐԳԱՅԻՆԴԻ

Դու ինձ ասա. . . հօրս երբ ես տեսել վերջին անդամէ

ԵՐԳԱՅԻ

Երեկ երեկոյ:

ԵՐԳԱՅԻՆԴԻ

Հետոր խօսեցա՞ր:

ԵՐԳԱՅԻ

Եյո, ամբողջ երկու ժամ:

ԵՐԳԱՅԻՆԴԻ

Սիրով բաժնուեցաք միմեանցից: Կողա խօսակցութեան մէջ կամ երեսին վերայ ոչինչ գժգոհութիւն չնկատեցի՞ր:

ԵՐԳԱՅԻ

Վահնելին:

ԵՐԳԱՅԻՆԴԻ

Լաւ միտքդ բեր, ի՞նչ կերպով նրան վերաւորել ես, և քեզ ինզրում եմ, աչքին մի երեխի առժամանակ, մինչև նորա բարկութիւնն իջնէ. այժմ այնպէս զայրացած է, որ մաշովդ հազեւ թէ դոհ լինի:

ԵՐԳԱՅԻ

Թշուառականին մէկը վերաս բամբասած կլինի:

ԵՐԳԱՅԻՆԴԻ

Ես ել հէնց այդ եմ կասկածում: Խոնդրում եմ քեզ որ նորանից հեռու մնաս, մինչև զայրոյթն հովանայ, և, սիլելի եղբայր, գնանք իմ բնակարանս. ես քեզ այնտեղ կօնեմ, որ հօրս խօսակցութիւնն ինքնին լսես: Խոնդրում եմ, գնա. ահա բանալին. երբ դուրս գալու լինիս՝ զինաւորուած ել:

ԵՐԳԱՅԻ

Օխնաւորուած, եղբայր:

ԵՐԳԱՅԻՆԴԻ

Քեզ բարի խորհուրդ եմ տալիս, եղբայր: Եյո, զինաւորուած: Եթէ քեզ զէմ չար զիտաւորութիւններ չկան՝ ես մարդ չեմ: Կեչ որ քեզ պատմեցի՝ իմ տեսածիս ու լսածիս համեմատութեամբ իխստ անհշան է և շատ հեռու իսկական սարսափելի տեսարանից: Եղաջում եմ, գնա:

ԵՐԳԱՅԻ

Եյո հանելուկը շնուր կը բացատրես:

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Եյս ամենին մէջ ես քեզ կօգնեմ: (Պահուած է Երբեմ):
 Բարեմիտ է հայրս. եղբայրս՝ ազնիւ,
 Եւ այնչափ բարի, որ մըտքիցն երբէք
 Կասկած չէ անցել: Դիւրին կը լինի
 Իմ խաղս այս յիմար ազնըլութեան հետ:
 Տեսնում եմ ելքը:—Եթէ ոչ ծընունվո՞
 Գէթ խարէութիւնս կը տայ ինձ երկիր:
 Ինչ որ ինձ օգնէ՝ այն է իմ աւարս: (Պահուած է):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Մի սենեակ Ալ'բանի դքսի պալատում:
 Գինէրին՝ և ԱՍՎԱՐԴ ներս են մտնում:

ԳՐԱՎԵՐԻՆ՝

Յիւաւի՞ հայրս զարկեց սենեկապետիս այն պատճառով,
 որ սա նորա խեղիատակին նախատել է:

ԱՍՎԱՐԴ

Եյս, տիկին:

ԳՐԱՎԵՐԻՆ՝

Գիշեր ու ցերեկ տանջում է նա ինձ:
 Ժամ չէ անցնում, որ անվայել գործով
 Չը վրօդովէ մեզ: Չեմ կալող տանել:
 Շըռայլացել են նորա ասպետներն,
 Իսկ ինքը մեղ դէմ քրոթմընջում է միշտ
 Ոչինչ բանի վրայ:—Երբ որսից դառնայ,
 Մօռը չեմ զընար. Հիւանդ է, ասէք:

Լաւ կանէք՝ թէ դուք նախկին ձեր փոյթը
 Քը լուցնէք: Ես եմ պատասխանատուն:

ԱՍՎԱՐԴ

Գալիս է, տիկին, լըսում եմ ձայնը:
 (Որո՞ւ կողէ ներ երևեց)

ԳՐԱՎԵՐԻՆ՝

Յոյց տուէք նեղացած ձեզ ինչպէս գիտէք,
 Նոյնն և միւսները: Աշխ թէ խօսք բացուիր:
 Այստեղ չէ հաւատում քոյրիս թող երթայ.
 Լաւագյոնն այնտեղ չէ զատներ, գիտեմ:
 Եյս կէտում քոյրս էլ ինձ պէս է մտածում,
 Եւ խորհրդիս պէտք չունի: Օառամեալ
 Ռուր, որ ուզում է իշխել թէպէտ զուրկ
 Իշխանութիւնից: Յիւաւի, զառմած
 Յիմարներն, ասես, տըզայ են դառնում:
 Պէտք է նոյց սաստ, յանդիմանութիւն
 Փաղաքշանքի տեղ երբ յանցանք դորձեն:
 Ինչ որ սասացի չըմոռանաք:

ԱՍՎԱՐԴ

Ոչ:

ԳՐԱՎԵՐԻՆ՝

Կապետներին պազ երես ցոյց արւէք:
 Սորանից ինչ էլ պատահէ՞ հոգ չէ:
 Նոյնը պատուիլէք ընկերներիդ ևս:
 Եյս առիթ կառնեմ հետք խօսելու,
 Որ ուզում էի: Ճէնց այժմ իմ քոյրիս
 Նամակ կը զրեմ, որ նոյն ուզզութեամբ
 Պարուի: Ճողացէք ճաշը պատրաստել:
 (Պահուած էն):

ԶՈՐՅՈՒՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Մի դահլիճ նոյն պալատում: Ալիք ներս է մտնում ծպտեալ:

ԱԼՅԱՏ (Օպպանին նայելով)

Եթէ յաջողիմ խօսակցութեանս ձեն
Ու ձայնը փոխել՝ կարող կը լինիմ
Համնիլ նախազրեալ իմ նըպատակիս,
Որի համար իսկ դէմքը ծրպտեցի:
Եյժմ, արտաքսուած Աէնտ, երբ կարողանաս
Օպառայել այնտեղ, ուր գատապարտ ես
Կը աեսէր քո տէրդ, որին դու սըրտանց
Սիրում ես՝ թէ քեզ շատ գործ կայ այստեղ:
(Ուսէ ժողով. Իիր, ԱՍՊԵՏՆԵՐՆ
և ԾՔԱԽՈՒՄԲԸ նէր չն հնառա՞մ):

ԱԼՅ

Մի վայրկեան ձաշը չուշացուի: Ասացէք շուտով պատ-
րաստեն: (Շամինից մէր ժնուածէ: Ալէնովին):
Ե, դու ի՞նչ մարդ ես:

ԱԼՅԱՏ

Մի մարդ եմ, տէր:

ԱԼՅ

Ի՞նչ բան դիտես: Մեզանից ի՞նչ ես ուզում:

ԱԼՅԱՏ

Դիտեմ երեել այնպէս՝ ինչպէս որ եմ. հաւատարմու-
թեամբ ծառայել նորան, որ վերաս վստահում է, սիրել նրան,
որ աղքամ է. յարաբերութիւն ունենալ նորան հետ, որ խե-
լացի և սակաւախօս է. դատաստաններից վախնալ կուռիլ
այնտեղ, ուր չկայ ուրիշ հնար. ամենեին ձուկ չուտել¹⁾):

¹⁾ Եղիսաբեթ թագուհու ժամանակ պապականներն իրաւամբ համարվում էին կառավարութեան թշնամիներ. իսկ ձուկ ուսելը համարվում էր նշան պապականու-
թեան. սորանից առաջ եղաւ՝ թէ «նա մի ազնիւ մարդ է և ձուկ չէ ուտում», այսինքն՝
նա տէրութեան բարեկամ է և բողքական:

ԱԼՅ

Ո՞վ ես դուն:

ԱԼՅԱՏ

Շատ աղնիւ և բարեմիտ մէկը և թագաւորին չափ
աղքատ:

ԱԼՅ

Եթէ դու, իբրև հպատակ, նոյնչափ աղքատ ես, որչափ
նա, իբրև թագաւոր՝ ճիշտ որ բաւական աղքատ ես: Ի՞նչ ես
ուզում:

ԱԼՅԱՏ

Մի ծառայութիւն:

ԱԼՅ

Ո՞ւմ ես ուզում ծառայել:

ԱԼՅԱՏ

Զեղ:

ԱԼՅ

Ճանաչնեմ ես դուն ինձ, բարեկամ:

ԱԼՅԱՏ

Ոչ բայց կայ ձեր կերպարանքին մէջ մի բան, որին ես
սիրով Տէր կկոչէի:

ԱԼՅ

Ի՞նչ է այդ:

ԱԼՅԱՏ

Մեծութիւն:

ԱԼՅ

Ի՞նչ ծառայութիւններ կարող ես անել:

— 31 —

ԱԼՅՈՑ

Ղաւ կարող եմ գաղանիք պահել ձի հեծնել արագ վազել մի հատաքրքրական վէպ կիսկատար պատմել և պարզ պատուիրներ կատարել զիտցածիս պէս: Խչ բանի որ պէտք են զալիս մարդիկ՝ ես այն կարող եմ անել: Ղաւագօն յատկութիւնս է փութաջանութիւն:

ԼԻԲ

Քանի տարեկան ես:

ԱԼՅՈՑ

Եյնչափ փոքր չեմ, որ մի աղջկի երկը լսելով նէրան սիրահարուիմ, և ոչ էլ այնչափ ծեր, որ առանց ոչ մի բանի հետը կապուիմ: Քառասուն և ութը ծալել եմ:

ԼԻԲ

Պօստ եղիս և ինձ ծառայիր: Եթէ ճաշից յետոյ էլ դու ինձ այսպէս հաճելի երեխս՝ էլ դիւրաւ չնիք բաժանուիր: (Ըստամբէնն). Եյ, ճաշ: Ուր է ծաղրածուս, խեղկատակս: (Ըստամբէնն Աբին): Գնա խեղկատակս կանչիր. (Պատուան):

ՈՍՎԱՐԴ ներ է մրնուած:

Եյ, բարեկամ, դուստրս ուր է:

ՈՍՎԱՐԴ

Ներեցէք ինձ, որ...

(Պատուան):

ԼԻԲ

Ի՞նչ մոմուում դա: Յետ կանչեցէք այդ ախմարին: (Ու անի աստղիք բնուած էն):

Խեղկատակս նուր է: Գնել եք դուք, ի՞նչ է: (Ըստեաբ ժամանակ): Եյ, այն ախմարն նուր մնաց:

ԱՍՊԻՏ

Ասում է, թէ ձեր դուստրն առողջ չէ:

ԼԻԲ

Ի՞նչու այն կողիտը յետ չդարձաւ, երբ ես կանչեցի:

ԱՍՊԻՏ

Տէր, նա բացէ իբաց ասաց, թէ չէ կամենում:

ԼԻԲ

Թէ կամենում:

ԱՍՊԻՏ

Տէր, չգիտեմ պատճառն ի՞նչ է. բայց ինձ երեսում է, թէ Զեր Մեծութիւն այժմ այն արժանաւոր պատիւն ու սէրը չեն ցոյց տալիս, ինչ որ յառաջ ես նկատում եմ, որ քաղաքաբարութիւնից շատ պակասել են թէ սպասաւորները, թէ դուքն և թէ Զեր դուստրը:

ԼԻԲ

Հը. կարծում ես դու:

ԱՍՊԻՏ

Եղանակում էր Զեր, ներեցէք ինձ, եթէ սխալուցայ սակայն ծառայական պարտաւորութիւնն ստիպում է ինձ խօսիլ երբ Զեր Մեծութիւնն արհամարհուած եմ տեսնում:

ԼԻԲ

Պու յիշեցնում ես ինձ իմ սեփական հասկացածս միայն: Մի քանի ժամանակից ի վեր մի շատ պաղ անհոգութիւնն եմ նկատել, որ ես աւելի վերազրում էի իմ կասկածութիւն, քան թէ յայտնի զիտումների և չար մտքի: Յետոյ այդ լաւ կտեսնենք: Բայց խեղկատակս նուր է: Երկու օր է նրան չեմ տեսել:

ԱՍՊԻՏ

Ելու տէր, մեր կրտսեր տիրութու Պաղեա գնալուցն ի վեր Զեր խեղկատակս շատ տիսուր է:

ԼԻԲ

Ու ասեր այդ, ես էլ լաւ եմ նկատել: Գնացէք դստրիս

ասացէք, թէ ուզում եմ հետը խօսիլ: (Ըստմբէց մէլը գնում
է): Իսկ դուք խեղկատակիս կանչեցէք: (Մէ առվեն էլ գնում է):
ՈՍՎԱՐԴ նորէց գալիս է:
Համարոն, մօտ եկէք: Ո՞վ եմ ես, բարեկամ:

ՈՍՎԱՐԴ

Տիրուհուս հայրը:

ԼԵՒ

Տիրուհուտ հայրը: Իսկ դուք տէրիդ գերին, շան ծննւնդ,
շնուն, ստրուկ:

ՈՍՎԱՐԴ

Ես ոչ մէկն եմ, ոչ միւսն և ոչ երրորդը: Անդողութիւն
արէք:

ԼԵՒ

Համարձակում ես իսկ այդպէս երեսս նայելու, լիւրք:
(Օտպնում է):

ՈՍՎԱՐԴ

Ես չեմ ներում, որ ինձ զարնէք, տէր:

ԿԵՇՆԾ

Ոչ էլ քիթդ ջարդել այնպէս չէ, զնտակ խաղող
թշուառական:

(Եսրա սորեւից բանում գետին է յժում):

ԼԵՒ

Ընորհակալ եմ, բարեկամ: Դու գործիդ հմուտ ես, ես
քեզ կալիմ:

ԿԵՇՆԾ

Դէ, անկուիր ու չքուիր: Ես քեզ քաղաքավարութիւն
կսովեցնեմ: Դուրս կորիր: Եթէ ուզում ես, որ բոյբդ-բօսը
նորից չափեմ սպասիր: Զքուիր, ասում եմ: ապնուշ ես, ինչ
ես: Դուրս:

(Բանացիներով նրան բոյբ է ճղում):

ԼԵՒ

Եմ բարի՛ ծառաս. շնորհակալ եմ: Ահա ծառայութեանդ
գրաւականը:
(Փառէ առաջ կէնդին):
ԽԵՂԱՍԱԿԸ ճղում է:

ԽԵՂԱՍԱԿԸ (ԼԵՒ)

Թող եւ էլ զրաւական տամ: (Կէնդին). Գլխանոցս առ,
աշա:

(Գլխանոցը առաջարկում է կէնդին):

ԼԵՒ

Եէ՛, բարով, իմ չարաճիս, ինչպէս ես:

ԽԵՂԱՍԱԿԸ (Կէնդին)

Լոկր, բարեկամ, լաւ կանես, որ զլիանոցս առնես:

ԿԵՇՆԾ

Խեղն համար, Խեղկատակ:

ԽԵՂԱՍԱԿԸ

Խեղու համար: Վասնզի դու պաշտպանում ես երեսից
ձգուածներին: Եթէ դու չես կարող ժպտիլ այն կողմն, ուս-
կից վշումէ քամին՝ շուտով հարբուխ կլինիս. ուրեմն զլիա-
նոցս առ: Զէս տեսնում, այս մարդն իւր երկու աղջեկներին
արտաքսեց և երրորդին օրջնեց իւր կամքին հակառակ: Ու-
րեմն եթէ մօտը մնալ ես ուզում՝ անպատճառ պէտք է որ
իմ զլիանոցս գնես:— (ԼԵՒ) Դեռի ջան, եթէ ես երկու աղ-
ջեկ և երկու զլիանոց ունենայի՛:

ԼԵՒ

Խեղն համար, տղաս:

ԽԵՂԱՍԱԿԸ

Եթէ բոլոր ունեցածս աղջեկներիս բաժանէի՛ գոնէ եր-
կու զլիանոցներս ինձ կպահէի: Ահա իմս, միւսն էլ աղջեկ-
ներիցդ մուլս:

ԼԻՒ
ԵՇ, փայտը մոռացէլ ես, բարեկամ:

ԽԵՂԿԱԾՆԻ

Ճշմարտութիւնը մի գամբուէ, որ չնանոցում պիտի կենայ, և որին փայտերով հալածում են. մինչդեռ քած աղջիկ շունը փառաւորապէս չնթուիում է կրակարանին առջև:

ԼԻՒ

Ի՞նձ են ակնարկում այդ կծու խօսքերը:

ԽԵՂԿԱԾՆԻ (ԱԷՆԹԻ)

Բարեկամ, ուղղում ես քեզ առածներ դաս տամ:

ԼԻՒ

Սպա:

ԽԵՂԿԱԾՆԻ

Լսիր ուրեմն, քեռի ջան.

Վիշ ցոյց տուր, շատ ունեցիր

Գիտցածը՝ բոլոր գուրս մի տար.

Քըսակը՝ բոլոր փոխ մի տար:

Վիշ քալիր, շատ ձի հեծիր:

Եւելի քըննիր, շատ մի հաւատար.

Երբ խաղի նըստար՝ խաղից մի վախնար:

Ենառակ կընոջ ետե մի ընկնիր.

Բաժակը՝ նետիր և տանը նըստիր:

Գըլիէ զլուխ վաստակ կանես այս կերպով.

Եւ երբ ծերնաս՝ հաց չես մուրար տոպլակով:

ԼԻՒ

ԵՇ ոչինչ է, յիմար:

ԽԵՂԿԱԾՆԻ

Ինչպէս անոռծիկ փաստաբանի խօսքերը: ԶԵՇ որ դուն
էլ ինձ ոչինչ չտուիր: Վիռի, կարող ես ոչինչ մի բան շինել:

ԼԻՒ

Ե հարկէ, տղաս, ոչ Ոչնչից ոչինչ է ենում:

ԽԵՂԿԱԾՆԻ (ԱԷՆԹԻ)

Սաս նորան, ինպրեմ, որ իւր երկիրներն ես այսքան եկամուտ են բերում: Նա խեղկատակին չէ հաւատում:

ԼԻՒ

ԶԵՇ յիմար ես:

ԽԵՂԿԱԾՆԻ

Գիտես, տղաս, ինչ տարբերութիւն կայ չար յիմարին
և բարի յիմարին մէջ:

ԼԻՒ

ԶԵՇ, տղաս, սովորեցրու:

ԽԵՂԿԱԾՆԻ

Ով որ խորհուրդ տըւեց քեզ
Որ երկիրներդ բաժանես՝

Եյն պարոնին բեր այստեղ.

Կամ գուն անցիր նորա տեղ.

Եւ քեզ իսկըն կերեին

Ուէ չար յիմարն թէ բարին:

(Երան ցոյց առալ) Զալն ահա այստեղ

(Լեռն ցոյց առալ) Իսկ բարին այդտեղ:

ԼԻՒ

Ի՞նձ էլ յիմար ես կոչում, խեղկատակ:

ԽԵՂԿԱԾՆԻ

Միւս բոլոր տիտղոսներդ, որ ճննդիցդ ի վեր ունէիր՝
սորան նորան բաժանեցիր:

ԱԼՅԱՏ (ԱԷՐԻ)

ԵՇ բոլորովին յիմար խօսք չէ, տեր:

ԽԵՂԿԱԾԱԿ

Յիրաւի, աշխարհիս իշխաններն ու տէրերն յիմարութեան մէջ էլ չեն ուզում վար մնալ: Եթէ ևս արուեստաս մէտաքանառութիւն դարձնէի՝ նոքա կկամէնային մի մի մաս նախառածառ մանաւանդ տիկիններն. նէրանք միայն ինձ չէին թողստանալ, մանաւանդ տիկիններն. նէրանք միայն ինձ չէին թողստանալ, անպատճառ մի լաւ կտոր կալէին: Ո՞հ ներ յիմարութիւնս. անպատճառ մի լաւ կտոր կալէին: Ո՞հ նու տուր ինձ, քեռի ջան, ևս քեզ երկու թագ տամ:

Լ.Ի.Բ

Կ՞նչ թագեր են այդ:

ԽԵՂԿԱԾԱԿ

Կ՞նչ պիտի լինին.—երբ ձուն մշջաեղից կոտրեմ, միջուկն ուտեմ երկու ձուաթագները քեզ կֆնան: Երբ դու թագդ մէջտեղից Ճեղքեցիր և երկու կտորն էլ աջ և ձախ բաժանեցիր՝ նոյնն է, թէ էշդ շարկեցիր, ցեխից հանեցիր: Եշ եղ բայր, քո կնդագլուխ թագիդ մէջ խելք շատ քիչ մնաց, երբ բայր, քո կնդագլուխ թագիդ մէջ խելք շատ քիչ մնաց, ոսկի թագդ վար առար: Եթէ ևս այս յիմարաբար խօսեցայ՝ ոսկի թագդ վար առար: Եթէ ևս այս յիմարաբար խօսեցայ՝ ոսկի թագդ վար առար:

(Եղին-է է)

Եյժմ յիմարների գործն է զըժուար,
Երբ իմաստուններն էլ դառնում են յիմար:
Խեղձերը կորցրուել են իրանց խելք.
Բոլոր նոցա գործերն են անխելք:

Լ.Ի.Բ

Ո՞ր ժամանակից այդքան երգեր սովորել ես դու, բարեկամ:

ԽԵՂԿԱԾԱԿ

Եյն ժամանակից, երբ դուն աղջեկներդ քեզ մայր դարձրիլ: Պասն զի երբ դու ձաղկիչը նէրանց ձեռքը տուիր և վարտիքդ վար քաշեցիր՝

“Նէրանք լացին խընդութիւնից.
Ես երգեցի տըխութիւնից,
Թակ թաղաւորս տըղայացաւ,
Յիմարների կարգն անցաւ:

Խնդրում եմ քեռի, մի վարժապետ վարձիր, որ խեղատակիդ սուտ խօսիլ սովորեցնէ: Արտանց ուզում եմ սուտ խօսիլ սովորիլ:

Լ.Ի.Բ

Եթէ սուտ խօսիս, այ չար, ծեծ կուտես:

ԽԵՂԿԱԾԱԿ

Օարմանում եմ, թէ ի՞նչպէս դուն և աղջեկներդ այդքան մօտ ազգականներ էք: “Նէրանք ինձ ծեծ են սպառնում, երբ Ճշմարիտ խօսիմ: Դուն՝ երբ սուտ խօսիմ: Երբեմն էլ ծեծ եմ ուտում: Երբ բոլորովին չեմ խօսում: Խեղկատակութիւնս ինձ ձանձրացրել է. ամեն ինչ կլինեի. բայց դու լինել չեմ ուզում: Դու խելք երկու կտոր արիր, մէջտեղը ոչինչ ըլթողիր:—Եյն, կտորներից մէկն եկաւ:

(ԳՈՆԵՐԻԼ’ ՆԵՐ Է ՀՐԱՄ-Ը):

Լ.Ի.Բ

Կ՞նչ է աղջեկս. Ճակատդ ինչո՞ւ ևս կտպել: Տեսնում եմ, որ մի քանի ժամանակից հետէ Ճակատդ ամպոտել է:

ԽԵՂԿԱԾԱԿ (Լ.Ի.Բ)

Եյն ժամանակն աւելի լաւ չէր, քեռի, երբ նէրա երեսին վերայ երբէք չէիր հոգ անում: Եյս օրս ևս քեղանից լաւ եմ ևս գոնէ մէկ յիմար եմ: իսկ դո՞ւ—ոչինչ ևս, առանց թուանշանի զրոյ:—(Գոներլին) Եյն, այն կլռեմ, վասն զի ձեր դէմքն այս հրամացում է, թէպէտ դուք ոչինչ չէք սում:

Հացին միջուկը կեր, կեղեր պահիր.
Կեղեր կերար՝ միջուկը պահիր: (Լ.Ի.Բ Սայա գալու)
Վհա սիսեռի մի դարդակ կծեպ:

*

ԳՈՒԵՐԻԼ՝ (Լ.ԵՒՅ)

Ոչ միայն ձեր այս լրբացած յիմարն.
Եյլ ձեր վայրենի խըմբիցն էլ ոմանք
Ըմեն որ կըուիւ, արբոտունիջ են անում
Եւ անտանելի շըռայլութիւններ:
Կարծում էի ես, թէ սոցա ճարն է
Չեղ ամենն յայնել բայց կասկածում եմ—
Լըսելով, թէ հէնց նոր ի՞նչ խօսեցաք
Եւ արիք՝ որ սա ձեզ հակառակ չէ:
Թէ այսպէս անում էք՝ խիստ պատիժներ
Ու խըստութիւններն էլ շուտ մէջ կըդան,
Որոց բարերար ներգործութիւնը
Չեղ կը նեղացնէ անպատճառ սակայն
Եյս է պահանջում խոհմութիւնը:

ԽԵՂԱԿԱՆ

Եյժմ հասկանում ես, քիոի:
Երտուար սյնչափ կըկուին պահեց.
Որ կըկուն նորա զըլուիր խածեց:
Ճրագն երբ մարդ տալիս է՝ մութ տեղն է մնում¹⁾:

Լ.Ի.Ր (Գ.Ա.Խ.Ե.Յ.Յ.)

Դուք մեր դժւաստըն էք:

ԳՈՒԵՐԻԼ՝

Բաւական է, տէր, տւելի առողջ մոտածեցէք և թողէք
այդ տարօրինակութիւնները, որ ձեղ բոլորովին ուրիշ մարդ
են դարձել:

1) Քարմք և Սոհիվեն կարծում են, թէ սա մի կտոր պետք է լինի չին երգի։
Ույն լցու հետեւան է ասում այս մասին. Շեկապիր իւր խեղկատակներին վեցնում
էր կեանքից, նորա օրինակած խեղկատակների նախատիպներն անտարակոյս զուարթ
էր կեանքից, նորա օրինակած խեղկատակների նախատիպներն անտարակոյս զուարթ
և զուարթախօս մարդ իկ էին։ Թէկ թոյլ տրուած էր նոցա խօսիլ ինչ որ մոքերիցն
անցնի սակայն անձնական թշնամիքներից խոյս տալու համար՝ նորա իրանց առածին
հանաքի ձև պէտք է տային, աչա այս պատճառովէ, որ այս կամ այն կծու խօսքը մեղա-
հանաքի ձև պէտք է տային, աչա այս պատճառովէ, որ այս կամ այն կծու խօսքը մեղա-
հանաքի նորա շատապումէրն փարատել նորա ազգեցութիւնն երգելով մի հին-
երդ, կամ մի առաջ առելով— ինչ որ նախ մաքերին գաք: Ուրիշ կերպով չէ կարելի
կացարել այն անկապ խօսակցութիւնները, որ յաճախ տեսնվում են Շեկապիրի խեղ-
կատակներին մէջ:

ԽԵՂԱԿԱՆ

Ո՞վ լինի, որ չնշարէ, երբ կառքն է որ ձիուն քաշում
է: Դէ, հօ, գործերս յաջող է:

Լ.Ի.Ր

Խնձ Ճանաչող կայ: Ոչ սա Լիրը չէ.
Եյսպէս է խօսում Լիր, այսպէս զընում:
Եչքերն ուրտեղ են: Կամ խելքն է թրուել
նորա կամ միտքը քընիլ: Երթնւն եմ
Ես թէ քընած: Ո՞վ կարող է ասել
Ո՞վ եմ ես:

ԽԵՂԱԿԱՆ

Լ.Ի.Ր ըստուերն:

Լ.Ի.Ր

Եյդ ճիշտ է.
Բայց արքայական նրշաններս, միտքըս
Եւ յիշողութիւնս խաբում են ինձ, թէ
Ես դըստրեր ունիմ:

ԽԵՂԱԿԱՆ

Եւ թէ զու ներանց
Վանախոնարհ հայրն ես:

Լ.Ի.Ր

Զեր անունն

Ի՞նչ է գեղեցիկ ախիին:

ԳՈՒԵՐԻԼ՝

Եյդ զարմանքն
Ճամաձայն է ձեր միւս կատակներին:
Խօսեցէք ինձ հետ, ինչպէս որ հարկն է:
Դուք պատկառելի ծեր հասակ ունիք.
Ունցէք ըստ այնմ և արժանի խելք:

Դուք այստեղ հարիւր ասպետ էք պահում—
Ըոլուր լրկտի խոռվարար մարդեր,
Որ գինետուն են շինել մեր ամրոցն
Եւ ապերասան ծայրայեղ վարքով
Դարձրել են սա հասարակաց տուն—
Եյս իշխանական մեր համեստ պալատն:
Սոցա անհրաժեշտ մի գարման է պէտք:
Տաղյլ տըւէք ուրեմն խընդիրել ձեզանից—
Եթէ չք ուզում, որ ես բըռնութեամբ
Նոյնն անել տամ—որ ձեր շըքախումբը
Փոքր ինչ պակսեցնէք: Իսկ մընացածներն՝
Որ ձեր հրամանի ներքեւ կը լինին՝
Զեղ հասակակից մարդեր ընտրեցէք,
Որ ձեզ և իրանց ամօթ չը բերեն:

Լ.Ի.Պ.

Դրժուսք, արշաւելքք: Զիերս թամբել:
Ըսպասաւորներս կանչել: Պարշելի՛
Օլնունդ, քեզ այլ ևս նեղութիւն չեմ տար.
Մի դուստր էլ ունիմ ես:

ԳԱՅՆԵՐԻՆ՝

Դուք ծեծում էք

Եմ ծառաներիս, և ձեր ըստահակ
Խումբը դարձել է իմ զըլիս իշխան:
(ԱՐԲԱՆԻ ներ և ճանաւ):

Լ.Ի.Պ. (առանձին)

Վայ նորան, որ շատ ուշ է զրդջանում:— (Ա. Հանին)
Ե՛հ, դուք էլ եկաք, պարոն: Եյս ամենն
Զեր խորհրդո՞մն է. խօսեցէք, պարոն:— (Ի. Շատանեցին)
Պատրաստել ձիերն:— Կպերախտութիւն,
Դե մարմարէսիրտ, երբոր մըտնում ես
Դու մի որդու մէջ աւելի ժանա ես
Քան ծովի հրեշն:

Ա.Ի.Բ.Ն.Ի.

Հանգըստացէք, տէր:

Լ.Ի.Պ. (Գ. Ա. Հ. Ե. Ա. Ա.)

Եշ դարշելի անդղ դու սուտ ես ասում:
Էնտրեալ և աղեիւ են իմ ասպետներս,
Սըրբութեամբ իրանց պարաքն են կատարում
Եւ իրանց անուան պատիւն պահում են,
Մեծ ինամբով:— Ո՛հ ինձ որչափ ծանր եկար,
Կորդելիսյի թեթև սրիսալմունք,
Որ ամբողջ բնութիւնս իբրև մի դելոց
Վեր ու վար արիր, իմ բոլոր սէրլու
Սըրտիցս հանեցիր և մաղձով լրցիր
Եյն: Ո՛վ Լի՛ր, Լի՛ր, Լի՛ր: (Գ. Ա. Հ. Ե. Ա. Ա.):
Բաղիսիր այժմ այս դուռն

Ուսկից դուրս թողեր խելքդ, ու ներս առար
Յիմարութիւն: Օ՛հ, դընանք, ընկերներ:

Ա.Ի.Բ.Ն.Ի.

Ես յանցանք ըունիմ, տէր չը գիտեմ իսկ
Թէ ձեր բարկութեան ի՞նչ է պատճառը:

Լ.Ի.Պ.

Կարելի է, տէր:— Լըսիր ինձ, բնութիւն,
Լըսի՛ր ինձ, բարի Կստուած, լըսիր ինձ:
Թէ վըճռել էիր, որ այս արարածն
Որդի ունենայ՝ փոխի՛ր վըճիորդ:
Զիդ ըստերջութիւն որովայնին մէջ,
Չորացրու սէրա ծընընդարաններն.
Սէրա պիղծ մարմնից երբէք պարձանէքի
Որդի չը ծնի՛: Իսկ թէ յըղանայ՝
Ճեծութեան որդի տուր, նորա կեանքը
Սոսկալի տանջանք թող լինի սէրան:
Նա մանկութիւնից իսկ խորշոմ ձրգէ
Սէրա ճակատին, արտասուաց վըտակ

Հոսեցնել տալով՝ սէրա այտերում
Հեղեղատ բանայ: Թաղնա մայրական
Ծոլը սէրն ու գութ արհամարհանքի
Եւ զեղնութեան նիւթ շինէ, որ ապա
Հասկանայ սէ, թէ որչափ աւելի
Դառնակը իծ է ապերախտ զաւակ
Ունենալն, քան թէ օձի ատամը:
Դընանք, զընանք: (Պատմ-է):

ԱԼԻՎԵՒՄ

ՈՂ կարող աստուածներ,
Ի՞նչ եղաւ սորա պատճառը:

ԳՈՒԵՐԻՒՄ

Չոգալ այս մասին, թող զառամեալ ծելն
Դոռայ ինքնիրան, որչափ կամենայ:

ԼԻՒ (իլին ներ մանելու):

Ի՞նչ, ասպետներից յիսունը մէկէ՞ն,
Տասնըորս օրում:

ԱԼԻՎԵՒՄ

Ի՞նչ է եղել տէր:

ԼԻՒ

Սաեմ քեզ:—(Պատմչելն) Ո՞ւհ ու կեանք: Ամաջում եմ
Ես, որ արութիւնս դրոգուեցնելու չափ
Օօրութիւն ունիս, որ կամքիս ընդգէմ
Եզքերիցս վազող այս դառն արտասուքն
Վէկ համար լինի: Փանտախտը վերադ:
Ո՞ւկ հօր անէծքի անբոյժ վէրքերը
Թափանցեն քո ուզզո ու ծուծդ և բոլոր
Պղպայութիւններդ:—Իիւրամոք ծերի
Եզքեր, մէկ էլ լաք՝ ես ձեղ կը փորեմ
Ի՞ արտասուքներովդ հանդերձ կը նհտեմ

Գետին, կակղացնել նորա կոշտութիւնն:
Ե՞զ, մինչեւ այս տեղ հասայ: Ե՞, ոչի՞նչ.
Մի գուստը էլ ունիմ ես, գըթոտ, բարի—
Եյս զիտեմ—երբ նէ լրսէ արածներդ՝
Շանկերով զայլի դէմքըդ կը պատոէ:
Ես քեզ կերւիմ այն իշխանութեամբ,
Որից, կարծում ես, ընդ միշտ զըրկուել եմ:
Կը տեսնես, սորա մասին վըստահ եմ:
(Լիք, Ախոր և շատիս-մբը դուրս են ելու-է):

ԳՈՒԵՐԻՒՄ

Դուք էլ լըսեցի՞ք, տէր:

ԱԼԻՎԵՒՄ

Ծոլը սիրովս,
Հանդերձ, Պանէրիլ, կողմնապահ լինել
Զեմ կարող...:

ԳՈՒԵՐԻՒՄ

Հերիք, լըսիր:—Լի, Ոսկալ'գ:
(Խեղիաբանին):

Դուք, գատարկապորտ քան թէ խեղկատակ,
Տէրիդ ետեից դուրս հըրամեցէք:

ԽԵՂԿԱՏԱԿ

Վենիւ Լիր, քեռիւ Լիր, կաց, խեղկատակիւ էլ հետդ
տար:

Բըռնըւած մի աղուէս
Ու մի աղջիկ սէրա պէս

Մէկէն ի մէկ ես կը խեղջէի,
Պըլսանոցովս թէ մի պարան զընէի:—

Խեղկատակն ահա ձեղ թողնում է վերջապէս:
(Պատմ-է):

ԳՈՒԵՐԻՒՄ

Ես կարզը զըտել էր: Հարիւր ասպետ:
Լաւ խելք չէր լինի, թէ հարիւր ասպետ
Եներէի նորան պահել, որ խելքին

Մի բան վըշելիս, մի թեթև խօսքի,
Մի ցնորդի համար՝ ամենաննըշան
Գանգատի մառթով՝ նոցա զօրութեամբ
Կամքը կատարէր և մեր խկ կեանքին
Վշտանդ ըսպանար:— Ոսվալդ, լըսում ես:

ԱԼ'ՅԱՆԻ

Անտեղի կասկած է այդ:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Չափաղանց

Վշտահութիւնից լաւագյն է այս:
Վան թէ շարունակ աշի մէջ լինինք՝
Լաւ չը վրտանգի առջեր փակենք:
Նորա ի՞նչ լինեն ես վաղուց գիտեմ:
Ինչ որ նա այսուղ բարբանջեց՝ բոլոր
Քյորիս գըրեցի: Խսկ թէ ամեն բան
Վշտելուց յետոյ քյորըս կամենայ
Ելքան և խումբը պահել...

(ՈՍՎԱԼԴ ՆԵՐ Է ՖԻՇԵՆ-Տ):
Ե՛, Ոսվալդ,

Պատրահատ է նամակը քյորիս համար:

ՈՍՎԱԼԴ

Եյ՛, տիրուշի:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Եռ մի քանի մարդ

Եւ շուտ ձի հեծիլ: Քյորիս կը պատմես
Բոլոր մեր փախը: Դուն էլ քեզանից
Պէտք եղածները աւելցրու, ներան
Մինչեւ համոզես: Դէ՛, շուտ ձանապարհ:
Դարձիդ ըշտապիր: (ՈՍՎԱԼԴ ՓԻՇԵՆ-Տ է: ԱԼ'ՅԱՆԻՆ)

Ո՛չ, իմ ամուսին.

Զեր խաղաղասէր բարքն, — որի համար
Զեղ պախարակիլ չեմ ուզում — այնտեղ
Ե՛ համում, որ ձեղ պախաւել է հարի,

Երբեւ անխոհեմ մարդ, քան թէ գովիլ
Զեր հեղութիւնը:

ԱԼ'ՅԱՆԻ

Որչափ հեռատես

Եք դուք՝ չեմ գիտեր: Բայց լաւագյնը
Փընտելիս՝ յածախ լաւն էլ ենք կորցնում:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Ի՞նչ, ուրիշնի...

ԱԼ'ՅԱՆԻ

Լաւ, լաւ, դործը ցցց կը տայ: (ՊԻՇԵՆ-Տ ԷՆ):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԱԼ'ՅԱՆԻԻ պալատում մի բակ:

Լիր, կինք և խեղիսակ ներս են մտնում:

ԼԻՐ (ԽԵՂԻՍԱԿ)

Եռ այս նամակն և փութա ՊԼ'ՈՍՈՒԵՐ¹): Եյստեղ պատահածներից ոչինչ մի պատմեր, բացի այն՝ ինչ որ քեզ հալցնէ նէ այս նամակին զօրութեամբ: Եթէ չշտապիս և քեզանից յառաջ կանցնիմ:

ԿՈՎԾ

Մինչեւ այս նամակը տեղ չհասցնեմ, աէր, չեմ պառկիր: (ՊԻՇԵՆ-Տ է):

ԽԵՂԻՍԱԿ

Եթէ մարդի ուղեղը կրնկին մէջ լինէր՝ չը ցրտահարիր:

1) ՊԼ'ՈՍՈՒԵՐ Կորնվալի մայրաքաղաքն էր: Կէնա այնտեղ համալուց յետոյ, ինչպէս պատմումէ (Բ. արարուած, Դ. անսարան), հրաման ընդունեց հետեւիլ նորնվալին և հռեգանին, որոնք ՊԼ'ՈՍՈՒԵՐ կոմիտ ամրոցը գնացին. այս ամրոցը հաւանաբար հետո չէր ՊԼ'ՈՍՈՒԵՐ քաղաքից: — Մէլոն:

Լ.Բ.Բ.

Ի հարկէ, տղաս:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

ԵՇՀ, դու միսիթարուիր. քո ուղեղդ կրնկներիդ մէջ դործ
չունի:

Լ.Բ.Բ.

Հա՛, Հա՛, Հա՛:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Ծուտով կտեսնես. միւս աղջիկդ էլ քեզ նոյն սիրով
չընդունիր. վասն զի թէպէտ նէ այնչափ նմանում է սէրան,
որչափ թթու խնձորը արքայախնձորին՝ բայց ևս գիտեմ, ինչ
որ գիտեմ:

Լ.Բ.Բ.

Ի՞նչ գիտես դու, տղաս:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Եյս՝ որ նէրանց համին մէջ այնքան տարբերութիւն կայ,
որչափ մի վայրի խնձորի և մի վայրի խնձորի մէջ։ Գիտէս,
ինչու համար մարդի քիթն երեսին մէջ տեղն է։

Լ.Բ.Բ.

Զեմ գիտեր:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Որպէս զի նորա երկու կողմն էլ մարդ մի մի աչք ու-
նենայ, և երբ մի բանի հոտն առնել չկարողանայ՝ աչքերով
տեսնե՞:

Լ.Բ.Բ. (Ապահնչին)

Ես նէրա դէմ անիրաւ գտնուեցայ¹⁾:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Գիտէս, թէ ոստրէն ի՞նչպէս է իւր պատեանը շինում:

Լ.Բ.Բ.

Զեմ գիտեր:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Ես էլ չեմ զիտեր. բայց գիտեմ թէ ինչու խղունջը
տուն է շինում:

Լ.Բ.Բ.

Ինչու:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Ինչու. որպէս զի իւր գլուխն այն տեղ գնէ և ոչ թէ
իւր աղջիկներին տայ և իւր եղջերիկները բացը թողնէ:

Լ.Բ.Բ. (Հապահնենեկ Թէ)

Իմ բնութիւնս կմոռանամ:—Մի այնպիսի բարի հայր:—
Չիերը պատրամստ են:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Եշերդ նոցա ետեն են զնացել:—Մի աննման զաղտնիք
է, թէ ինչու եօթն աստղերը եօթն հատ են միայն և ոչ ա-
ւելի:

Լ.Բ.Բ.

Եորա համար չէ, որ ութ հատ չեն:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Հէնց այդ է: Գու լաւ խեղկատակ կլինիս:

1) Լիր այստեղ Կորդելիային է յիշում, ինչպէս կարծում են մեկնէնելը:

ԼԻՐ (ԱՐԱԿԱՆՅԻՆ)

Ոյժով յիշտ առնել¹⁾): Ուղ գաղանային ապերախտութիւն:

ԽԵՂԿԱԾԱԿ

Եթէ դուն իմ խեղկատակս լինեիր, քեռի, քեզ մի լաւ գծեծէի, որ ժամանակից յառաջ ևս ծերացել

ԼԻՐ

Խոչպէս որ:

ԽԵՂԿԱԾԱԿ

Վանի որ իմաստնացած չէիր՝ պիտի չծերանայիր:

ԼԻՐ

Համբերութիւն տուր ինձ, զթած երկնք, մի թողներ, որ խելքս կորցնեմ: Չեմ ուղում խելազարիւ:
(Սի ԱՄՊԵՏ ներ է ճանա-ճ):

Խոչ, պատրամստ են ձիերն:

ԱՄՊԵՏ

Եյո, թագաւոր:

ԼԻՐ (ԽԵՂԿԱԾԱԿԻՆ)

Գընանք, իմ արդաս:

ԽԵՂԿԱԾԱԿ

Որ գեռերս կօյս՝ և իմ վերաս ծիծաղի՝
‘Աէ երկար կօյս չի մնար.—գեռ աւելի շուտ էլ կպատահի²⁾:
(Պանա-ճ Է):

¹⁾ Այլ և այլ կարծիքներ կան մեկնիչներին մէջ թէ Աիր բ'նչ էր կամմում ոյ-ժով յիտ առնել ոմանք ասում են թէ թագաւորական իշխանութիւնը միւսները՝ թէ թագաւորութեան կէսը, որ Գոնէրիւին տուեց. իսկ ոմանք էլ թէ այն պայման-ներն, որ Աիր իւր մասին հաստ առեց, թագաւորութիւնը բաժնելիս, և որոնցից նրան զրկեց Գոնէրիւ:

²⁾ Սահմէնս կարծում է, թէ այս երկու տողը Շեկսպիրինը չեն, այլ թերեւս մի գերասանի ձեռքով աւելցուած են թատրոնական ձեռագրին մէջ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Գլուխէրի դքսի ամրոցում մի բակ:

Էդմոնդի և Կոմիլի ներս են մտնում տարբեր կողմերից:

ԵԴՄՈՆԴ

Բարեւ, Կուրան

ԿՈՄԻԼ

Բարեւ ձեզ, տէր: Ճէնց նոր ձեր հօր մօտ էի. նորան յայնեցի որ Կորնվալի դուքսն և Ճոկան դքսուհին զի-շերս ձեզ պիտի այցելեն:

ԵԴՄՈՆԴ

Խոչ դիպուածով:

ԿՈՄԻԼ

Ես էլ չդիտեմ: Վերջի լրերն ի հարկէ լսած էք. խօսքն այն լրերին վերայ է, որ գեռ փափսալով են խօսում և մի-մեանց ականջին:

ԵԴՄՈՆԴ

Ոչինչ չդիտեմ: Պատմիր ինձ, խնդրեմ:

ԿՈՄԻԼ

Չէք լսել որ հաւանաբար Կորնվալի և Ելքանի դլք-սերին մէջ պատերազմ պիտի բացուի:

ԵԴՄՈՆԴ

Վանելին ոչ:

ԿՈՒՐԵՆ

ԽՇՀ, շուտով կլսէք. մնաք բարով պարոն: (Պհանձ է):

ԼՐԱՄՈՒՆԴ

Կորնվալ՝ սյս զիշեր մեղ մօտ: Ո՛, շատ լաւ:
 Վործիս մէջ մըանում է ինքն յաջողուածն:
 Հրամայել է հայրս արդէն՝ Եղգարին
 Կալանաւորել: Ինձ մընում է արդ
 Բաւական զըժուար մի խաղ էլ խաղալ:
 Բաղդ, արագութիւն, օգնեցէք դուք ինձ: (Պառավ-ճ է):
 Եղգար, այ եղբայր. եկ մի խօսք ունիմ:

(ԷՂԳԱՐ ներ է ճանաճ):

Վեղ փընտուում է հայրս: Փախիր այստեղեց,
 Թաղ կացած տեղըդ յայտնիլ են նորան:
 Վիշերն օգնական առքեզ:—Լաւ խորհիր,
 Աորնվալ՝ դըքսի դէմ դու բան չես խօսած:
 Նա ձուեցանի հետ այստեղ կը լինի
 Վիշերս: Լաւ խորհիր. Ելքանիի դէմ
 Նորա դիտումներն մարդի չես պատմել:

ԼՐԱՎԵՐ

Եւ ոչ իսկ մի բառ, հաւատացէք ինձ:—

ԼՐԱՄՈՒՆԴ

Լըսում եմ, դալիս է հայրս:—Ներիր ինձ,
 Վործը կեղծելու համար՝ ես սրբով
 Եռջելոդ կանդնել հարկադրուած եմ:
 Հանի՞ր սուրդ. կեղծիր, թէ պաշտանվում ես:
 (Որդին հանուճ էն, պարնպաճ էն):

Լաւ, դէ՛ շուտ փախիր: (Բարձ) Յանձնըւի՞ր, եղբայր,
 Եկ հօրըս առջեն: Արակ բերէք այստեղ: (Յաժ) Լաւ, երթաս
 Փախիր: (Բարձ) Եռւտ ջաշե՞ր: (Յաժ) Լաւ, երթաս
 բարով: (Երժառ ժենճ է):
 Առթիւ մի արխւն՝ և բաւական է

Յոյց տալ թէ որչափ սաստիկ կըռուեցայ:

(ՁԵւ-+ը վերա-սրա-ճ է):

Հարբածներ տեսել եմ, որ սրանից վատն

Երել են՝ միայն զուարձութեան համար: (Բարձ):

Հայր իմ, հայր, կանգնիր:—Օգնութիւն չը կայ:

(ԳԼՈՍՏԵՐ և ՃԱՌԱՆԵՐ ջահեցով ներ են ճանաճ):

ԳԼՈՍՏԵՐ

Ուր է չարագործն, Եղմունդ:

ԼՐԱՄՈՒՆԴ

Մերկ սուրը

Չեռքում կանգնած էր նա այս մութ տեղում:

Մոգական խօսքեր արտասանելով

Երգմնեցուցանում էր լուսինն՝ իրան

Փըրկելու համար:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց ուր է նա:

ԼՐԱՄՈՒՆԴ

Տէր,

Աիրաւորուած եմ:

ԳԼՈՍՏԵՐ

Եղմունդ, ուր գընաց

Եյդ չարագործը:

ԼՐԱՄՈՒՆԴ

Նա փախաւ այս կողմն:—¹⁾

Երբ կարող չեղաւ . . .

1) Ես կարծում եմ, թէ Եղմունդ ցոյց է տալիս հօրը ոչ այն կողմն, ուսկից փախաւ Եղգար, այլ հակառակ կողմը, որպէս զի ծառաները նրան բռնել չկարողանան: Հակառակ դէպքում, այսինքն եթէ Եղգար իսկցին եռնուելու կարող կլինէր իսր անմեղութիւնն ապացուցանել և Եղմունդի խարդախութիւնը կնշաւակուէր: Եղմունդի այս ջանքն, որ Եղգար փախւի՞ երկում է նաև սորանից, որ նա աշխատում է, անդադար խօսքեր մէջ ձգելով՝ առ ժամանակ արդելլ հօրն, որ ծառաներին հրամայէ Եղգարին բռնել:

ԳԼՈՒԽԵՐ

ՇԱՄԱՊՈՎ ԿԱԿԻՇ:

ԸՆԴՀԱՅԻՔ: (ՕԱՍՏԱՆԵՐԸ ՃՆԱ-ԾԸՆ): Ե, Ի՞նչ երբ կարող
ՀԵՂԱՎ...

ԵՒՄՈՒՆԻ

Ինձ համոզել որ ձեղ ըսպաննէի,
Երբ ևս ասացի, թէ վրեժիլնդիր
Սատուածներն իրանց բոլոր շանթերը
Հայրասպանին վրայ կը տեղան, և թէ
Քանի՛ սըրբազան կապերով որդին
Կապուած է հօր հետ, մի խօսքով, տէր իմ,
Երբ տեսաւ, թէ ևս որշափ սաստկութեամբ
Հակառակում եմ իւր չար խորհրդին՝
Սրով կատաղբար վերաս նետուեցաւ.
Եւ ես՝ չը հանած գեռ սուրս՝ վերք առայ:
Իսյց երբ նրկատեց, որ ողի ստացայ
Եւ արդարութեամբ զինուած գէմն ելայ՝
Կամ գուցէ նշյնպէս իմ աղաղակից
Վախնալով փախաւ:

ԳԼՈՒԽԵՐ

ԹԱՊՂ ՓԱԽԵԾԻ, ՈՐԾԱՓ

Ուզում է. այստեղ չէ կարող պահուիլ.
Եւ երբ բըռնըւի—ամեն ինչ պըրծաւ:
Սյս երեկոյիս մեր աղնիւ դուքսը
Տէրն և իշխանը մեղ մօտ պիտի դայ:
Նորա անունով կը հրատարակեմ
Թէ չարագործն ով մատնէ՝ կըստանայ
Ընորհակալութիւն. իսկ ով պահէ՝ մահ:

ԵՒՄՈՒՆԻ

Երբ, նրկատելով, թէ չէ կամենում
Ըսկել յորդորներս, ևս ըսպանացի
Եւր դաւը յայտնել՝ «ապօրէ՛ն, անտուն

«ՕՐԻՆՈՒՆԴ», գուեց ինձ, «երբ ևս սուտ խօսիմ,
Կարծում ևս թէ քո առաքինութիւնդ,
Ուղղամըսութիւնդ և արժանիքներդ
Ինձի կը յաղթին: Ո՛չ պարզ ուրացմամբ,—
(Եւ ևս կուրանամ, գու գընա նամակն
Սպացոյց բըռնիր)՝ ևս քեզ դաւածան,
Խարդախ, խաբերայ կը հանեմ: Վշխարհու
Յիմար կը լինի, որ չը հասկանայ,
Թէ քո՝ իմ մահից ունեցած շահը
Միայն զօրաւոր առիթն է, որ քեզ
Վյապէս դըրդից իմ մահիս աշխատիլ:

ԳԼՈՒԽԵՐ

Սյ գու խրստասիրտ, յամառ չարագործ,
Ուզում է նաև նամակն ուրանալ:
‘Նա ինձ որդի չէ: (Փողէրէ ճայն). Դըքսի փողե՛րը:
Զեմ զիտեր, ինչո՞ւ մեզ մօտ է գալիս:—
‘Նաւահանդիսաներն կը գոցիմ և ուր
Պիտի փախչէ նա: Պէտք է այս մասին
Դուքսն համաձայնի: ‘Նորա պատկերը
Կյուզարկեմ ամեն կողմ, որ ձանաշուի:
Իսկ քեզ ձըշմարիտ և օրինաւոր
Որդիս, ջանք կանեմ բոլոր ըստացուածքս
Ժառանգեցնելու:

(ԳՈՐՆՎԱՐ, ՀՈԵԳԱՆ և ԾՔԱԽՈՒՄԲ ՆԵՐԸ Են ճանաչում):

ԳՈՐՆՎԱՐ

Սյս ի՞նչ է, աղնիւ.

Բարեկամ, հազիւ ոտք դըրի այստեղ՝
Եւ ահա ինչպէ՞ս լըրեր եմ լըսում:

ՀՈԵԳԱՆ

Որ եթէ ձիշա են՝ որեէ պատիժ
Յանցաւորին քիչ է:—Ի՞նչպէս էք, կոմա:

ԳԼՈՒԽԵՐ

Սյ, խորտակուած է սիրտս, խորտակուած,
Տիկին:

ՀՈՅԳԵՆԻ

Խ՞նչ հօրըս սանիկն ձեր կեանքին
Դաւէ, նա, որին հայրս անուն դըրեց,
Չեր որդի՛ն, Եղդար:

ՎԼՈՍՏԵՐ

Տիկին, ամօթովս
Ուզում եմ ծածկել:

ՀՈՅԳԵՆԻ

Տեսնըվում չէր նա
Հօրըս շըքաղիր այն ապերասան
Ասպետներին հետ:

ՎԼՈՍՏԵՐ

Զը գիտեմ, տիկին . . .

Եխ, շատ վատ է, վատ:

ԼՅՈՅՈՒՆԻ

Տեսնվում էր, այս:

ՀՈՅԳԵՆԻ

Ուրեմն ի՞նչ զարմանք, որ այդ խորհեցաւ:
Նորա անպատճառ դըրդիլ ին նըրսն
Եյս ծերունուն զէմ, որ յետյ վատնէ
Սորա ըստացուածքն: Աէնց այս երեկոյ
Քոյլս ինձ նամակում նըկարագրում է
Նոցա վարքն ւ այնպէս ինձ ըզգուշացնում
Ու երբ նորա գան իմ տունս օթելու՝
Եյնտեղ չեմ լինիր:

ԳՈՅՆԱԾԼ

Ոչ էլ ես, առեղան:—
Լըսեցի, Եղմունդ, որ ձեր հօրն իրեւ
Որդի ծառայել էք:

ԼՅՈՅՈՒՆԻ

Տէր, ես միայն
Պարտքս եմ կատարել:

ՎԼՈՍՏԵՐ

Ամ յայտնեց նորա
Դաւն, և ջանալով որ նըրսն բըռնէ՝
Եյս վէրքն ըստացաւ:

ԳՈՅՆԱԾԼ

Մարդ ընկած ետեն:

ՎԼՈՍՏԵՐ

Եյս, տէր իմ դուքս:

ԳՈՅՆԱԾԼ

Մէկ որ բըռնըւի՝

Նրա չարութիւնից ոչ ոք վախնալու
Տեղեք չունենար այլ ևս: (Գլուխէրին). Գործածիր
Եմ իշխանութիւնս ըստ կամաց: Իսկ դուք,
Ոիրելի Եղմունդ, որ նոր փայլեցաք
Ըռաքինութեամբ և հնաղանդութեամբ՝
Մէրն էք դուք: Մէր այժմ շատ են հարկաւոր
Խիստ հաւատարիմ այսպիսի անձեր:
Մէնք տէր եղանք ձեզ:

ԼՅՈՅՈՒՆԻ

Չեղ կը ծառայեմ,
Միլորդ, իմ բոլոր հաւատարմութեամբ:

ՎԼՈՍՏԵՐ

Կողմից ձեղ շնորհակալ եմ դուքս:

ԳՈՅՆԱԾԼ

Տէր, դուք չք գիտեր մեր դալուն առիթն—

ՀՈՅՎԱՆ

Եյսպէս ուշ ատեն, խաւար զիշերով:—
Իմ աղնիւ Գլոստէր, ծանըք գործեր կան,
Որոց համար մեղ պէտք է ձեր խորհուրդն:
Հայրըս ինձ զրօռումէ, նոյնպէս և քոյրս,
Թաէ վէճ է բացուել նոցա մէջ: Եւ ես
Ետւ համարեցի ըլ պատասխանել
Նոցա մեր տանից: Սուրհանդակները
Սպասում են այստեղ: Օ՞ն, ըսփոփեցէք
Զեր սիրտն, ծերունի բարեկամ, և մեղ
Խորհուրդներ արւէք մի գործի մասին,
Որ պահանջում է փութով որոշում:

ԳԼՈՍՏԵՐ

Օպոսյ եմ, տիկին: Բարով էք եկել:
(Մահուած են ամրոցը):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Գլոստէրի ամրոցին առջև:

Կինծ և ԱՅԱԽ ներս են մտնում արբեր, կողմերից:

ՈՍՊԸՆԴ

Բարի լցո քեզ, բարեկամ, այս տանից ես դու:

ԿԵՐ:

ՈՍՊԸՆԴ

Զիերս նւրտեղ կապենք:

ԿԵՐ:

ԴԱՀԻՃՈՒՄ:

ՈՍՊԸՆԴ

Խնդրում եմ, ասա իբրև բարեկամ:

ԿԵՐ:

Ես քո բարեկամդ չեմ:

ՈՍՊԸՆԴ

Ե, լաւ, ես էլքո հետդ գործ չունիմ:

ԿԵՐ:

Եյ, թող այստեղ չլինէինք՝ քեզ կսովորեցնէի, գործ ու-
նի՞ս հետս թէ ոչ¹⁾):

ՈՍՊԸՆԴ

Կ՞եզ օձիքս կպար: Ես քեզ չեմ ձանալում:

ԿԵՐ:

Եսկ ես քեզ ձանալում եմ, ընկեր:

ՈՍՊԸՆԴ

Ուրեմն քո կարծիքով նվ եմ ես:

ԿԵՐ:

Մի դատարկապորտ, ստահակ, աման լիզող մի ցած,
գոռող գատարկ, հովարտայ, աղտոտ, վատ ստահակ. մի վա-
տասիրտ, կրիւր գատաւորին հասցնող ապիլատ. մի անա-
ռակ, ծակաչք, շղոքորթ, կատարեալ ստահակ. մի շոր մու-
րացող ապիլատ. մի պոչ պտայնող շուն, որ աւելի կեղծա-
ւորում է քան ծառայում. մի աղցան՝ լակոտից, մուրացկա-
նից, վատասրտից, խօսքշինողից. գարշածնունդ քած շան
ձագ ու ժառանգ. այնպիսի մէկը, որին ես հենց այս վայր-
կիանիս փայտի տակ ջարդութուրդ կանեմ, եթէ փորձ փորձես
քեզ տուածս մակդիրների մի վանկին վերայ վիճել²⁾:

1) Բնագլին մէջ է. թող լինէինք ֆինսերի ծառատունկում՝ գու հետս գործ կու-
նենայիր: Ֆինսերի ծառատունկը մեկնիչներին հասկանալի չէ: Նոքա այս հատուածն
առ հասարակ թարգմանումն այնպիսի, ինչպէս որ է նաև իմ թարգմանութեանս մէջ:

2) Եյս հայհյանքների հայերէն թարգմանութիւնը բոլորովին ճիշտ չէ. ես աշ-
խատել եմ, որչափ կարելի եր՝ գտնել գերմաներէնին համապատասխան բառեր:

ՈՍՎԱԼԴ'Ի

Ե՞նչ տարօրինակ մարդն ես եղել դու, որ նախատելու ելել
ես ինձ՝ որ քեզ չեմ ճանաչում, դու՝ որ ինձ չես ճանաչում:

ԿԼՇՆԸ

Եւ դուն, ի՞նչ աներեսի-ջուրն ես, որ ուրանում ես, որ
ինձ ճանաչում ես: Երկու օր յառաջ նվ էր, որ սրունքներից դ
բռնեց և գետին զարկեց քեզ թագաւորին առջև:—Սուրդ հա-
նի՛ր, ստահակ, գիշեր է, բայց լուսին կայ. ես քեզ նորա լու-
սովը խորովածցու պիտի ջարդեմ: Հանի՛ր սուրդ, չարագործ
անպիտան. կռուի՛ր: (Սուր հանում է):

ՈՍՎԱԼԴ'Ի

Վապեկ եկ ինձանից. ես դորձ չունիմ հետդ:

ԿԼՇՆԸ

Ճանիր սուրդ, շողոքորթ շուն: Դուն նամակ ես բերել,
համ, թագաւորին դէմ դու ընկեր ես եղել պաճուճապատան-
քի մնափառութեան՝ օրինաւոր հօր—թագաւորին ընդդէմ: Ճա-
նիր սուրդ, ստահակ, ապա թէ ոչ միսդ բզեկ բզեկ կանեմ:
կռուի՛ր:

ՈՍՎԱԼԴ'Ի

Սպանում են. օգնութիւն, օգնութիւն:

ԿԼՇՆԸ (Նշան պարագանելով):

Կռուիր, նուաստ գերի. դէմ կաց, անարդ արարած,
պաշտպանուի՛ր:

ՈՍՎԱԼԴ'Ի

Օգնեցէք, մարդ են սպանում, հասէք:

(ԵԴՍՈՒՆԴ, ԳՈՐՆՎԱԼ, ՀՈԵԳԱՆ, ԳԼՈՍՏԵՐ
ՃԱՌԱՆԵՐ ներս են մանում):

ԵԴՍՈՒՆԴ

Ե՞նչ աղաղակ է. ի՞նչ կայ. կանգնեցէք:

ԿԼՇՆԸ

Եթէ հաճում էք՝ ձեզ հետ, իմ պարսնիկս, ցոյց կտամ
ձեզ: Շրամայեցէք յառաջ:

ԳԼՌՈՍՏԵՐ

Սրեւր, զէ՞նք: Ի՞նչ կայ այստեղ:

ԿՈՐՆՎԱԼ

Եթէ կեանքից ձեռք չեք վերցրել դադարեցէք: Մէկդ
ձեռք վերցնէք՝ կմեռնէք: Ի՞նչ է սորա պատճառն:

ՀՈԵԳԱՆ

Քոյրիցս և հօրիցս եկած սուրհանդակներն են սոքա:

ԿՈՐՆՎԱԼ

Կորներիդ պատճառն ի՞նչ էր, պատմեցէք:

ՈՍՎԱԼԴ'Ի

Շունչ հազիւ եմ քաշում, միլորդ:

ԿԼՇՆԸ

Ե հարկէ, թերմաշ այնչափ քաջութիւն արի՛ր որ: Բը-
նութիւնը քեզ ուրանում է: Դուն մի գերձակի կարած ես:

ԿՈՐՆՎԱԼ

Տարօրինակ ծաղրածուն ես: Դեկձակը մարդ կարէ:

ԿԼՇՆԸ

Ճէց որ գերձակի կար է: Քարտաշը կամ ներկարարը
դորանից լաւը կշինէին, թէպէտե երկու ժամից աւելի չաշ-
խատէին:

ԿՈՐՆՎԱԼ (Ուղարկուի):

Դէ՛, խօսեցէք, ի՞նչպէս միմեանց կպաք:

ՈՍՎԱԼԴ'Ի

Տէր, աշա այս վայրենի ծերը, որի ալեխառն մօրուքին
ես ինայեցի...

ԿԱՇԵՏ

ԵՇ դու անօգուտ ցէտ¹⁾ , կառքի հինգելորդ անիւ: Տէր,
եթէ ինձ թշյլ տաք, ձեր աչքին առջև ևս այդ անարդ տիղ-
մը ծեփ կշնիմ, արտաքնոցի պատը կծեփեմ: Դուն իմ ալե-
խառն մօրուքիս ինայե՞ս, այ լեղեպատառ խաղտտնիկ:

ԿՈՐԿԱՎԱԼ

Չը լոե՞ս, յանդուգ: Պատկառիլ չը կայ,
Լի՞բբ:

ԿԱՇԵՏ

Եյլպէս է, տէր, բայց բարկութիւնն էլ
Ունի իրաւունք:

ԿՈՐԿԱՎԱԼ

Խչո՞ւ բարկացել

Ես դու:

ԿԱՇԵՏ

Վասրն զի այսպիսի մի վասն
Համարձակում է վերան սուր կրքել
Մինչ պատուի նըշյլ ըռնի: Եյս թըշուառ
Օիծաղերեսներն, իրբե դաշտամուկ,
Աըրծում են խըզում՝ յաւիտենապէս
Պըրկուած սըրբազն կապերն: Շոյում են
Աըրքերն, որ յուզգվում են տէրերին մէջ.
Արակում ձէթ լեցնում են և պաղին՝ ձիւն:
Եյո՞ն և Ոչը սոցա բերանում
Տէրերի հողմին հետ փոփոխվում են.
Եւ, շըների պէս, ոչինչ չըգիտեն
Քան թէ տէրերի ետևից վաղել: (Ուլութի՞ն):
Դիւաշար պատկերդ գըրողը տանի:

1) Անօգուտ ցէտ (շ) նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ հայերէն «Մշեցու Զայ» խօսքը:

Նըլն զըտալի, ի՞նչ որ ծիծաղում ես¹⁾:
Աազի ձագ, եթէ Աարումի գաշտում
Դու ձեռքս ընկնէիր՝ ճըւճըւացնելով
Ահմընուի մօրին քեզ կըքըշէի:

ԿՈՐԿԱՎԱԼ

ԵՇ ծեր, գըժուեցար:

ԳԻՇԱՍՏԵՐ

Եսա, ձեր կըռուին

Ի՞նչ է պատճառը:

ԿԱՇԵՏ

Երկու բեկոի
Մէջ հակակութիւն այնչափ չկայ, որչափ
Եյդ անիրաւին և իմ մէջ:

ԿՈՐԿԱՎԱԼ

Խչո՞ւ

Ենիրաւ կոչում ես. ի՞նչ է իւր մեղքն:

ԿԱՇԵՏ

Պարդ նորա պատկերն ինձ դուր չ գալիս:

ԿՈՐԿԱՎԱԼ

Թէրեւս ոչ էլ ի՞մս, կամ թէ սոցանը.
(Յոյց պալով Երմաներին և Նուշտանին):

ԿԱՇԵՏ

Եմ սովորութիւնս է, տէր, Ճիշտն ասել—
Տեսել եմ երեմն ես աւելի լաւ
Երեսներ, քան որ ուսերի վերայ
Տընկուած են պատեղ:

1) Գերմաներէնին մէջ է «Ժանտախուը ցաւագար պատկերիդ վերայ: Խօսածիս վե-
րայ ծիծաղում ես՝ որպէս թէ ես յիմարաբար խօսեցայ»:

ԿՈՐԿԱՎԱՐ

Սա նոցանից է,
Որ երբ միանգամ համարձակ կոչուին՝
Երանց լրբութիւնն անցնում են չափից
Եւ իրանցից վեր բաներ են խօսում:
«Նա շողոքորթել չէ կարող. նա մի
Եղիւ և աղատ հոգի է. պէտք է
Ճշմարիտն ասէ. որ թէ յաջողի՝
Շատ լաւ. իսկ թէ ոչ ուզիղն է խօսում»:
Եյս ըստահակներն ես ճանաչում եմ,
Որ շիտակութեան պատուարին ներքոյ՝
Միամիտ, քըսան գլուխաւողներից
Եւ պաշտօնապէս կեղծաւորներից
Եւելի խարդախ են և երկերես:

ԱԼՅԱՏ

Ուշ տէր, հաւաստեաւ և ամենազուտ
Ճշմարտութիւնով, ձեր օգոստափառ
Ենձն հրամանով որի զօրութիւնն
Ճառագայթարձակ իբրև մի ճաճանչ
Որ շողողում է Փերոսի դէմքին...

ԿՈՐԿԱՎԱՐ

Դոցանով դու ի՞նչ ես ուզում ասել:

ԱԼՅԱՏ

Ուզում եմ փոխել խօսակցութեանս ոճը. որ ձեղ այդ-
քան անհաջոյ է: Տէր, ես շողոքորթ չեմ: Իսկ նա, որ հա-
մարձակ խօսքերով ձեղ խաբեց՝ նա համարձակ խաբերայ էր,
որ ես երբէք չեմ լինիր, թէպէտե դուք ինդրէք ինձ նոյնն
անել՝ ձեր բարկութիւնը զիջնելու համար:

ԿՈՐԿԱՎԱՐ (Ուշաւուն)

Ենչով դու սըրան վերաւորեցիր:

ԱԼՅԱՏ

Ոչընչով երբէք: Մօտ օրերս արքայն,
Իւր տէրը, զարկեց ինձ փուռ առիթով.
Սա՝ որ այնտեղ էր, շյելով նորա
Բարկութիւնն ոտքերս ետևից բըռնեց
Եւ վար ձըգեց ինձ: Երբ ընկայ՝ ըսկակց
Պարսաւ անարգանք թափել իմ վերայ.
Ի այնչափ քաջութիւն ծախեց, որ արքայն
Նրան գովաբանեց իբրև մի դիւցազն,
Որ անպաշտպանիս վրայ յարձակեցաւ:
Եյժմ, իւր ահազին զօրութեան վերայ
Եպաստանելով՝ սուր քաշեց ինձ դէմ:

ԱԼՅԱՏ

Եյսպիսի ստահակ վատսիրտներին մօտ
Եյաքսն էլ ոչինչ զօրութիւն չունի:

ԿՈՐԿԱՎԱՐ

Կապանքներ բերէք: — Ա էս, անիրաւ ծեր,
Պատուելի գոռող, քել կը սովորեցնեմ...

ԱԼՅԱՏ

Տէր, ես ծերացել եմ, չեմ սովորում:
Շըղթաներ բերել մի' տաք: Երքային
Եմ ծառայում ես և իւր հրամանով
Չել մօտ եկած: Դուք քիչ ակնածութիւն
Եւ մեծ նախատինք Նորին Մեծութեան
Ենձին ցցց կը տաք՝ եթէ շըղթայէք
Նորա սուրհանդակին:

ԿՈՐԿԱՎԱՐ

Բերէք շըղթաներն:
Կեանքս և պատիւը վըկայ, մինչեւ ճաշ
Ալ նըստիս:

ՀՈՅԳԱՎԱՐ

Մինչև ձան միայն, ոչ տէր,
Մինչև երեկոյ, ամբողջ գիշերը:

ԿՈՇՆՏ

Տիկին, թէ ձեր հօր շունն էլ լինէի
Եյդպէս արժան չէր վարուիլ հետա:

ՀՈՅԳԱՎԱՐ

ԵՐԻ.

Նորա ստրուկին հետ—այսպէս է արժան:
(Ծանոթելը բերուած է):

ԿՈՐԿԱՎԱՐ

Մեր քոյրի գրօած ըստահակներիցն
Ես սա ուղղակի:—Տըւէր շղթաներն:

ԳԼՈՒԽՏԵՐ

Եղաջում ևմ ձեզ գուքս, մի անէք այդ:
Նորա յանցանքը ծանր է, և բարի
Ելքայն, իւր տէրը, կը պատժէ գրօան:
Եյդ ամօթալի պատիճն տալիս են
Ենարդ ու վատթար սրբիկաներին՝
Գողութեան և այլ նըւաստ գործերի
Համար: Թագաւորն շատ կը նեղանայ,
Որ նըրան այնքան արհամարհում էք՝
Մինչ իւր սուրհանդակն այդպէս էք պատժում:

ԿՈՐԿԱՎԱՐ

Պատասխանատուն ես եմ:

ՀՈՅԳԱՎԱՐ

Մեր քոյրն էլ
Հարկաւ տւելի պիտի նեղանայ,
Որ իւր սուրհանդակն ծաղը ու նախատինք

Կըրեց երբ նէրա յանձնարարութիւնն
Եր կատարում: Օ՞ն, շըլթայի գարկէք:
(Ալենդին շնայուած էն:—Կորնալին):

Գլնանք, տէր իմ գուռքս:
(Գանգած էն, բայց Գլնադերէն և Ալենդին):

ԳԼՈՒԽՏԵՐ

Յաւում ևմ վերադ,

Բարեկամ: Պըքսի կամքն է այս նորա
Կամակորութիւնն—ամենքը գիտեն
Եյս—չէ կարելի ոչընչով սանձել:
Բայց փորձ մ' էլ կանեմ:

ԿՈՇՆՏ

Զուուր մի աշխատիք,

Տէր, ձամքից եկած՝ գալրած, քընհատ եմ:
Գեռ մի քիչ քընիմ, յետոյ կը սուլեմ:
Պատուաւոր մարդի բաղդն երբ է բերել:
Մընաք բարով, տէր:

ԳԼՈՒԽՏԵՐ

Դուքսը մեղաւոր

Ես այստեղ: Տեսնենք սորա հետեւանքն: (Դաստիա է գնուած
Լոյնը բացիւած է):

ԿՈՇՆՏ

Բարի թագաւոր, առածին նըման
Մնձրեից փախչում ես, որ ծովն ընկնիս:
(Օսոցից մէ նուղին է հանուած և բայց անուած):

Մօտ եկ, աշխարհի ջահոր, և կարեկից
Լուսովդ ինձ օգնիր կարդալ այս նամակն:
Հրաշքներն երեւում են թրշուառներին
Միայն:—Կըստահ եմ Կորդելիայից
Ես այս: Նէ լըսեց բարեբաղդաբար
Եմ այս խըղձալի գրութիւնս: Նէ առիթ

Կառնէ կատարուած այս չարիքները,
Որ վախճան դընէ այս անկարգութեանց:—
Քընհատութիւնից ծանրացած աչքեր,
Յարմար ժամանակ է ձեզ փակուելու,
Որ այս աղտոտ տան վերայ չը նայէք:—
Մընաս բարով, բաղդ: Գոնէ միանգամ
Էւ ժըպտիր ինձի: Անիւրդ դարձրու: (Վահում է):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Մի վայրի դաշտ:

Էֆֆլ ներս է մտնում:

ԼԵՒԻՆ

Լվսեցի ես ինքս իմ դատավրծիուս:
Եւ թէ չը լինէր ծառին խոռոջը՝
Ըլոնըւած էի: Նաւահանգիստնին
Փակուած են առջևս: Չըկայ մեկ անկիւն,
Ուրտեղ ապահով լինիմ ինձ փրնտոող
Սուր հայեացքներից: Վանի կարող եմ
Խոյս տալ՝ կը ջանամ կեանքըս պահպանել:
Պէտք է ինձ կեղծեմ—ամենազընուձ
Անարդ ձեին տակ, որպիսին երեւք
Թօլշուառութիւնը արւել է մարդին,
Եւ նըմաննեցրել նըրան գաղանի:
Յեխով կը ծեփեմ երես, մի ծածկոց
Աը կապիմ մէջքիս. կը խառնեմ մազերս:
Այսպէս կիսամերկ ես կը թափառիմ
Երկնառաք հողմի և մըրթիկի տակ:
Ինձ ես օրինակ կառնեմ Բէդլ'ամի

Մուրացկաններին, որոնք ոռնալով՝
Իրանց կենսազուրկի, չորցած ձեռքեկը
Էրեցնում են փրշեր, ասեղներ, փայտի
Արտորտանք, գամեր. և այս գարշելի
Զեռվ, մոլեզին հայհցանքներով
Ամար խեղճ աղօթքով հաց են մուրանում
Փոքրիկ զիւղերից, ազարակներից
Եւ ջրաղացներից: «Խեղճ Տէրլիգուզը»,
Ամար «Ծղքատ Տոմը»¹⁾—գոնէ այս բան է.
Եղար մընալով՝ ոչինչ եմ այլ ես:

ԶՈՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Գլ'ոստէրի ամրոցին առջև:

Աինձ շլթայակապ քնած է: Աիր, Խեղկութան և մի Ալպեծ
ներս են մտնում:

ԼԻՄ

Տարօրինակ բան: Տանից գնացել են,
Առանց սուրհանդակս յետ յուղարկելու:

ԱՅՊԵՏ

Դեռ երեկոյին—ինչպէս լըսեցի—
Երբէք խօսք չըկար նոցա զընալուն:

1) Բէդլ'ամի մուրացկանները (Bedlam beggars) լուսնոտներ եին, որ ընդունակութեան բնականութեան մասնակիւմ բայց կամ առողջութեան բներ առաջանացում է այնուել խամամում: Բայց կամ առաջանացում չկամ առաջանացում է ակամանի սրբութեան պատճառով, արձակութեան զարգացում է առաջանացում է իրաւունք մուրացկանութիւն անելու: Այս թշուառներն ամեն տեղ կարեկցութիւն է նաև շարժում: ուստի շատ թափառականներ, կամենալով է չարն ուրծ գնել ժողովրդական գթութիւն՝ փոխում էին իրանց հագուստն և Բէդլ'ամի գործ գնել ժողովրդական գթութիւն՝ փոխում էին իրանց մերկ մարմիններն: մուրացկան անունով ողորմութիւն էին ժողովում: Առքա իրանց մերկ մարմիններն յակըց գուրկ են: Իրանց կոչում էին «Ծղքատ Տոմ», և անցորդների հանդիպելիս գումէին՝ «Ծղքատ Տոմը մըսում է»:

ԱԼՅՈՑ

Ողջյն Զեզ, տէր իմ արքայ:

ԼԻՒ

Ի՞նչ, միթէ

Եյդ նախատական ձևն էր մընացել,

Ու զըւարձանաս:

ԱԼՅՈՑ

Եյդպէս չէ, արքայ:

ԽԵՊԿԱՏԱԿ

Օ՛հ, օ՛հ, տեսնում էք ի՞նչ կակուղ զանկապաններ են:
Զիերին՝ բերանից են կապում շներին և արջերին՝ վզեց. կա-
պիկներին՝ մէջքեց. իսկ մարդին՝ ոտքերից: Երբ մարդի ոտ-
քերը շատ շարժուն լինին՝ նորան փայտէ գուլպաններ կշաքյնեն:

ԼԻՒ

Եւ ով, աստիճանդ արհամարհելով՝
Յանդրդնեցաւ քեզ այդտեղ նըստեցնել:

ԱԼՅՈՑ

Ես և նէ, արքայ, ձեր ուստին ու դուստրը:

ԼԻՒ

Ո՛Հ

ԱԼՅՈՑ

ԼԻՒ

Ո՛Հ ասում եմ:

ԱԼՅՈՑ

Եյն, ասում եմ:

ԼԻՒ

Ո՛Հ ոչ, նոքա չեն համարձակիր:

ԱԼՅՈՑ

Եյն, այն, համարձակեցան:

ԼԻՒ

Արամազդ վկայ, ոչ:

ԱԼՅՈՑ

Ճերայ վկայ, այն:

ԼԻՒ

Նոքա այս անել չեն համարձակում:
Ձեն կարող անել չեն ուզում անել:
Քան մահը վատ է այս: Եյսպէս պատիւս
Ընարդելք Շուտ ինձ բացատրութիւն տուր,
Թաէ ի՞նչ առիթով արժանի եղար
Ասմ տեղիք տրւիր այս նախատինքին—
Դու, մեր սուրհանդակներ:

ԱԼՅՈՑ

Հազեւ թէ, միլորդ,
Տեղ հասայ և Զեր Վեծութեան նամակն
Յանձնեցի, դեռ ևս ոտք չէի կանգնել
Մոռնկ չողած տեղեցս՝ որ մի սուրհանդակ,
Վըրտինք ու փոշէ մըտած, շընչասպառ
Ճասաւ. Գոներին տիկինի կողմից
Ողջյն մըրմռաց և մի նամակ տուեց,
Ու նոքա շուտով կարդացին, առանց
Յետաձրդելու, և սորա վերայ
Ռոլոր ծառաներն կանչելով՝ հեծան
Զի, և պաղութեամբ ինձ հրամայեցին
Երանց հետեւ և սպասել մինչև
Ժամանակ գըտնեն պատասխանելու:
Եյստեղ ես տեսայ այն գըրաբերին,
Ուի հաճնիկ գալուստն, ես գիտեմ:

Եմ զործս աւելից: (Նա էր, որ մօտելս
Զեր Մհեծութեան դէմ այնքան լրօբացաւ):
Կըքիցս խելքըս կորցըթի, և սուրս
Քաշեցի. իսկ նա վայ ու գոռումով
Տունը թունդ հանեց:—Զեր որդին ու դուստրն
Եյնպէս դատեցին, որ այդ յանցանքով
Երժանի էի այս նախատինքին:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Քանի որ սագերն այս կողմն են թռչում, երեսում է թէ
ձմեռը գեռ չ անցել:

Երբոր հայրը հաղնի գըրզլեակ՝
Որդիները կը կուրանան.
Իսկ երբոր նա ունի քըսակ՝
Որդւոց սէր գութ կը բազմանան:

Բաղդն՝ այս հօյակապ պոռնիկը

Միշտ հարջստին է բաց անում գըրոնիկը:

Բայց այնու ամենայնիւ, աղջիներդ քեզ այնչափ վեշտ
պիտի պատճառեն՝ որչափ գոլ'լար չկարողանաս համարել մէ
ամբողջ տարի¹⁾:

ԼԻՅ

Ո՞հ, ի՞նչպէս արիւնս սիրսս է բարձրանում:
Ո՞հ, սըրտմըտութեան ջրղաճրդութիւն²⁾՝,
Լեղի, որ վեր ես ենում, դադարիր.
Յածն են քո տարբերդ:—Ո՞ւր է այն աղջին:

ԱԼՇԱՏ

Կոմսի ամրոցումն է, տէր, գըրքսին հետ:

1) Գիշտ և գոլ'լար բառերին մէջ անդիերէնում մի բառախաղ կայ (douleur=վեշտ, dollar=գոլ'լար), որ հայերէն լեզուով անթարգմանելի է:

2) «Hysterica passio»: Ըեկապի թէ՛ այս միստերական ախտին անունը և թէ եղանակ յիշելիք գեերի անուններն և յատկութիւններն առել է Սամուել Հարսնէտի «Rélévation des impostures papistes» գրքից: Այս գրքի հրատարակութեան թուականից (1603) մէկնելու հետեցնումն, թէ Ըեկապի չէր կարող իւր «Նիր Թաւուրն» 1603-ից յառաջ գրած լինել:

ԼԻՅ

Հըդաք ետևիցս. այստեղ սպասեցէք: (Մահում է ամրոցը):

ԱՍՊԵՏ

Պատմածիցդ տւել ոչինչ չե՞ս ալիկ.

ԱԼՇԱՏ

Ոչ:—Կնչու քիչ են արքայի մարդերն:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Եթէ, օրինակի համար, քեզ շղթայի զարնէին այդ հարց-մունքիդ պատճառով՝ լաւ արժան էր քեզ:

ԱԼՇԱՏ

Կնչու համար, այ յիմար:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Վեզ մի մրջիւնի մօտ աշկերտ տանք, որպէս զի սովորիս, թէ մարդ ձմեռը չէ աշխատում:—Ով որ իւր քթի ուղղութեամբ է զնում՝ իւր աչքերից է առաջնորդվում, բացի կըրերից, հարկաւ, և քսան քթերի մէջ մէկ հատ էլ չկայ, որ չուզգայ, թէ ով է գէշ հոտ հանողը:—Երբ մի մեծ անիւ լեռից վար է զլորում՝ նրան մի բոնիր, ապա թէ ոչ վեզդ կը կոտրես. իսկ երբ գէպի լիան է բարձրանում՝ ետևից կախ ընկիր, հատը բարձրացիր: Եթէ մէկը քեզ սորանից խելք խորհուրդ տայ՝ իմն ինձ յետ դարձրու: Ես ուզում եմ, որ այս խորհրդիս միայն ստահաներն հետեւին, վասն զի խեղկատակի խօսք է այս:

‘Ես՝ որ ծառայում է շահի համար,

Եւ հետեւում է լոկ ձեի համար’

Վնձրե գալուն պէս փախչում է,

Մըրրիկին տակ քեզ թողնում է:

Եմաստունը թող փախչէ հեռանայ.

Ես չեմ շարժրւիր. յիմարը կը մնայ:

Փախողըստահակն կը դառնայ յիմար.
Իսկ յիմարն՝ երեք ստահակ չե դառնար:

ԿԱՅՏ

Եյտ բաներն որտեղ ես սովորել այ յիմար:

ԽԵՂԱԾԵՒ

Ի հարկէ ոչ թէ շղթաների մէջ, ով յիմար:
(Ի՞ր և ԳԼՈՍՏԵՐ ամրացից բուլու են ժամկան):

ԼԻՐ (ԳԼՈՍՏԵՐԻ).

Մերժե՞ն խօսիլ հետո: Հիւանդ, դադրած են՝
Ամբողջ գիշերը ճամբայ են եկել—
Անդ պատճառակներ, անհոգութեան ցցց:
Վընա, լաւագոյն մի պատասխան բեր:

ԳԼՈՍՏԵՐ

Տէր արքայ, գիտեք դուք ինքնին, թէ դուքսն
Ինչպէս զայրացկոտ, խօսին յամառ է:

ԼԻՐ

Պըրէժ, մաշ, ժանտախտ, ջրնջում:—Օ այրացկոտ:
Ինձ ի՞նչ պէտք է այդ: Եշ, ԳԼՈՍՏԵՐ, ԳԼՈՍՏԵՐ,
Ուզում եմ խօսիլ դրքսին և կնին հետո:

ԳԼՈՍՏԵՐ

Եյդպէս էլ նոցա տեղեկացուցի:

ԼԻՐ

Տեղեկացուցիր: Ինձ հասկանում ես
ԵՇ մարդ:

ԳԼՈՍՏԵՐ

Եյտ, իմ արքայ:

ԼԻՐ
ԾԱԳԱւՈՐՆ

Խօսիլ է ուզում Գորընվալի հետ.
Վիրելի հայրը ուզում է խօսիլ
Դըստրին հետ, նէրա պարտքն յիշեցնել:
Այսպէս յայտնեցիր դու նոցա: Պըրէջ
Շունչս և արիւնըս...: Օ այրակոտ... դուքսը
Օ այրացկոտ...: Եսա այդ կրակոտ դըքսին,
Թու... բայց դեռ ոչ... նա թերեւս հիւանդ է:
Եռողջին դըրուած պարտքելն հիւանդը
Մոռանում է միշտ: Մէկը մեղ կորցնում ենք,
Երբ ցաւից ընկճուած՝ բընութիւնն հոգուն
Ստիպում է մարմնին ախտակցիլ: Պէտք է
Սպասել: Օ ըղջում եմ, որ սաստիկ կըքից
Բըռնուած՝ հիւանդի տըկարութիւնը
Ես առողջութիւն կարծեցի: (Աէնարին Աբրամ նայելով):

Ենէ՛ծը

Վիճակիս: Կէտու սա կապուած է: Սա
Աարծեցնում է ինձ, թէ դըքսի և կնի
Տանից հեռանալն կեղծիք է միայն: (Բայց).
Հանիցէք ծառայս ըրդթայից: Գնացէք
Վըքսին և կընին ասէք՝ ուզում եմ
Հետերը խօսիլ: Շուտո, այս րոպէիս
Պէտք է նոքա գան ինձ լըսեն, թէ ոչ
Նոցա սենեակի առջեւ ես թըմբուկ
Օ արնել կտամ այնչափ որ նորա ձայնը
Սպանէ նոցա քունն:

ԳԼՈՍՏԵՐ

Որչափ ուզում եմ
Խաղաղ վախճան տալ... (Մարտում է ամրոցը):

ԼԻՐ

Ուզ սիրտ իմ: Ի՞նչպէս
Բարձրանում է սիրտս: Եջեր, դադարիր:

ԽԵՂԱՎՏԸՆԻ

Նորան այն ասա, ինչ որ խոհաբար կինն ասում է՝ օձառուիներ կենդանւոյն խմօրին մէջ գնելով։ ‘Նէ փայտով նոցա գլխին զարնում է ասելով. «խելօք կեցիք, չարե՛ր, խելօք»։ Խոհան եղայրն այնչափ բարի է դէպի իւր ձին, որ նորա խոտին մէջ իւղ է ածում։

(ԳՈՐՆՎԱՌ, ՀՈՒՊԱՆ, ԳԼՈՍՏԵՐ և
ԺԱՌԱՆԵՐ նէր էն հանում):

ԼԻԲ

Ապարի լցու ձեզ։

ԳՈՐՆՎԱՌ

Չեր Մեծութեան ողջոյն։

ՀՈՒՊԱՆ

Ուրախ եմ, արքայ, ձեզի տեսնելուս։

(ԱԷՆԹԻԿ ԴՐԱՄԱՆԵՐ հանումնեն)

ԼԻԲ

Հաւատում եմ քեզ, Հոեգան, և զիտեմ
թէ ինչ պատճառով. թէ ինձ տեսնելուդ
Չուրախանայիր՝ մօրդդ շերիմից,
Երբե մի պրղծից, ես կը թողուեի: (ԱԷՆԹԻԿ):
Եւհ, արձակուեցար. — Եյդ մասին յիսոյ: (ՀՈՒՊԱՆԻ):
Ոիրելի Հոեգան, քըրդ անպիտան է.
‘Նէ այստեղ (հուրժո՞ն է ցոյց պալիս) ցըցեց, մի անդղե
նըման,

Ապետախտութեան սուր ատամները։

Հաղեւ կարող եմ ես խօսիլ. Դու չես
Հաւատար, որչափ անպատիւ կերպով,
Ուզ իւր Հոեգան..

ՀՈՒՊԱՆ

Տէր, հանդարտեցէք. Եւս

Ապրող եմ կարծել թէ դուք մանաւանդ

Զէք զընահատում նէրա արժանիքն,
Վան թէ իւր պարտքում թէրի զըանըւի
‘Նէ։

ԼԻԲ

Ի՞նչ ուղում ես ասել։

ՀՈՒՊԱՆ

Ապրող շեմ

Հաւատում թէ քըրս զանց արած լինի
Մէկն իւր պարտքերից. Թէրեւս եթէ նէ
Չեր ապերասան ասպետներին, տէր,
Անձ զըրեց՝ այնչափ օրինաւոր է
Աս և խոհեմ, որ նէ տեղիք չունի
Յանդիմանութեան։

ԼԻԲ

Եսէ՛ծք իւր վերայ։

ՀՈՒՊԱՆ

Դուք ծեր էք, արքայ. Զեղանում բնութիւնն
Մօտեցել է այժմ իւր վերջի կէտին։
Ուստի ձեր վիճակն և հոգը պէտք է
Յանձնէք ուրիշնեն, որ ձեղանից լաւ
Չեր պէտքն հասկանայ. Ուստի, խընդրում եմ,
Դարձէք քըրիս մօտ և ասէք, թէ դուք
Աըլսալուեցաք, տէր։

ԼԻԲ

Ես ներում խընդրեմ

‘Նէրանից. Մի տան ի՞նչ պատիւ է այս. —
«Ոիրելի դուստր իմ, ծերացել եմ ես.
«Ենօդուտ հասակ. ահա ծունկ չոգած (ծունկ է պէտո՞ւ):
«Խընդրում եմ, որ ինձ հագուստ, կերակուր
«Եւ անկողին տաս»։

ՀՈՅՎԻԵՆ

Բաւական է, տէր:

Անվայել անշամ կատախներ են այդ:

Դարձեք քոյլիս մօտ:

ԼԻՐ

Ոչ երբէք, չուեղան:

Նէ շըքախումբիս կէսը վըուընդեց.

Միշտ խաւար հայեացք ձրգում էր վերաս.

Եւր օձի լեզուով իմ սիրոս է ծակել:

Թափին երկրնքի բոլոր վըրէժներն

Նէրա ապերախա գըլուխն: Թափիանցէ՝

Ոսկորներին մէջ ժանտախտի շունչը:

ԳՈՒՅԱՎԵԼ

Ամօթէ, տէր, թիւ:

ԼԻՐ

Երադ կայծակներ,

Հըպարտ աչքերը զարկէք ձեր շանթով:

Ճախնային շոփիք, որ զօրեղ արեն

Վշեր է բարձրացրել՝ ժանտահար արեք

Նէրա գեղն, չորցրէք հըպարտութիւնը:

ՀՈՅՎԻԵՆ

Ո՞վ բարի երկինք: — Ինձ էլ՝ տի մաղթես

Կոյնն, երբ բըռնըւիս կըքից:

ԼԻՐ

Ոչ չուեղան,

Իմ անէծքս երբէք դու լըսելու չես:

Քո քընքոյշ բնութիւնդ անընդունակ է

Կըստութիւն գործել: Աատաղի աչքեր

Ունի նէ, բայց քո աչքերդ զըգվում են

Առանց կիզելու: Երբէք կարող չես

Դու իմ կարգերիս վերայ արսալնջել,
 Մարդկիս թիւը պակսեցնել, կոպիտ
 Խօսքել երեսիս նետել, մոռանալ
 Ամօթն, վերջապէս, իմ տուն մըտնելիս
 Փակել դուռն առջեւ: Ոչ դու լաւ գիտես
 Բնութեան պարտքերը, որդիական սէրն,
 Վաղաք' վարութեան կարգն և երախտեաց
 Օրէնքը: Դու չես մոռանար կէսը
 Թագաւորութեանս, որ քեզ բաշլեցի:

ՀՈՅՎԻԵՆ

Խօսքերդ ինչումն է, տէր: (Փաղէրն ճայնել են լուս-ը):

ԼԻՐ

Ո՞վ սուրհանդակս

Շըղթայի զարկեց:

ԳՈՒՅԱՎԵԼ

Ի՞նչ փողի ձայն է:

ՀՈՅՎԻԵՆ

Գիտեմ, քոյլս է այս: Նէ ինձ գըրել էր,
 Թէ շուտով կըգայ:

(ՈՍՎԱԼԴ նէրն է հանու-ը):

Տիկինդ էլ եկամւ:

ԼԻՐ (Ոսկալուն պէսնէլով).

Եշա այն ըստրուկն, որ պարծենում է

Տիկինից առած առվայրկեան պատուով:

Ճեռացիր աչքիս առջեից, ըստրուկ:

ԳՈՒՅԱՎԵԼ

Եյս ի՞նչ ասել է, տէր:

ԼԻՐ

Նախ ինձ ասա,

Թէ ով սուրհանդակս շըղթայի զարկեց:

Դատաստանին եմ յանձնում: Ուղղեր քեզ,
Եթէ կարող ես լաւագցն եղիք,
Երբոր ժամանակ զըտնես: Կարող եմ
Ես իմ հոգանին մօտ մընալ հարիւր
Եմ ասպետներով:

ՀՈՅԳԱՐԱ

Ոչ այդքան, հայր իմ:
Ես չի սպասում ձեղ և պատրաստ չեմ
Երժանի կերպով ձեղ ընդունելու:
Լըսեցէք քոյրիս: Ով որ ձեր զայրոյթն
Ենաշառապէս քըննէ՝ կըտեսնէ
Որ ծերացելէք դուք, ուրեմն և
Քոյրը լաւ դիտէ թէ ի՞նչ տնում:

ԼԻԲ

Եյղպէս արժան է խօսիլ:

ՀՈՅԳԱՐԱ

Վ Ա Ր Ա Հ Ո Ւ Մ

Եմ ասել Եյո: Ի՞նչ յիսուն ասպետ
Չեղ բաւական չեն: Ի՞նչ պէտք է դրանից
Եւելին, կամ հէնց այդքանն էլ ի՞նչ պէտք.
Օափին ու վըտանզը դոցա պահելու—
Բոլորը դէմ ին այդ խոշոր թըւին:
Ի՞նչպէս կարող են մի յարկի ներքեւ
Երկու հրամանի տակ խաղաղ ապրիւ
Եյդքան բազմութիւն: Եյս շատ դըժուար է,
Գրեթէ անհընար:

ԳՈՒՅԵՐԱ

Զէք կարող թոյլ տալ,
Որ սպասաւորեն ձեղ քոյրիս մարդերն
Եւ կամ իմնչքըս:

ՀՈՅԳԱՐԱ

Եւ ինչու չէ, տէր:

Թէ մէկը ձեղ մօտ զանցառու լինի
Մէկը կըրնանք պատժել: Եթէ ուզումէք
Եմ մօտ գալ (իս այժմ ըզգում եմ վըտանզն) —
Միայն քսանեհինդ մարդով խընդրում եմ,
Եկէք. աւելին իս չեմ ընդունում:

ԼԻԲ

Եմեն ինչ ես ձեղ տըւի:

ՀՈՅԳԱՐԱ

Ժամանակն

Եր արդէն:

ԼԻԲ

Եւ ձեղ ինամակալ արի

Ինձ և խընամող պահելով միայն
Որոշեալ թըւով ինձի շոքախումբ. —
Քսանեհինդ մարդով միայն տունըդ գալ
Կարող եմ, հոգան. այս դու ասացի՞ր:

ՀՈՅԳԱՐԱ

Եւ կըրինում եմ, տէր, և ոչ մէին աւել:

ԼԻԲ

Չար արարածներն լաւ են երեսում,
Երբոր նոցանից չարագոյնն էլ կայ,
Եւ ամենավատ չը լինելն ունի
Նորէն մի պատիւ: — (Գանեթիւն) Վեղ մօտ կըդանամ:
Յիսունը կըրկինն է քսանեհինդին.
Ուրա խընամքի կըրկինն ունիս դու:

ԳՈՒՅԵՐԱ

Լըսեցէք ինձ, տէր. քսանեհինդ կամ տասն
Ամի հինդ մարդ ձեղ ի՞նչ պէտք են մի տան մէջ՝

Ուր երկապատիկ թըլով ծառաներ
պատուէր ունին ձեղ սպասաւորելու:

ՀՈՒԳԱԾԵՎ

Խնչ պէտք է հէնց մինն էլ:

ԼԻԲ

Պէտքի մասին

Մի խօսիր. վերջին մուրացկանն իսկ իւր
խեղջիկ պայելքում ունի աւելորդ:
Եթէ բընութիւնն տայ միայն բնութեան
Ենշրաժեշա եղածն՝ մարդն իբրև գաղան
Սպակի կըսկըսի:—Դու մեծ տիկին ես.
Եթէ տաք ըզգեստն արդէն պերճութիւն
Ե՝ ինչո՞ւ հազել ես դուն պյտ շըքեղ
Հանդերձներն, որոնք հազեւ տաք պահեն:
Գալով ձըշմարիտ պէտքիս—ով երկինք,
Համբերութիւն տուր. ես համբերութեան
Պէտք ունիմ: . . . Երկի՞նք, այստեղ տեսնում ես
Մի խեղջ ծերունի, կըրկնակի թըլուառ—
Յաւով, չարիքով: Եթէ դուն ես, որ
Օշաւակին սիրաը հօր դէմ զըրգուցիր՝
Մի ծաղօկը վերաս մինչ պյն աստիճան՝
Որ ես հեզութեամբ սորան համբերեմ:
Իմ սիրտը լրցրու աղնիւ բարկութեամբ.
Թո՞ղ արտասուքներն—կանացի զէնքը—
Ելրական դէմքըս չափականեն:—Ոչ
Օշազիր ջատուկներ, ձեզնից պյն տեսակ
Պարէժխընդիր լինիմ, որ բոլոր աշխար՛...
Եյն բաներն անեմ... ի՞նչ—պյս չը գիտեմ
Դեռ ես ինքս. միայն նոքա աշխարհըը
Կը սարսափեցնեն:—Յոյս ունիք, թէ լամ:
Ոչ չըպիտի լամ: Լացի առարկայ
Շատ կան, բայց յառաջ քան թէ արտասուեմ

Սիրտս հարիւր հազար կըտոր կը լինի:—
Ո՞վ իմ խեղկատակ, խելքըս թըլոյնում եմ:
(Լ. Պ. Պահապէր Աւելու և Խեղկատակը գնում են):

ԳՈՒՅԵՐԻՆ

Մենք էլ ներս քաշուինք, մըսրիկ պիտի գայ:
(Հետուից հրակել յայն է լավում):

ՀՈՒԳԱԾԵՎ

Եյս տունը փոքր է. ծերուկն իւր խըմբով
Զեն կարող այստեղ հանգիստ գիշելի:

ԳՈՒՅԵՐԻՆ

Յանցանքն իրանն է, որ չը կամեցաւ
Տեղն հանգիստ նըստիլ թող արդ պատժը:

ՀՈՒԳԱԾԵՎ

Ես յօժարութեամբ նըրան կընդունեմ,
Բայց ծառաներից և ոչ մինն:

ԳՈՒՅԵՐԻՆ

Ես էլ
Նոյնն եմ մըտածում:—Ուր է Պահապէր:

ԳՈՒՅԵՐԻՆ

Ծերին ուղեկցեց:

(ՊԱՌՍԵՐ Ն. և Հանում)՝
Եհա գալիս է:

ԳՈՒՅԵՐԻՆ

Երկայն չափազանց բարկացել է:

ԿՈՒՅԵՐԻՆ

Պնում է նա:

ԳՈՒՅԵՐԻՆ

Չիերն հրամայեց հեծնել
Բայց ուր ուղում է երթալ չըգիտեմ:

ԿՈՐՆՎԱԼ

Ուր կամենումէ թող երթայ:
ԳՈՒՆԵՐԻԼ՝
Պարոն,

Երբէք մի հոգաք նրան արգելելու:

ԿԱՌՈՍՏԵՐ

Ո՞չ, մօտ է զիշերն: Յուրա հոգմի յցվո
Օդն է դըղըրդում:—Քանի մըղոն շուրջ
Մի մացառ ըսկայ:

ՀՈՎԳԱԼ

Թող լաւ դաս լինին այն վընասները,
Որ իրանք արին:—Փակեցէք դըրներն:
Նորա մարդերը յանդուդնեն. գուցէ
Խելացի բաներ նորան սովորեցնեն.
Խոհեմութիւն է զգուշութիւն անել:

ԿՈՐՆՎԱԼ

Դըռները փակել:—Գիշերն սոսկալի
Պիտի լինի: Զեղ ծուեգան լաւ խորհուրդ
Տըւեց:—Ներս զընանք, խոյս տանք մըրթիկից:
(Պատաժն):

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Ա.ՌԱԶԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Վայրի դաշտ: Լովում է փոթորիկ որոտումի
և կայծակի հետ:

Ալիք և մի ԱՊԵՑ հանդիպում են միմեանց:

ԿԱՌԵՑ

Ո՞վ է թափառում այստեղ՝ այսպիսի
Մըրթիկի ատեն:

ԱՍՊԵՏ

Նա որի հոգին

Եղանակին պէս լի է ծըփանքով:

ԿԱՌԵՑ

Զեղ ձանաչեցի:—Ուր է թագաւորն:

ԱՍՊԵՏ

Կատղած տարելքին դէմէ մարտընըում:

Երդմիցուցանումէ հողմելն՝ շընչել:

Նետել աշխարհը ծովին անգունդը,

Կամ ծովը մըղել եղելքներից գուրս,

Որպէս զի իրերն փոխուին կամ ջընջուին:

Փետումէ ճերմակ մաղերը, որոնց

Ենչետացնումէ իսկոյն մըրթիկի

Եհեղ ծըփանքը կոյր կատաղութեամբ:

Մարդկացին տըկար ցժով՝ զայրացած

Հողմէ և անձրեին դիմազրաւումէ

Նա: Այս զիշերն, երբ արջն իւր ձագերով

Փակվումէ որջում, երբ առիւծն ու գայլ

Տնէպէտև սոված՝ խնայում են սակայն

Իրանց մորթին՝ նա զըլսաբաց շընջում

Եւ ամեն բանի ջընջումն է մաղթում:

ԿԱՌԵՑ

Պոկ ով կայ հետը:

ԱՍՊԵՏ

Միայն խեղկատակին,

Որ ծաղրածութեամբ ջանումէ սըրտին

Վիշտը փարատել:

ԿԱՌԵՑ

Զեղ ձանաչում եմ

Պարոն, և վըստահ ձանաչողութեամբ՝

Կարեռ գործեր կարող եմ յայնել

Զեղ: Ալքանիի և Աորնվալի մէջ

Երկպառակութիւն ծագեց, թէպէտ դեռ
Երկուստեք ծածկուած կեղծաւորութեան
Քօղին տակ: Նոքա ծառաներ ունին—
Խնապէս այն ամենքն, որ յաջող ասաղի
Եզդեցութեան տակ գահ են բարձրանում—
Որ միանգամայն Գաղղից դէտերն
Ու լըրտեսներն են: Նոքա լաւ տեղեակ
Են մեր դըրութեան—այն ատելութեան,
Որ դըքսերին մէջ կայ, ծանըր լըծին,
Որ ծեր արքայի վեզը կապեցին,
Եւ դեռ աւելի ծանրակշխո ուրիշ
Գործերի, որոնց թէրեւս սոքա
Լոկ հետեանքն են: Բայց ճըշմարիտ է
Ամ՝ որ մի բանակ Գաղղիայից այս
Բաժանեալ աշխարհն է գալիս: Երդէն
Օգտուելով նա մեր անհոգութիւնից՝
Ոտք է դրել մեր լաւ նաւահանգիստներն,
Եւ շուտով յայտնի կը պարզէ դըրօն:
Երսեցէք ուրիմն ինձ. եթէ վերաս
Վըստահելով՝ շուտ Գուգօ ուղելորիք՝
Եյնաեղ ձեզանից մէկը չնորհակալ
Կըլինի, երբոր հաւասահաւ պատմէք,
Խնչ անտանելի սաստիկ վըշտերի
Երքայն ենթարկուած է: Ես թէ՛ դըրութեամբ
Եզնըւական եմ և թէ արիւնով,
Եւ այս պաշտօնը ձեզ հաւատում եմ՝
Կըրե ինձ ծանօթ մարդի:

ԵՍՊԵՏ

Եյս մասին

Դիեռ կըխօսինք:

ԿԵՇԱՏ

Ո՛ւ հարկ չէ: Որպէս զե
Վըստահիք վերաս, թ'արտաքին ձեից

Շատ արժէք ունիմ՝ բացէք այս քըսակն
Եւ մէջին առէք: Երբ Կորդելեային
Տեսնէք, (ես վըստահ եմ, որ կը տեսնէք),
Յոյց տըւէք նէրան այս մատանին. Ձեզ
‘Նէ կասէ, ով էր ձեր ընկերն, որին
Զէք ճանաչում այժմ:—Զար մըրրիկ:—Գընամ
Երքայն դըրտելու:

ԵՍՊԵՏ

Զենք տուէք, տէր, այլ ևս

Եսելիք չունիք:

ԿԵՇԱՏ

Միայն մի քանի

Կարեոր խօսք, բայց կարեորագոյնն
Է արքայն դըրտել: Փընտուեցէք նըրան
Եյդ կողմին, և՝ այստեղ: Ով որ նախ դըրտնէ
Թող ձայն տայ միւսին: (Գնուած էն գաղբեր կողմէ):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Գիշեր: Մի ուրիշ վայրի դաշտ: Մրրիկը շա-
րունակվում է:

Լիր և Խեղիսակի մտնում են:

ԼԻՐ

Երսեցէք հողմեր,

Մինչև այտերը պայթին՝ շնչեցէք:
Աաշակը, փոթորիկ, հոսացրէք ուղևերդ,
Մինչև որ ծածկուին խաչ- ու զըմբէթներն:
Դուք խորհրդերագ ծըծըմբային հրեր,
Կաղնին ջախջախող շանթ- ու կայծակին
Յառաջընթացներ, օն, շեկնեցուցէք
Ելեռոր մազերս: Եւ դու, որոտում

Ամենակործան, խորտակիր այս մեծ
Եշխարհագունդը. ջաղխիր բընութեան
Բոլոր կաղապարն. միանգամ ընդ միշտ
Դընջիր համօրէն սերմելն, որոնցից
Օընունդ է առնում ապերախտ մարդը:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

ԵՇ քեռի, մի չոր անի մէջ պալատական խաչուայի
ջուրն աւելի լաւ է, քան թէ բացօթեայ տեղում այս անձրել:
Դարձիր, իմ քեռիս, և աղջիկներիդ զթութիւնն հայցիր:
Եյս այն տեսակ զիշեր է, որ չէ խնայում ոչ յիմարին և ոչ
իմաստունին: (Ուրախում):

Լ.Ի.Պ (Եպէրն դէպէ երին+):

Գոռա, փոթորիկ, որչափ շունչ ունիս.
Տեղացիր, անձրե՛, փայլատակիր, հուր:
Թօն, հողմ, որոտ, հուր իմ գըստրերըս չեն:
Տարելք, չեմ դատում քեզ իբր ապերախտ.
Թագաւորութիւն երբէք չեմ տրւել
Չեզ որդի կոչել չեմ: Դուք չունիք պարաք
Խնձ հնազանդելու: Աաշկանդեցէք ինձ
Չեր խիստ կատակով: Եհա ձեր ըստրուկն
Աանգնած եմ, խեղճուկ մի ծեր, վըշտացած,
Տըկար, նախատուած:—Իայց կոչում եմ ձեզ
Նըւաստ ծառանկո, որովհետեւ դուք,
Միացած երկու անարդ գըստրերին՝
Երկնացին զէնքով պատերազմ բացիք
Ոորա նըման ծեր և սպիտակափառ
Դըլիսի դէմ: Ո՛հ, ո՛հ, ատելի է այս:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Ով որ տուն ունի, զլուխը դնելու համար՝ նորա զլուխը
պատսպարուած է:

Ով որ գըլխին համար չունի պատըսպարան,
Իայց կամենում է լաւ հագուստ կարել

Կա կըկորցնէ շուտով գըլուխն և ամեն բան:
Շատ մուրացիկներ այսպէս են արել:
Ով որ ոտքի մատերին
Ենումէ այն ինչ անելու էր սըրտին:
Եշի կը կանչէ նա ոտքի բըշտերից,
Քունը կը կըտրի նորա աչքերից:
Վասն գի գեռ մի գեղեցիկ կին չէ ծնել որ հայելու
առջեւ չկոտրտուի:

Լ.Ի.Պ

Եյս, կամենում եմ համբելութեան
Օրինակ տալ. էլ չեմ ուզում խօսիլ:

(ԿԵՆՏ ՆԵՐ Է ՀՈՒԽՈՒՄ):

ԿԱՇԱՏ

Ով կայ այդտեղ:

ԽԵՂԱԿԱՏԱԿԻ

Ո՞վ—մէկ իշխան և մի գեղջուկ. այն է՝ մի գիտուն մարդ
և մի խեղկատակ:

ԿԱՇԱՏ

Ո՛հ, այստեղ էք դուք, տէր: Վիշեր սիրող
Երարածներից ոչ ոք չէ սիրում
Եյս տեսակ զիշեր: Զայլացած երկինքն
Սարսափ է ձրգել խաւարաշըրջեկ
Գաղաններին վրայ և որջում փակել:
Չեմ յիշում կեանքումն այսպէս կայծակի
Շանթեր, այս տեսակ աշեղ որոտում,
Ճողմի մըորնչեն և տեղատարափ
Ենձրւ: Մարդկային բնութիւնն չէ կարող
Տանել այս տանջանքն և արհաւիրքը:

Լ.Ի.Պ

Եյն աստուածներն, որ մեր գըլխին վերայ
Եշեղ որոտում են՝ թող փրնառն այժմ

Երանց թրշնամիքն:—Դողա՛ դու, թրշուառ,
Որ արդարութեան դատից ծածկումես
Մեղքերդ սըստիդ մէջ: Արիւնահեղ ձեռք,
Պահուիլու նոյնապէս դու իրդմազանց, և դու,
Կեղծաւոր, որ մի ազգապրղծութիւն
Առաքինութեան դիմակով ծածկել
Ես: Թափախուի՛ր դու ահի ցընցումով,
Դաւող ապիրատ, որ, իբրւ ընկեր,
Դարան ես դընում մարդկային կեանքին:
Դաղտնի ոծիլներ, պատուեցէք ձեր քօղն
Եւ այս սոսկալի դատաւորներից
Ընորհք հայցեցէք: Իսկ ես՝ կըրում եմ
Եւելի չարիք, քան թէ դործել եմ:

ԿԼՇՆՏ

Ո՞հ, գրլիսաբաց էք: Իմ բարի արքայ,
Մօտ տեղ մի հիւղ կայ. նա ձեղ մըրրիկից
Առ պատըսպարէ: Հանգչեցէք այնտեղ
Մինչեւ ես երթամ այն դաժան տունը,
Եւելի դաժան, քան պատի քարերն—
Որ հէնց նոր, երբ ձեղ փընտում էի ես՝
Ինձ ներս չընդունեց—ստիպմամբ մի ժըլատ
Հիւրասիրութիւն ձեղ համար այնտեղ
Բատանամ:

Լ.Ի.Պ

Խելքըս խառնուիլ է սկըսում: (ԽԵՎԱԿԱՊԱՀՆԻ)
Եկ, տրդաս. ի՞նչ ես անում, սիրելի
Տրդաս: Մըրսում ես: Ես էլ եմ մըրսել: (ԽԵՎԱԿԱՊԱՀՆԻ)
Ո՞ւր է այն յարդը, բարեկամ: Պէտքի
Երուեստն հրաշապէս ներդործում է. նա
Գլձուձ բաներին արժէք է տալիս:
Գլնանք այն հիւղը—Դու խեղձ խեղկատակ,
Սըստիցըս միայն մի կըտոր մընաց
Ինձ, և այն էլ քո վերադ է ցաւում:

ԽԵՎԱԿԱՊԱՀՆԻ

Ով որ փոքր ինչ խելք ունի գրլիսում
Ճող չէ անում հողմից անձրեից.
Բաղդի բերումից գոհ է լինում:
Վասըն զի անձրեւ ամեն օր էլ է դալիս:

Լ.Ի.Պ

Այդպէս է, բարի տղաս: (ԽԵՎԱԿԱՊԱՀՆԻ): Մեղ այն հիւղն ա-
ռաջնորդիր: (Լ.Ի.Պ և ԽԵՎԱԿԱՊԱՀՆԻ):

ԽԵՎԱԿԱՊԱՀՆԻ

Փառաւոր գիշեր է, որ անառակ կնին էլ կարող է պա-
ղեցնել: Բայց ես գնալուց յառաջ ուղում եմ մէկ էլ մարդա-
րէանալ:

Քահանաներն երբ խօսք խօսքի վերայ բարդեն,
Գարեջրին մէջ՝ եփողները ջուր շատ խառնեն,
Ազնուականն երբ խորհուրդ տայ գերձակին,
Ոչ հերձուածողն, այլ կընամոլներն այրուին,
Դատաւորներն երբ խօսին շիտակ,

Սապես ու մանկլաւ էլ չը լինին պարագի տակ,
Երբ լեզուներն էլ չը բամբասեն,

Ճարպիկ գողերն գրպան չը կըտրեն,
Երբ վաշխառում համրէ իւր փողը,
Երբ տաճարներ շինեն բողն ու խօսք շինողը—

Այն ժամանակ տէրութիւնը Կլըրիոնի
Սարսափելի շըփոթութեան մէջ կընկնի:
Ով ապրի, կը տեսնէ, ժամանակ կը դայ,
Որ ոտքով քալել սովորութիւն կը դառնայ:

(ՊԱԿԱՊԱՀՆԻ):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԳԼ'ՈՍՏԵՐԻ ամրոցում:

ԳԼ'ՈՍՏԵՐԻ և իդրթինի ներս են մտնում:

ԳԼ'ՈՍՏԵՐԻ

Ե՞ս, Եղմունդ այս անաստուած գործն ինձ բնաւ հաճելի չեմ: Երբ նոցանից հրաման խնդրեցի նորա մասին հոգ տանելու՝ նոքա ինձանից կարծեցին սեփական տնիս վերայ ունեցած իրաւունքս էլ և իրանց անհաշտ վրէժինդրութեան սպառնալիքով ինձ արգելեցին նորա մասին խօսիլ նորա համար խնդրել և որևէ կերպով նորան օգնութիւն անել:

Լ.Դ.ՄՈՒՆԴ.

Շատ խիստ ու վայրենի վարմունք է:

ԳԼ'ՈՍՏԵՐԻ

Խօսքը մեր մէջ մնայ. երկու դքսերին մէջ երկպառակութիւն կայ. բայց կայ սորանից վատ մի բան էլ: Երեկ երեկոյ ես մի նամակ ստացայ . . . այս մասին խօսիլն իսկ վտանգաւոր է: Նամակը սենեակումն պահեցի . . . : Թագաւորի այս նեղութիւններին վրէժինդրութիւն պիտի պահանջուի: Մի բանակ արգէն մեր երկիրը ոտք է դրել: Մենք պէտք է թագաւորի կողմն անցնինք: Ես գնում եմ նրան փնտուելու և ծածուկից օգնելու. իսկ դու գնա դքսին խօսակցութեան բըռնիր, որ նա իմ ինամքներս չնկատէ: Եթէ ինձ հարցնէ — ես հիւանդ եմ և պառկած: Եթէ ինձ պէտք լինի մինչեւ իսկ մեռնիլ — որ և ինձ սպառնացան նոքա — սակայն ես պիտի օգնեմ իմ ծերունի տէրիս և թագաւորիս: Տարօրինակ բաներ պիտի պատահին, Եղմունդ. զգոյշ եղեր, խնդրում եմ: (Պընուծ է):

Լ.Դ.ՄՈՒՆԴ.

Եյս մեծաշողի գործն և նամակը,
Եյդ խընամքն, որ քեզ արգելուած է՝ այժմ

Դըքսին կը յայտնեմ. նոյնպէս և նամակն:
Աս կարծեմ նորան ախորժ կը լինի:
Ես կը վաստակիմ հօրըս կորցըրածն,
Եյտ, բոլորը տարակոյս չըկայ:—
Օսկերին ընկնում են, նորսկն են կանգնում: (Պընուծ է):

ԶՈՐՅՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Վայրի դաշտում մէկ հիւղի առջև:

Ար, Անն և Խեղկալակ ներս են մտնում:

Ալէս

Եշա այն տեղը. ներս մըտէք, արքայ,

Խիստ է զիշերի այս բըռնութիւնը.

Զէ կարող տանել նորան մեր բըռնութիւնն:

Լ.Դ.Բ

Թաղը ինձ ներս մըտէք:

Ալէս

Տէր իմ, ներս մըտէք:

Լ.Դ.Բ

Ուղում ես

Աի՞րտըս պատառել:

Ալէս

Իմ սիրոս մանաւանդ

Աը պատռեմ: Տէր իմ արքայ, ներս մըտէք:

Լ.Դ.Բ

Քեզ իխստ է թըւում՝ որ մինչ ոսկորներս
Թափանցում է այս կատաղի մըտիկն:

Խիստ է քեզ համար: Բայց ուր մեծազոյն

Աըսկիծն է տիրում փոքրագոյնն հազեւ

Օգալի է այնտեղ: Երջից փախչում ես

Դու, բայց երբ փախուստդ առաջնորդէ քեզ
Դէպի զայլագին ծովն՝ դու կը նետուիս
Երջին բերանը: Երբ հոգին ազատ՝
Մարմինը փափուկ կը լինի: ։ոգումն
Եղած մըրթիկը հանում է ինձնից
Եմն ըզգացմունք. թողնում է միայն
Իմ մէջ յուղուածը: ։արազատ որդուց
Սպերախտութիւնն . . . Նոյն է թէ բերանս
Խաճատէ այս ձեռքն, վասրն զի նըրան
Ակրակրում է սա: Բայց վրէժիլնդիր
Ուզում եմ լինել: Ոչ չեմ ուզում լալ:—
Եյս տեսակ գիշերն ինձ վանել տանից: (Երիշնայելով):
Սնձրեիր դու. ես կը տանեմ բոլորն:
Եյս տեսակ գիշերն: ։ուեգան, Գոնէրիլ . . .
Զեր ծեր հօրն, որի գըթոտ սիրաը ձեզ
Տըւեց ամեն ինչ: Ո՛չ, այս կէտումն է
Խելազարութիւնն: Պէտք է խուսափել:
Բաւական է:

ԱՅՆՏ

Իմ բարի տէր, մըտէք:

ԼԻՐ

Խընդիրում եմ մըտիր դու և հոգա քեզ:
Եյս փոթորիկն ինձ չէ թողնում խորհիլ
Եյն՝ որ աւելի պիտի տանջէր ինձ:
Բայց սակայն մըտնիք: (Խելկագակի): Յառաջ դու
մըտիր,

Որդի, ով արնանկ աղքատ: Օ՛ն, մըտիր:—

Ես դեռ կաղօթեմ յիշոյ կը քընիմ: (Խելկագակի):

Ո՛վ մերկ թըշուառնիր, ուր որ էլ լինիք

Դուք՝ ենթարկուած այս անզութ մըրթիկին—

Էնչպէս բաց զըլուխն, բաղցած ըստամոքսն

Եւ պատառոտուն ցընցոտինիրը

Պիտի պաշտպանեն ձեզ մի այսպիսի
Եղանակից: Ե՛հ, այս մասին շատ քիչ
Եշի խորհում ես: Դեղ առ, Ճոխութիւն,
Ըզգա միանգամ, ինչ որ ըզգում են
Եյս տընանիներ՝ որ լիութիւնիցդ
Ողորմութիւն տաս նոցա և երկնի
Դու արդարութիւնն ապացուցանես:

ԵՐԳԱՐ (ՀԵՂԱՎ)

Կանգուն ու կէս, կանգուն ու կէս խոր:— Եղքատ Տոմ:

ԽԵՂԿԱՏԱԿ (ՀԵՂԱՎ ԴԱՐՄ Քանիւլով)

Տիերի, ներս մի մտնել: Դե կայ այստեղ: Օգնեցէք,
օգնեցէք:

ԱՅՆՏ

Զեռքդ ինձ տուր:— Ո՛վ կայ այդտեղ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Դե է, զե: Նա ասում է, թէ անունն աղքատ Տոմ է:

ԱՅՆՏ

Ո՛վ ես դուն, որ յարդին մէջ մըմուռմ ես: Դուրս ել:
(ԷՇԿԱՐ ԴԱՐՄ է Քանիւլով իւնին հադուսակով):

ԵՐԳԱՐ

Գընա: Զար ողին հալածում է ինձ:

Փըշտ մացառի մէջից շընչում է

Յուրա քամին: Գընա, ցուրտ անկողինըդ

Մըտիր և տաքցիր:

ԼԻՐ

Դոմն էլ ամեն բան

Մըտարերիդ տըւիր և այս օլն ընկար:

ԵՐԳԱՐ

Ո՛վ ողորմութիւն կտայ աղքատ Տոմին, որին չար գեր
պտացրէց կրակի և բոցի միջով, ծանծաղ և խոր տեղերում,
Ճաշիձների և մօրուտների վերայով: Նա նորա բարձին տակ

գանակներ դրեց, նստարանին տակ՝ չուան. ապուրին մէջ մը-
կընդեղ խառնեց: ‘Նա նորա սիրտը հպարտացրեց, որ աշխէտ
ձիի վերայ նստաւ և չըրս մատնաշափ լայն կամուրջին վե-
րայ սկսեց արշաւել և աշխատիլ իւր ստուերը բռնելու, որին
դաւաճան էր համարում:—Աստուած հինգ զգայալանկներդ
պահպանէ:—Տոմը մրսում է: Օ՛ դօդի, դօդի, դօդի (ապամ-
նէլլ կը հայութ է): Աստուած քեզ պահէ փոթորիկներից, չար
աստղերից և ոսկրացաւից:—Ողորմութիւն արէք աղքատ
Տոմին, որին տանջում է չար ոգին: Ա՛, ևս այստեղ նրան
կը ոննեմ: ահա այնտեղ և նորից այնտեղ և այնտեղ:

(Մը բարեկանութ է):

Լ.Ի.Բ

Դըստրերն այս վիճակն հասցըրին նրօան:—
Բան չը պահեցի՞ր. ամե՞ն ինչ տըւիր:

ԽԵՂ ԿԱՐՏԱԿ

Ոչ այս զրդեակը դեռ պահեց, ապա թէ ոչ խայտա-
ռակութիւն կընէր:

Լ.Ի.Բ

Իոլոր հարուածներն, որ ծըփուն օդում
Խիստ ճակատագիրն կախել է մեղքի
Վարայ՝ թող թափին դըստրերիդ դրլիխն:

Ա.Հ.Տ

‘Նա դըստրեր չունէր, տէր իմ թագաւոր:

Լ.Ի.Բ

Լըոիր, դաւաճան . . . ոչինչ չէր կարող
Եյսքան զեղծանել բընութիւնն, բացի
Եպերախտ դըստրերն. այժմեան կարգն է այս,
Որ որդիներից ուրացուած հայրերն
Իրանց արիւնին մէջ կարեկցութիւն,
Չըդրտնեն: Պատիմն արդար է: Աորա
Վարմնից են սերուած պէլիկան¹⁾ դըստրերն:

¹⁾ Պէլիկան=հաւալուսն: Էդգար լսելով կրեք վերջի խօսքը «պէլիկան դըստ-
րերն»՝ նմանաձայնութիւն անելով՝ ասում է «Պէլիկոկ նստել էր» և ն: Պէլիկան օ-
տարագդի բառը պահեցի, որպէս զի յայտնի լինի կրի և Եղբարի խօսքերին մշկ
կապը: Պէլիկոկ դէի անուն է:

Լ.Գ.Գ.Ը

Պիլլեկոկ նստել էր Պիլլեկոկ լեռին վերայ:—Հալլու, հալ-
լու, լու, լու:

ԽԵՂ ԿԱՐՏԱԿ

Այս ցուրտ գիշերը բոլորիս էլ կիսնթացնէ:

Լ.Գ.Գ.Ը

Զար թշնամուց զգուշացիր, ծնողներիդ հնազանդ եղիր,
խօսքիդ տէրն եղիր. մի երգուիր, մի խառնակուիր հարեա-
նիդ կնին հետ, սիրուհուդ մի վարժեցներ շացլ զարդարանք-
ների:—Տոմը մրսում է:

Լ.Ի.Բ

Գուն ովկ էիր:

Լ.Գ.Գ.Ը

Մէկ աստիճաննաւոր, գոռող սրտով ու մաքով, որ հիւ-
սում էր մազերը, ձեռնոցներ էր կրում գլխարկին վերայ. սի-
րուհու կրքերին էր ծառայում և նէրա հետ խաւարի գոր-
ծեր կատարում: որ աւելի երգումներ էր արտասանում, քան
ուրիշ խօսքեր, և զթած երկնքի դէմյանդիման երգմազանց
էր գանվում: մէկը, որ քնում էր անառակութիւններ առա-
ջազրելով և զարթնում էր՝ որ նոցա գործադրէ:—Խս գինի
շատ էի սիրում և աւելի շատ՝ նարդի, իսկ սէրի գործում
գերազանցում էի մինչև իսկ սուլթանին: Սրտով խարդախ,
ականջով գիւրահաւան. ձեռքերս՝ արիւնալից. ծուլութեան
մէջ խոզ, գողութեան մէջ՝ աղուէս, անյագութեան մէջ՝ գայլ
կատաղութեան մէջ՝ շուն, կողոպտելու մէջ՝ առիւծ:—Նայիր,
որ կների կօշիկին ճռճռոցը, մետաքսէ շորերին խշխոցը խեղձ
սիրուդ չգերեն: Ոտքդ հեռի պահիր բոզատուններից, ձեռքդ՝
կնի գոգնոցից, զրիչգ՝ վաշխառուներից, և չար ոգուն մի հա-
ւատար:—Յուրտ քամին շարունակ վչում է մացառի մէջից.
նա հնչում է, մումմ . . . զումի, հեշյ, իշյ, ժառանգս, որ-
դիս, արդաս, թողար, թող տուր նրան անցնի¹⁾: (Մը բարեկանութ էլլ է):

¹⁾ Մի հին երգի կոսոր է:

Լ.Ի.Բ

Լաւ էր հողը մտնեիր, քան թէ այդ մերկ անդամներովդ
երկնքի այս զայրոյթին դէմ կանգնեիր: Մարդն, ինչ որ կայ՝
այսքան է միայն: Լաւ նկատենք նրան:—Դուն ոչ մետաքս
շերասից ես առել ոչ մորթ՝ վայրի գաղաններից, ոչ բուրդ՝
ոչխարից և ոչ մուշկ՝ այծեամից: (Յոյց դալով Ալենային և խեղ-
իստակնեն): Եհան, այստեղ մենք երկքս կեղծ ենք. դու՛ բուն ա-
րարածն ես: Զպճնուած մարդն ուրիշ ոչինչ է, բայց թէ մի
խեղծ, մերկ, երկոտանի անասուն, ինչպէս դուն ես:—Ճեռո՛ւ,
վերադիր առարկաներ—հանուեցէք վերայիցու: (Ճանդէլյա-
նուածում է):

ԽԵՂ.ԿԵՏԱԿ

Քեռի ջան, դադարիր ինդրեմ, այս՝ լրդ տալու դիշեր
չէ: Եյս վայրի տեղում մի փոքրիկ հուրը կնմանիր անառակ
ծերի սրտին—մի թեթև կայծ, մնացած մարմինը սառած:
Եյ, տեսէք, մի թափառական հուր մօտենում է մեզ:

Լ.Ի.Գ.Ե.Բ

Օ՛, դա Փլեբբէրաջերբէտն է, չար դեր. նա շրջում է
կրակվառից մինչեւ ագլօրախօսը. նա է, որ աչքի լրւսունցք է
բերում, շիլ է դարձնում, ապականում է խմորն, աշխարհի
խեղծ որդուն շարչարում է:

Երեք անդամ սուրբ Արտոնդ անապատներ շրջեցաւ,

Ինն ընկերով մի դե զըտաւ:

Ճրամայեց դեմն,

Որ մըանի դետին:

Երրան կապեց երդումով:—

Կորիր, դե, կորիր շուտով:

Կ.Ե.Տ.Տ

Ի՞նչպէս էք, տէր իմ:

(ԳԼ.ՊՈՍՏԵՐ մէ ջահով ներ է ճանածում):

Լ.Ի.Բ

Ո՞վ է այս մարդն:

Կ.Ե.Տ.Տ

Եյդ հով է, ում էք փնտում:

ԳԼ.ՊՈՍՏԵՐ

Ո՞վ էք դուք. անուններդ ի՞նչ է:

Լ.Ի.Գ.Ե.Բ

Եղքատ Տոմը, որ ուտում է գորտ, շերեփ, սողուններ,
խլուրդ ու մողէններ: Նա, որ կատաղութեան ժամանակ, երբ
չար դեր հալածում է նրան՝ իրեւ աղցան ուտում է կովի
կու, քաւթար մուկ և սատկած շուն, և խմում է կանգնած
ճախինների վերայի կանաչ կապերար: Նա իջեանից իջեան
մտրակի հարուածներ է ուտում: Նա կապանքի մէջ է, պատ-
ժուած է, բանտարկուած: Նա որ երեք վերարկու ուներ ու-
սին, վեց շապիկ կոնակին, ձին իւր տակը և սուրը կողքին՝

Եյժմ մուկ ու խրլուրդ և նրման կենդանիներ

Եղքատ Տոմն ուտում է եօթն երկար տարուց ի վեր:

Օգոյշ կաց ինձ հալածողից:—Լոիր, Ամոլկին, լրիր,
շար թշնամի:

ԳԼ.ՊՈՍՏԵՐ

Ի՞նչ ձեր մեծութիւնը սոցա դտաւ իւր ընկեր:

Լ.Ի.Գ.Ե.Բ

Խաւարի իշխանն աղնըրւական է:

Նորա անունն է Մողոյ և Մահու:

ԳԼ.ՊՈՍՏԵՐ (Լէտն):

Մեր մարմինն ւարիւնն այնչափ վատացան,

Որ ծընողներին այժմ անարգում են:

Լ.Ի.Գ.Ե.Բ

Եղքատ Տոմը միտում է¹⁾:

1) Ես կարծում եմ, թէ երբ Գլ.Պոստէր ներս է մօնում՝ Եղքար վախենալով, որ
նորանից չանաշուր սկսում է ամենախենթ բաներ դուրս տալ որպէս զի Գլ.Պոստէր
նրան խենթ կարծելով՝ վերան ուշադրութիւն չդարձնե: Բայց երեւ Գլ.Պոստէր նորա
ձայնից կամ գէմբից մի բան զգաց, որ մնազդմամբ կրկին անդամ Եղքարի մասին յի-
շատակութիւն է անում այստեղ: Համեմատել Դ. Ծրարուած Ա. Տեսարան:

ԳԼՈՒԾԼՅ (ԼԵՅԻ):

Գընանք միասին: Պարտքս ինձ չէ թողնում
Լըսել զըստրերիդ անգութ հրամանին:
Թող նէրանք սաստեն զըսները փակել
Եւ ձեղ թողնել զոհ այս սև զիշերին:
Ես վըստահացայ ձեր ետե գալու՝
Որ ձեղ տանեմ տուն, ուրտեղ պատրաստ են
Ճուր և կերակուր:

Լ.Ի.Բ

Թող նախ հարցնեմ այս

Փիլիսոփային:—(ԼԵՐԴԱՐԵՒ) Ի՞նչ է որոտման
Պատճառը:

ԱԼՇԱՏ

Բարի արքայ, լըսեցէք

Սորա հրաւերին, տուն գնացէք:

Լ.Ի.Բ

ՄԻ ԽՈՍՔ

Եյս թերայեցի ուսումնականին:—(ԼԵՐԴԱՐԵՒ)
Ի՞նչ ուսում ունիս:

Լ.Գ.Գ.Ա.Բ

Դեհալածութիւն

Ճըճեջարդութիւն:

Լ.Ի.Բ

Թողէք մի գաղտնի

Ճարցմունք անել ձեզ:

ԱԼՇԱՏ (ԳԱՅՆԱՐԵՒ):

Տէր, նըրան կըսկին

Ստիպեցէք. խելքը խառնուիլ է սկըսում:

ԳԼՈՒԾԼՅ

Արող ես նըրան մեղաղբել: Պըստրերն
Եւր մահն են ուղում: Ա՛շ, բարի ԱՀՆԱՐ—

Եա ձիշտ էր ասում, խեղճ աքսորականն:

Ասում ես, արքայն կորցնում է խելքը:

Ես էլ բարեկամ, համարեա խենթ եմ:

Ես էլ մի որդի ունէի, որին

Երժմ ուրանում եմ.—կեանքիս դաւ դըրեց

Եա այս մօտ օրերս: Ես նըրան սիրում

Եշ. ոչ մի հայր այնպէս չէ սիրել

Եւր որդուն: Ուղիղն ասելով կըսկիծն

Խելքըս պըղտորեց: (ՎՐԵՒԸ ՀԱՐՄՆԱԿԱՆ-Է) :—ԻՆչպիսի

Գիշեր:—(ԼԵՅԻ)

Աղաջում եմ ձեղ արքայ ...

Լ.Ի.Բ

Եերեցէք

Բարեկամ:—(ԼԵՐԴԱՐԵՒ) Գընանք, մեծ փիլիսոփայ:

Լ.Գ.Գ.Ա.Բ

Տոմ միսում է:

ԳԼՈՒԾԼՅ (ԼԵՐԴԱՐԵՒ):

Բարեկամ, հիւղըդ մըտիր, տաքացիր:

Լ.Ի.Բ

Մանենց ամենքս էլ: (Ո-Չ-Ե-Յ է ԼԵՐԴԱՐԵՒ հետ հիւղ ճանել):

ԱԼՇԱՏ

Եյս կողմը, միլորդ:

Լ.Ի.Բ

Ոչ այստեղ ես միշտ ուղում եմ մընալ
Փիլիսոփայիս մօտ:

ԱԼՇԱՏ (ԳԱՅՆԱՐԵՒ):

Տէր, հաճեցէք,

Որ զայ այդ մարդն էլ:

ԳԼՈՒԾԼՅ (ԼԵՅԻ):

Առէք նըրան էլ:

ԱՅՆ ՏՏ (ԵՐԵՎԱՐԻ):
ԳԵՂՆԱԿ, բարեկամ, մեղ հետ եկ:

ԼԻՌ

ԳԵՂՆԱԿ,

ԻՄ աթենացի:

ԳԵՂՈՍՏԵՐ
ԵՐԺՄ լուռ կացէք:

ԼՅԴՎԱՐ

Ասվալ'դ մանկաւիկն մութ աշտարակին
Մօտեցաւ, կանչել ըսկըսեց թիւ, փահ,
Փուհ. անդլիական արիւն է հոտում: (Պատահ Են)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Մի սենեակ ԳԵՂՈՍՏԵՐԻ ամրոցում:
ԿՈՐՎԱՐ, և ԷԹՄՈՒԽ ներս են մտնում:

ԿՈՐՎԱՐ

Յառաջ քան թէ իւր տունը թողնելս՝ ուղում եմ
վրէժս առնել:

ԼՅԴՎԱՐ

Միլորդ, երբ մտածում եմ, թէ ինձ կարող են պարսա-
ւել որ հաւատարմութեանս զոհեցի բնութիւնը՝ սարսա-
փում եմ:

ԿՈՐՎԱՐ

ԵՐԺՄ ես տեսնում եմ, որ եղբայրդ ոչ միայն իւր չա-
րութիւնից հօր մահն էր ինդրում, այլ և նրան այս գործե-
լու դրդեց հօրդ պատժապարտ ցածահոգութիւնն:

ԼՅԴՎԱՐ

Որչափ սոսկալի է իմ վեճակս, որ ստիպուած եմ զղալ
արդար լինելուս վերայ:—Եհա այն նամակն, որի մասին խօ-

սեցաւ, որը ապացոյց է, թէ նա գաղղիական կուսակցութեան
համամիտ է: Ո՞վ երկինք: Եթէ այս գաւաճանութիւնը տե-
ղիք չունենար, կամ յայտնողը՝ ես չլինէի:

ԿՈՐՎԱՐ

ԳԵՂՆԱԿ միասին դքսուհուն մօտ:

ԼՅԴՎԱՐ

Եթէ սորա բովանդակութիւնը ճշմարիտ է՝ շատ գոր-
ծեր ունիք տեսնելու:

ԿՈՐՎԱՐ

Սուտ կամ ճշմարիտ՝ սակայն նա քեզ ԳԵՂՈՍՏԵՐԻ կոմն
շինեց: Եմացիր, թէ որտեղ է հայրդ, որ կարողանանք նը-
րան բռնել:

ԼՅԴՎԱՐ (ԵՐԵՎԱՐԻ):

Եթէ նրան թագաւորին մօտ գտնեմ՝ կասկածն աւելի
կմեծանայ: (Բարձր) Ես կշարունակեմ ձեղ հաւատարիմ մը-
նալ որչափ էլ բուռն լինի կոիւը պարտքի և բնութեան մէջ:

ԿՈՐՎԱՐ

Քեզ ընծայում եմ բոլոր վստահութիւնս: Իմ սէրիս մէջ
մի լաւագոյն հայր կգտնեմ: (Պատահ Են):

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԳԵՂՈՍՏԵՐԻ ամրոցին մօտ ագարակի սենեակ:

ԳԵՂՈՍՏԵՐ, ԼԻՐ, ԿԵՆՏ, ԽԵՂԻԱՏԱՐ և ԷԹԳԱՐ ներս են մտնում:

ԳԵՂՈՍՏԵՐ

Լաւ է այստեղ, քան բաց օդին մէջ: Միլով ընդունե-
ցէք, որչափ ձեռքիցն գայ՝ կաշխատիմ լաւացնել այստեղ ձեր
դրութիւնը: Ըստով կվերադառնամ:

ԱՅՆ

Նորա հոգու բոլոր զօրութիւններն տեղի տուին յուսա-

Հատութեան. թող աստուածները վարձատրեն ձեր բարեսըրտութիւնը:
(Պէտքառէր գնում է):

ԵՐԳԱՅԻ

Փրատէրէտաց ինձ կանչում է և ասում է, թէ Ներոն խաւարի լջում ձուկ է որսում: (ԽԵՂԱՄԱԿԻՒՆ) Աղօթք արա, անմեղ¹⁾), և չար թշնամուց զգոյշ կացիր:

ԽԵՂԱԿԱՏԱԿ (Լ.Է.Բ.):

Քեռի ջան, ասա ինձ, յիմարն աղնուական է թէ ռամիկ:

Լ.Բ.Բ

Թագաւոր է, թագաւոր:

ԽԵՂԱԿԱՏԱԿ

Ու մի ռամիկ է, որ աղնուական որդի ունի: Վասն զի յիմար է այն ռամիկը, որ իւր որդուն իրանից յառաջ աղնուական դարձած է տեսնում:

Լ.Բ.Բ

Հազար ատրաշէկ շամփուր պէտք են ինձ,
Որ շըչան, խըրին նէրանց մարմիններն:

ԵՐԳԱՅԻ

Զար դեր կրծոտում է կոնակ:

ԽԵՂԱԿԱՏԱԿ

Յիմար է նա, որ հաւատում է ընտելացած գայլե հեղութեան, ձիի առողջութեան, տղայի բարեկամութեան և պոռնկի երդումին:

Լ.Բ.Բ

Աղջուած է. նէրանց դատի կը կանչեմ: (Լ.Է.Բ.Բ.):
Դու այստեղ նըստիր, ուսեալ դատաւոր,
Դակ դուն, իմաստուն, այստեղ:—Դէ, յառաջ,
Դուք, քած աղուէսներ:

¹⁾ Խեղատակներին կոչում էին նաև անմեղ, ինչպէս վկայումն Ստիլենսոն և Պէլոն:

ԵՐԳԱՅԻ

Նայեցէք, ինչպէս

Նա այդտեղ կանցնել վերաս է յառում
Վառվառ աչքելը:—Սիրունիկ տիկին,
Դատիդ ատե՛նն էլ սիրութում ես դու:
Ըէսսի, գեան անցիր, եկ ինձ մօտ:

ԽԵՂԱԿԱՏԱԿ

Նէրա մակոյկը ծակ ունի տակում,
Դայց քեղ ասել նէ չէ ուղում,
Թէ ինչու չէ գալիս քո մօտ:

ԵՐԳԱՅԻ

Զար թշնամին աղքատ Տոմին հալածում է սոխակի ձայնով: Հոպէկնս Տոմի փորից գոռում է, որ երկու Ճերմակ ձուկ տամ: Մի՛ կռնչեր, այ սե հրեշտակ, քեղ համար ես կուր շունիմ:

ԱԼՅԱՏ

Այժմ ինչպէս էք, տէր:—Մի նայիք այդպէս
Ապուշ: Ուղում էք պառկիլ և հանգչել
Այս բարձերին վրայ:

Լ.Բ.Բ

Նախ դատը տեսնեմ:

Ըերէք վըկաներն: (Լ.Է.Բ.Բ.) Դու, դատաւորի
Վերարկու հագածդ, նըստիր տեղդ, (ԽԵՂԱՄԱԿԻՒՆ) և դու,
Որ արդարութեան մէջ գործակից ես
Նորան՝ իւր կողքին: (ԱԷԿԱՅԻՆ) Մասնաժողովի
Ննդամերից էք դուք: Նըստէք նոյնպէս:

ԵՐԳԱՅԻ

Պէտք է արդար դատաստան կըտել:—
Ուրախ հովիւ, արթոնւն ես, թէ քնել
Ոչխարիկդ արան է մըտել:
Ոիլուն բերանըդ մէկ անդամ թէ բանաս՝

Ոչսարիդ նորից դու յետ կըստանաս:
Փի՛ս, փի՛ս. կատուն գորշաղցն է:

Լ.Ի.Բ

Յառաջ սէրան գատեցէք: Աէ Գոնէրիլ'ն է: Եյս պատ-
կառելի հոմաժողովին առջև ևս երդումով վկայում եմ, որ
սէ խեղճ թագաւորին իւր հօրը դուրս արաւ:

ԽԵՂ.ԿԱՏԱԿ

Յառաջ եկէք, տիկին, ձեր անունը Գոնէրիլ' է:

Լ.Ի.Բ

Նէ չէ կարող այս ուրանալ:

ԽԵՂ.ԿԱՏԱԿ

Եկրեցէք, ևս ձեզ նստարան կարծեցի:

Լ.Ի.Բ

Իսկ միւսը՝ աշա: Իւր գաժան աչքերն
Երտայայտում են սրբան կազմուածքը:
Բըռնեցէք սէրան:— Օէ՛նք, զէ՛նք, սուր, կըռակ.
Դաւ-ինչու նէրան թոյլ արւիր փախչել
Խարդախ գատաւոր:

Լ.Դ.Գ.Ե.Բ

Պահպանէ՛ Եստուած

Հինդ ըղգայարանքդ:

ԿԵՂ.Ա.Տ

Ո՞վ կարեկցութիւն:—
Եյն համբերութիւնն ուր է այժմ, որով
Պարծենում էիք յաճախ՝ թէ ունիք:

Լ.Դ.Գ.Ե.Բ (Եռանչին):

Նորա պատճառով լըցվում են աչքերս,
Եշնպէս որ կարող է բացուիլ դիմակս:

Լ.Ի.Բ

Նոյեցէք, փոքրիկ շըներն էլ նոյնպէս—
Պայտառ, արի, չար—հաջում են վերաս:

Լ.Դ.Գ.Ե.Բ

Տոմ կամենումէ գլուխը նոցա առջեւ ձգել:— Դանւրս կո-
րիք, շնէր:

Թակ ձերմակ, թէ սեղունչ կոչուիս,
Թակ թունաւոր լինիս կըծելիս,
Թակ գամբո լինիս, քոթոտ, թէ որսկան,
Թակ ընթացիկ, թէ բարակ կամ թէ կըռուան,
Թակ ագիդ կըտրած և թէ կըլոր պոչ
Տոմ կըստիպէ ձեղի՝ բառնալ հաջ ու գոչ:
Հենց որ գլուխս ձրգեմ առջենին՝
Բոլորը մէկէն թողնեն կը փախչին:

Հօ, հօ. հի՛, հի՛: Գնանք տօնավաճառներն, շուկաներն
ու վաճառատուններն: Եղքատ Տոմ, եղջեւրդ չոր է¹⁾:

Լ.Ի.Բ

Եյժմ հոռեցանին ձեղքել:— Տեսէք, ի՞նչ է թխսել սրբ-
տին մէջ: Ասյ մի այնպիսի ոյժ բնութեան մէջ, որ այս տե-
սակ կոշտ սրտեր արտաբերէ: (Ետքարէն) Զեզ, պարոն, իմ
հարիւր ասպետներիս մէջ եմ ընդունում: Միայն ձեր հան-
գերձի ձեւն անախորժ է ինձ: Թակւս դուք կասէք, թէ Պարս-
կաստանի ձեւն է այս, բայց սակայն փոխեցէք:

ԿԵՂ.Ա.Տ

Եմ թագաւոր, պառկեցէք քնիցէք փոքր ինչ:

Լ.Ի.Բ (Պառկեցէք):

Ազմուկ մի՛ հանէք, ազմուկ մի՛ հանէք: Վարագոյնները
քաշեցէք. համ այդպէս, համ այդպէս: Վաղն առաւօտուն ընթ-
րիքի կնստինք: Եյդպէս, այդպէս:

ԽԵՂ.ԿԱՏԱԿ

Ես էլ ձաշին քնելու կդնամ:

(ԳԼՈՒՍԵՐ Ներ է ճանա-Ծ):

1) Եղջիւրն, ինչպէս նաև այժմ արևելքում գործածում էին իւղ կամ ջուր պա-
հելու համար:

ԳԼՈՒՍԵՐ

Մօտ եկ, բարեկամ, ուր է թագաւորն
Իմ տէրս:

ԱՅՆ

Նա այստեղ է, բայց մի դիպէք
Նորան—նա խելքը կորցրեց:

ԳԼՈՒՍԵՐ

Բարեկամ,

Գլոկիր նըրան: Ես հէնց նոր լըսեցի
Նորա կեանքին դէմ մի դաւազրութիւն:
Մի պատգարակ կայ պատրաստ. դի՛ր վերան
Եւ Դուվր ըշտապիր: Եյնտեղ կը գըտնես
Պաշտպան և պատիւ: Տէրիդ փախցրու.
Աէս ժամ ուշացար՝ էլ նա կենդանի
Զի մընալ, ոչ դուն և ոչ ոք նըրան
Պաշտպանողներից: Ճեռացիր, փախցրու
Եւ եկ համելցս, պաշար և արագ
Ուղեկիցներ տամ:

ԱՅՆ (Նայել նախառըն վէրայ):

Պարտասեալ բնութիւնն

Եհա թրմիցաւ: Կարող էր հանգիսան
Բալսան լինել խելքիդ վէրքերին,
Որ անբուժելի կը դառնան: եթէ
Օգնութեան չըգայ խաղաղ ժամանակն: (Խունկապակին)
Օգնիր ինձ տէրըդ տանելու: Պէտք չէ
Յետ մընաս դու:

ԳԼՈՒՍԵՐ

Ընտա, Ճանապարհ ընկնենք:

(ԿԷՆԾ, ԳԼՈՒՍԵՐ և ԽԵՂԱՏԱԿԸ Լիրին պահանձ վա):

ԵՐՎԱՐ (Մէջյան):

Երբ մեր մեծերը նոյն չարիքն են կրում
Մարդ չէ արքալնչայ էլ իւր ցաւերին:

Ով որ չարչարվում է մենակ՝ նորան
Շանր է չարչարանքն, որովհետեւ նա
Բաղդ, ուրախութիւն է տեսնում իւր շուրջն:
Բայց հոգին դիւրաւ յաղթում է ցաւին՝
Երբ գըմբաղդութիւնն ունի իւր ընկեր:
Ուրչափ իմ ցաւերս այժըմ դիւրատար,
Թակթե են թըւում, երբ նոյն բեռին տակ,
Որ թեքեց գըլուխս՝ թագաւորն ընկճուած
Եմ տեսնում: Թարշուառ է նա իբրև հայր,
Ես՝ իբրև որդի:—Գլնա ասկից, Տոմ,
Եյս մեծ անցքերին ուշագիր եղեր.
Եւ խարէական կարծիքն, որով դու
Պատապարտուել ես իբրև գաւաճան՝
Երբ քո զործերով փարատուի՝ և քո
Պատիւդ նորոգուի՝ ապա քեզ յայտնիր:
Թողլ ինչ ուղում է պատահի դիշերս,
Միայն թէ արքայն աղատիր: Տեսնե՞նք: (Պահանձ է):

ԵՐԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԳԼՈՒՍԵՐԻ ամրոցում մի սենեակ:

ԿՈՐՆԱՐ, ՀԹԵԳԱՆ, ԳՈՆՔԻՐԸ, ԷՊՄՈՒՆԴ և ՖԱԹԱՆԵՐ ներս են մտնում:
ԿՈՐՆԱՐ (Գանձելեն):

Ըուտով գարձէք ձեր ամուսնին մօտ. ցցց տուէք նորան
այս նամակն: Պաղզիական բանակն եղերքն է ելել: (Օպասա-
նէրին) Պաէք այն ստահակ ՊԼՈՒՍԵՐԻն: (Մի ժամանելը
դուրս են ենում):

ՀՈՎԵԳԱՆ

Եյս բոպէիս նրան կախել տուր:

ԳՈՒՆԵՐԻՆ

Նորա աչքերը հանեցէք:

ԿՈՄՆԱՎԱԼ

Եյդ թողէք իմ բարկութեանս:— Եզմունդ, մեր քոյրին
ուղեցեցէք: Զեր ներկայութիւնն անյարմար է՝ երբ մենք
վրէժինդիր կլնինք դաւաճան հօրիցդ: Գաքսին, որի մօտ էք
գնում՝ համոզեցէք, որ կարելի եղածին չափ շուտով պատ-
րաստուի: Մենք էլ նոյնն անելու կիութանք: Մեր արագ
ու ձարտար սուրհանդակներն մեր մէջ գործը կկարգադրեն:
Գնաք բարով, սիրելի քոյր, գնաք բարով, Գլոստէրի կոմս:

(ՈՍՎԱԼԴ նէր է մանում):

Ի՞նչ ուր է արքայն:

ՈՍՎԱԼԴ

Գլոստէրի կոմսը

Նրան այստեղց հեռացրեց: Գրանը
Հետը միացան երեսուն և հինգ
Ամամ վեց ասպետներ, որ փընտում էին
Նրան, և բոլորն կոմսի մի քանի
Եւատներին հիտ ուղի ընկան Գուլիր,
Ուրտեղ—պարծենում էին նոքա—կրգըտնեն
Լաւ զինաւորուած բարեկամներին:

ԿՈՄՆԱՎԱԼ

Զիեր պատրաստիր տիկինիդ համար:

ԳՈՄՆԵՐԻ

Մընաք բարով դուքս սիրելի և քոյր:

ԿՈՄՆԱՎԱԼ

Գնաք բարով, Եզմունդ:

(ԳՈՆԵՐԻ, ԷԴՍՈՒՆԴ, ՈՍՎԱԼԴ գնում էն:— ՕԱԿԱՆԵՐԻն)

Փընտուցէք խարդախ

Գլոստէրին, ինչպէս մի գող կապեցէք
Եւ բերէք այստեղ: (Մի անձ ծառաներ գնում էն):
Թէպէտ իրաւունք
Չունինք ձեռք զարնել կեանքին, դատաստան
Չարած սակայն մեր իշխանութիւնը

Կըղեջանի մեր բարկութեան. թէպէտ

Պարսաւեն էլ այս սակայն չեն կարող

Մեզ արգելք լինել:

(ՃԱՌԱՆԵՐԸ նէր էն մանում ԳԼՈՍՏԵՐԻ հէտ):

Ո՞վ է դա. մատնի չեն:

ՀՈՆԵԳԱԼ

Եյր, ապերախտ աղուենն:

ԿՈՄՆԱՎԱԼ

Գօսացած

Զիոքերը շուտով կապեցէք:

ԳԼՈՍՏԵՐ

Միլորդ,

Ի՞նչ է ձեր դիտումն: Իմ բարեկամներս,

Խորհեցէք, որ ինձ հիւր էք: Անպատիւ-

Խաղ մի խաղաք վըսս, իմ բարեկամներ:

ԿՈՄՆԱՎԱԼ

Ապեցէք նրան, ասում եմ: (ՕԱԿԱՆԵՐԸ իսպում էն):

ՀՈՆԵԳԱԼ, (ՕԱԿԱՆԵՐԻն):

Պիշող, պիշող:— (Գլուխութին):

Դու, ցած դաւաճան:

ԳԼՈՍՏԵՐ

Անգութ կին, երեք

Ես դաւաճան չեմ:

ԿՈՄՆԱՎԱԼ

Եյստեղ աթոռին

Եշա: Եպիրախ, դու փորձը կառնես:

(ՅՈՒԳԱՆ նոր ճօրութը իւպում էն):

ԳԼՈՍՏԵՐ

Վըկայ աստուածներն, սա մի հրէշային

Վարմունք է՝ այսպէս մօրուքը փետել:

ՀՈՆԵԳԱԼ

Որ թէպէտ սպիտակ՝ բայց նինդաւոր է:

ԳԼՈՒԽԵՐ

Ենօրէն կին, այս մաղն՝ որ ծընօտիցս
Փետում ես՝ մէկ օր կեանք կառնէ քեզ դէմ
Եմբաստաննելու: Ես քո տանուտէրն
Եմ, քեզ չէ արժան աւարող ձեռքովդ
Եմ ասպինջական երեսս կողոպտել: (Առնևանդն)
Չիր ուզածն ի՞նչ է:

ԿՈՐՆՎԱԾԱ

Ի՞նչ նամակներ են,
Որ Գաղղեայից առել էք նորերս:

ՀՈՒՅԱԾԱ

Եղատ ասացէք. մէնք դիտենք բոլորն:

ԿՈՐՆՎԱԾԱ

Եւ որպիսի կապ ունեցել էք այն
Մատնիչներին հետ, որ մէր տէրութիւնն
Են մըտել նորերս:

ՀՈՒՅԱԾԱ

Եւ որի՞ ձեռքը
Յանձնեցիք դըժուած թագաւորն. ասէք:

ԳԼՈՒԽԵՐ

Ես մի գրութիւն ըստացայ—ամբողջ
Ենթագրութիւններ—մի չեղոք հոգուց,
Ու թէ թըշնամու կուսակցութիւնից:

ԿՈՐՆՎԱԾԱ

Կեղծիք:

ՀՈՒՅԱԾԱ

Մըտում ես:

ԿՈՐՆՎԱԾԱ

Ուր յուղարկեցիր:

Թագաւորին:

ԳԼՈՒԽԵՐ

Դուկ:

ՀՈՒՅԱԾԱ

Խնչու համար Դուկ:

Քեզ ըսպառնալով չըպատուիրեցի՞նք ...

ԿՈՐՆՎԱԾԱ

Խնչու համար Դուկ: (Հաւետանին) Թող նախ այս ասէ:

ԳԼՈՒԽԵՐ

Կապուած լինելով այսպէս՝ հարկ է որ

Յարձակմունք կըրեմ:

ՀՈՒՅԱԾԱ

Խնչու համար Դուկ:

ԳԼՈՒԽԵՐ

Վասըն զի չի ուզում տեսնել որ

Ենողորմ ճանկերդ աչքերը փորմն.

Կամ որ վայրենի քըրդ իւր ժանիքներն

Նորա նուիրական մարմինը մըխէ:—

Եյնպիսի մըրի կն, որ այն դժոխային

Գիշերն զըլլսարաց նա անցուց ... ծովը

Ուզում էր ուսիլ և աստղերի լոյսն

Ողողել իսկ նա—խեղճ սիրտ—երկրներին՝

Երտասուքներովն օգնում էր: Եթէ

Գայլը քո զըրանդ ոռնար՝ կասէիր

Դու զըռնապանիդ. «զընա զուռը բաց»:

Շոլոր կատաղիքն սարսափից ընկճել

Եին:—Շայց մի օր ես վրէժխնդրութիւնն

Կը տեսնեմ ձեզ պէս զաւակներին վրայ

Թափելիս:

ԿՈՐՆՎԱԾԱ

Դու այդ երբեք չես տեսնի: (Օմասաներին)

Եմուր բըռնեցէք աթոռն:—Ես իմ ոտքս

Եչքերիդ վերայ կը զընեմ:

(Գլուխէրին բւնաւում են և Առնևանդն նորա մի աղջու համարձէն):

ԳԼՈՒԽԵՐ

ՈՎՎՈՒՐ

Ուղում է ապրիլ մինչև ծերութիւն
Տեսնէ թող օգնէ ինձ:—ՈՎՎՈՒՐ անգութներ,
ՈՎՎՈՒՐ երկինք:

ՀՈՒԳՎԱՆ

Մի կողմն կը խընդայ միւսին
Աւերայ: Եյն մէ ին էլ:

ԿՈՒՆԱՎԱՆ

Դու վրէժիւրնդրութիւն

Եյժը կը տեսնեա:

ՄԻ ԾԱՌԱՅՅ (Կողնչալին):

Գաղարեցէք, տէր:

Զեղ ծառայել եմ իմ մանկութիւնից.
Բայց ամենամեծ իմ ծառայութիւնս
Եյս է, որ խնդրում եմ ձեղ դադարիլ:

ՀՈՒԳՎԱՆ

Եյս ինչ ասել է, այ շուն:

ԾԱՌԱՅՅ

Եթէ դուք

Մօրուք կրտէիք՝ ներկայ դէպքում այն
Ես կը փետէի: Ի՞նչ է ձեր ուղածն:

ԿՈՒՆԱՎԱՆ (Սուրբ Քաջլուկ):

Ենպիտան դու:

ԾԱՌԱՅՅ

Լաւ, յառաջ եկէք և

Կատաղութեան համն առէք:
(Սուրբ հանուճ է. իւղուճ էն. դուրսական կանուճ է):

ՀՈՒԳՎԱՆ (Մէկ սուրբ ժամանակ):

Սուրբ ինձ տուր:

Գեղջուկն յանդրանի՝ այսպան:
(Սուրբ իւղուճ է և նրան զարդուճ էստեց):

ԾԱՌԱՅՅ

ՈՎՎՈՒՐ

Ինձ: Տէր, դեռ ունիք մի աչք, որ տեսնէք
Չեր վրէժիւրնդրութիւնն: ՕՇՀ... (Մէրանուճ է):

ԿՈՒՆԱՎԱՆ

Ել չե տեսնի:

(Երկրորդ աղջ էլ հանուճ է):

Դուրս, վատ սառնորակ. ուր է արդ քո փայլդ:

ԳԼՈՒԽԵՐ

Շուրջս անյուսութիւն, խաւար է բոլորն:

Ուր է իմ որդիս, Եղմունդ: Բորբոքիր

Միջումդ բընութեան բոլոր հուրն, Եղմունդ,

Եւ այս եղեսին հատուցում արա:

ՀՈՒԳՎԱՆ

Մասնիչ ապիրատ, դու քո թըշնամուն

Ես կանցում նա էր, որ մեզ բացազրեց

Գաւաճանութիւնդ: Նա շատ բարի է,

Որ կարեկցութիւն ունենայ վերադ:

ԳԼՈՒԽԵՐ

Ամպ ինձ անմըտիս: Ենարդարութիւն

Երի Եղգարին: Գըթած աստուածներ,

Ներկայէք դուք ինձ, օրհնեցէք նըրան:

ՀՈՒԳՎԱՆ (Ծառանելին):

Դուրս ձրդէք սըրան. թող հոսոտելով

Դուրի ձանապարհն զըտնէ: (Կողնչալին) Ի՞նչ եղաւ

Զեղ, իմ ամուսինս, այդպէս փոխուեցաք:

ԿՈՒՆԱՎԱՆ

Այրաւորուած եմ: Ետեիցս եկէք,

Տիկին: (Յոյց պալով Գլուխուճին): Դուրս ձրդէք այս կոյր

ապիրատն:

(Յոյց պալով ժամանակ դին): Դրան էլ կուին մէջ:—Երիւնս

յորդահոս

Գընումէ, Հուեգան: Ենյարմար ատեն

Ըստացայ այս վերքն: Տըւէք ինձ ձեր ձեռքն:
(Գնում է ժամանել յեւ+ին յեւած: «Օաւաները
թու իուշը դուրս էն առաջնորդում Գլուխեւն»):

Ե. ԾԱՌԱՅ

Ես ինչ մեղք գործելս էլ չեմ նայիր, երբ
Եյս մարդն յաջողի:

Ի. ԾԱՌԱՅ

Եթէ ծերութեամբ

Մեռնի այդ կինը՝ բոլոր կըները
Նըրէշ կը դառնան:

Ա. ԾԱՌԱՅ

Գընանք ծեր կոմնի

Ետեից: «Նորան առաջնորդ գըտնենք
Բէդլամի աղքատն: «Նա յանձ կառնէ այս:

Ի. ԾԱՌԱՅ

Դու գնա: Ես ձուի ձերմըկուց և շոր
Գըտնեմ արիւնոտ աչքերին համար:—
Երկի՞նք, դուն օգնիր նորա վիճակին:
(Եւանչին ճանապարհներով գնում էն):

ԶՈՐՌՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Դաշտ:

ի՞թիլլ ներս է մտնում:

Ե. ԾԱՌԱՅ

Լաւ է անարգուիլ այսպէս անծանօթ¹⁾),

1) Ոմանք կարդում են, «լաւ է անարգուիլ ինքնազգացութեամբ» (Ճանաչումով) և հասկանում են, «լաւ է անարգուիլ ինչպէս ես, և գիտնալ, թէ անարգվում են, քան թէ միշտ շողաբարթութիւն տեսնել նոցանից, որոնք սրտում մեզ արհամարհում են:

Քան միշտ անարգուիլ ու շողաբարթութիւն
Յըսով է ապրում և ոչ երկիւղով
Իազդի խիստ ստոր և ամենախեղճ
Երարածն էլ Պատ փոփոխութիւնը
Իազդաւորներին միայն է գալիս.
Թըշուառը գըտնում է ուրախութիւն
Միայն: Իարով գաս ուրեմն, անմարմին
Օդ, որ զըրկում եմ: Եյն խեղճը, որին
Ենդունդ զըրեցիր՝ փոթորիկներիդ
Հետ էլ գործ չունի:— Բայց ով է գալիս:—
(ԳՈՍՏԵՐ ներ է գալիս և ծերուինից առաջնորդուած):

Իմ հայրս այս կերպով առաջնորդուած: Ո՞վ
Եշխարհ, ով աշխարհ, եթէ արևորագին
Փոփոխութիւններն մեզի չըստիպին
Վեղանից գարշել՝ կեանքը տարիքից
Երբէք չե ընկճուիր:

ԾԵՐՈՒՄՆԻ

Ո՞վ իմ բարի տէր, ութսուն աւրի է աւատառու եմ
Ճեղ և ձեր հօրն:

Գ. ԾԱՌԵՐ

Գընա ճանապարհ,
Ճեռացիր, բարի իմ բարեկամն. ի՞նձ
Օգուտ չունի քո այդ օգնութիւնդ. քեզ
Կարող է վընաս ունենալ:

ԾԵՐՈՒՄՆԻ

Բայց դուք
Չեք կարող աեսնել ձեր ճանապարհը:

Գ. ԾԱՌԵՐ

Ես էլ ճանապարհ չունիմ: ի՞նձ պէտք չեն
Եւքեք, ես ընկայ՝ մինչ տեսնում էի:
Յաճախ ըստացուածքն կործանում է մեզ.
Եւ զըրկանքը մեզ բարիք է բերում:—
Ո՞վ իմ սիրելի Եղդար, նըշտ ակ

Վո մոլորուած հօր ցասումին, եթէ
Եպրէի այնքան, որ շօշափումով
Դէթ քեզ տեսնէի՝ աչքերս նորից
Դըտայ» կասէի:

ՕԵԲՈՒՆԻ
Նը, ով կայ այդտեղը

ԵԴԳԱԾ (ԵՐԱԿՅԵՒ):

Եստուածնե՞ր, և ով կարող է ասել՝
Թէ սա—ծայրագյն չարիքն է.—աշա
Մի չարիք, որ գեռ տեսած չէի ես:

ՕԵԲՈՒՆԻ

Խենթ Տոմ աղքատն է:

ԵԴԳԱԾ (ԵՐԱԿՅԵՒ):

Եւ քան այս չարը

Կարող է դալ ինձ: Օայրագյն չարիքն
Դեռ ևս եկած չէ, երբ մարդ կարող է
Սահել թէ աշա ծայրագյն չարիքն:

ՕԵԲՈՒՆԻ

Շնկեր, որ կողմն ես գնում:

ԳԼՈՒԾԵՐ

Մուրացկան է:

ՕԵԲՈՒՆԻ

Խենթ և մուրացկան է միանդամայն:

ԳԼՈՒԾԵՐ

Բայց այնչափ խենթ չէ: Հաց է մուրանում—
Դեռ երէկ գիշեր մըրբիկն տեսայ
Սոցանից մէկն, որին մէջ մարդն ինձ
Մի որդ երկեցաւ: Եյնտեղ միաքս եկաւ
Ուղիս, թէպէտ դեռ սիրս հաշտ չեր իւր հետ:
Նորանից յետոյ շատ բաներ տեսայ:
Մենք աստուածներին մօտ նոյնն ենք, ինչ որ

Պարապ տըղային մօտ ձանձր. նոքա
Մեղ ըսպանում են զուարձութեան համար:

ԵԴԳԱԾ (ԵՐԱԿՅԵՒ):

Ի՞նչպէս անեմ ես:—Մի վատ արշեստ է
Խեղկատակ լինելն սրգին մօտ: Թէ քեզ
Վըշտայնում ես թէ նրան: (Բայց) Ողջոյն ձեզ տէր:

ԳԼՈՒԾԵՐ

Աս մերկ աղքատը չէ:

ՕԵԲՈՒՆԻ

Եյո, միլորդ:

ԳԼՈՒԾԵՐ

Խընդրում եմ ուրեմն, հեռացիր: Բայց թէ
Դու փափագ ունիս մի երկու մըլոն
Եյսեղեց հեռու Գուվրի ուղիում
Մեղ նորից հասնել—արա հին սէրիդ
Երբեկ յիշատակ—և բեր մի ծածկոց
Եյս մերկին համար, որին առաջնորդ
Ուղում եմ բըռնել:

ՕԵԲՈՒՆԻ

Բայց, տէր, նա խենթ է:

ԳԼՈՒԾԵՐ

Աս ժամանակի չարիքն է.—խենթերն
Եռաջնորդում են կոյրերին: Երա
Ինչ որ քեզ ասի. կամ մանաւանդ այն,
Ինչ որ ուղում ես: Բայց նախ և յառաջ
Գընա:

ՕԵԲՈՒՆԻ

Ես դորան լաւագյն հագուստս
Ալբերեմ յետոյ լինի՛, ինչ լինի: (Գնում է):

ԳԼՈՒԾԵՐ

Մօտ եկ, մերկ տըղայ:

ԵԳԳԱԲ

Խեղջ Տոմ մըսում է: (Առանցին):

Երկար չեմ կարող դիմանալ սորան:

ԳԼՈՒԾԵՐ

Մօսս եկ, բարեկամ:

ԵԳԳԱԲ (Առանցին):

Սակայն պէտք է այս: (Բարձր)

Աստուած լաւացնէ արիւնոտ աչքերդ:

ԳԼՈՒԾԵՐ

Դուվրի ձանապարհը գիտե՞ս:

ԵԳԳԱԲ

Թէ կառքինը, թէ հետեւակինը, կամուրջներն ու ցանկերը—բոլորը դիտեմ: Եղքատ Տոմը խելքը կորցրել է: Աստուած բարի մարդին չար ոգիներից ազատէ: Եղքատ Տոմի փորում հինգ չար գեւ են բնակում:—Որիդիկուդ—անառակութեան գեւը՝ ծորբիդիդէնս—համբերին իշխանը. Մահու—գողութեան գեւը. Մոգոյ—սպանութեան և Փիրելուցիպակէտնազկակելու և ծամածութեան գեւը, որ մի ժամանակից հետէ տիրում է սենեկապան կներին և աղախիններին մէջ: Բայց դու, տէր, օրհնեալ լինիս:

ԳԼՈՒԾԵՐ

Եռ այս քըսակը, գու, որին երկինքն
Եւր հարուածներով այսքան ընկճել է:
Եմ գըժբաղդութիւնս բազգաւոր կանէ
Վեզ:—Դուք աստուածներ, այսպէս արեք միշտ.
Բարիքներով զեղիս, ճոխացած մարդը,
Որ ոտնակոխում է ձեր պատուելներն,
Որ նրանց չէ տեսնում, զի չէ բզգացել—
Յանկարծ թող ըզգայ ձեր կարողութիւնն.
Եյս կերպով վերցվում է աւելորդը,
Բաժին լինելով, ամեն մարդ էլ կուշտ
Կը լինի:—Դիտե՞ս, Դուվրը:

ԵԳԳԱԲ

Գիտեմ, տէր:

ԳԼՈՒԾԵՐ

Եյտեղ կայ մի լեռ, որի զառիվայր
Եւ բարձր զագաթն սարսափով նայում
Եւ վար, դէպի ծովն: Նորա արտեանն
Ինձ հանիր: Եյտեղ քո թըշուառութիւնդ
Ես կըփարատեմ թանկագին բանով:
Եյտեղ՝ առաջնորդ այլ ևս ինձ պէտք չէ:

ԵԳԳԱԲ

Դէ, ձեռքըդ ինձ տուր: Տոմ քեզ կը տանի: (Պահաճէն):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԱԼՔԱՆԻ ՊՔՍԻ ԱՄՐՈԳԻՆ ԱՌՋԱ:

ԳՈՆԵԹԻ, ԷՊՄՈՒՆԻ Ներս են մտնում. ՈՍՎԱՌԻ նոցա դէմ է ելնում:
ԳՈՂԵԼԵՇԻ.

Ըարով եկաք, տէր: Օալմանում եմ որ
Իմ հեղ ամուսինս մեզի դէմ չեկաւ: (Ոալա՛՛՛՛՛)

Տէրդ նոր է:

ՈՍՎԱՌԻ

Տանն է. բայց բոլորովին
Փոխուած է, տիկին: Պաամում եմնորան
Թաէ թըշնամիներն եղելքն են ելեր.
Ես ծիծաղում է: Եսի, թէ գալիս
Եք գուք. «Եւելի վատ» պատասխանեց:
Երբ ԴԼՈՍԹԵՐԻ լաւն պատմեցի նորան
Եւ հաւատարիմ ծառայութիւնը
Որդուն՝ ինձ յիմար կոչեց, ասելով
Թաէ ես տեսել եմ գործի հակառակն:
Տըխելու բանը նորան հաճց է.
Ճաճելին՝ նորան ցաւ է պատճառում:

ԳՈՒՅԵՐԻՆ՝ (ԵՐԱՆԱԿԻՆ):

Եւ յառաջ մի գաք: Սա մի վատասիրտ
Սարսափն է հոգուն, որ արութիւնից
Զուրկ է: «Նա չեղդայ անարդանքն, եթէ
Նարկ է վրէժիլնդիր լինել նորանից:
Ինչ որ մենք ուղում մըտածում էինք՝
Կատարուիլ կարող է այն¹⁾: Յետ դարձէք,
Եղմունդ, եղբօրս մօտ փութացէք ժողվել
Զօրքերն և նոցա առաջնորդել: Ես
Նրկատում եմ, որ ինձ հարկ է փոխել
Զէնքերս, թէշեկը մարդիս ձեռքը տալ:
Եյս հաւատարիմ ծառայն կը լինի
Մեր սուրհանդակը: Եթէ յօդուտ ձեր
Երիանաք դուք՝ շուտով կը լրսէք
Սիրուհու կամքը: Զեր վերայ կրեցէք
Սա: (Մէ յէլլորակ առալին է): Մի խօսիք: Ցած բըռնե-
ցէք ձեր զլուխն²⁾): (ՀԱՅԻՆ-ԵՒ-Յ է):

Թէ համարձակիր խօսիլ այս համբոյրն՝
Կը բարձրացընէր ձեր հոգին մինչեւ
Եմպերն: Ճասկացէք ինձ:—Գընաք բարով:

ԵՐԱՆԱԿԻՆ

Ես ձերն եմ մինչեւ մաշուան շարքերում:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Ո՞ւ իմ սիրելի ՊԼՇԱՏԵՐ: (ԵՐԱՆԱԿ ՔՆԱ-Յ է) Ո՞ւ բչափ
մարդ

Տարբեր է լինում մարդից: Կընի սէրն
Քե՞զ է վայելում, իսկ իմ յիմար մարդն
Յափրշակում է անկողինս:

ԱԽՎԵԼԻ

Տիկին,

Աշա դուքսն: (ՊԿԱ-Յ է ԱՐԱՆԻ ՆԵՐ է ՀԲԱ-Յ):

¹⁾ Խօսք իւր մարդի—ԱՌԵԱՆԻ դքսի սպանութեան վերայ է:

²⁾ Որպէս զի Ուզաւդ չտեսնէ, ինչպէս կարծում են մեկիները:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Երբեմն ես մի սուլեչի

Երժանի էի¹⁾:

ԵԼՇԱՆԻ

Ո՞ւ Գոնէրիլ, դուք

Երժան չէք փոշուն, որ իսիստ քամին ձեր
Երեսն է լիցնում: Չեր խորհուրդներն ինձ
Զարհուրեցնում են: Եյն արարածն, որ
Եւր ծագումն ատում է ոչ մի սահման
Չունի նա իւր մէջ: Շիւղն, որ իւր կամքով
Անջատվում է իւր սընուցիչ բունից՝
Անդրաժիշտ է, որ նա թառամի և
Եպականութեան ծառայէ:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Ճերիկք.

Խենթի խօսքեր են:

ԵԼՇԱՆԻ

Երդարութիւնը

Եւ իմաստութիւնը վատին վատ են թվում:
Գարշելուն միայն գարշն է դուք գալիս:—
Կ՞նչ արիք դուք, դուք, վագրելու, ոչ դրսարիր,
Կ՞նչ արիք:—Մի հօր, բարի ծերունուն,
Որին կը լիզէր արջն ակնածելով՝
Խելքից հանեցիք, պիզջ բարբարուներ:
Կ՞նչպէս իմ եղբայրս, մէկ մարդ, մէկ իշխան,
Եյնչափ երախտիք նորանից զըստած՝
Սորան համբերեց: Ե՞հ, եթէ երկինքն
Եւր տեսանելի զօրութիւնն աշխարհ՝
Զյուղարկէ պատժել այս մեծ ոճիրը՝

1) Մի անգղեական առած կայ. «If is a poor dog, that is not worth the whistling». (Մի խեղ շուն է, որ սուլելու արժան չէ): Գոնէրիլ ակնարկելով այս առածին ուղումնէ ասել մի ժամանակ նէ մի շնի չափ գոնէ պատիւ ուներ ԱՌԵԱՆԻի մօտ, իսկ այժմ չունի:

Կըդայ ժամանակ, կըսկըսին մարդիկ
Պատառել միմեանց ինչպէս ծովի հրէշ:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Վախիկոս մարդ, այտեր ունի ապտակի
Համար, և գլուխ՝ անարգանքների,
Եսկ աչքեր չունի ճակատին, որով
Պատիւն ամօթից զանազանէ. որ
Զէ իմանում, թէ խենթերն են խըղջում
Մի չարագործի, որ մեղք դործելուց
Յառաջ է պատժվում: Ո՞ւր է քո թըմբուկդ.
Գաղղիան արդէն խարսխեց իւր դըրօշն
Մէր խաղաղ երկրում: Քեզ ըսպանում է
Յաղթականդ՝ հըպարտ սաղաւարտ դըրած:
Եսկ դու տան մէջ, ով առաքինի խենթ,
Նըստել ես հանդարտ, գոյում. «ախ, ինչու
Եյսպէս են անում»:

ԱԼՇՅԱՆԻ

Մէկ վերադ նայիր

Սատանայ: Դեի մէջ զաղիր պատկերն
Եյնչափ սոսկալի չէ, որչափ կնի մէջ:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

ԵՇ սընոտի խենթ:

ԱԼՇՅԱՆԻ

Գոյւ, ապականուած,

Խեղաթիւր ծընունդ արարած, ամօթ
Որ ձիւազի դէմք առնում ես ինքնին:
Եթէ ձեռքերիս արժան էր լըսել
Երիւնիս՝ նոքա միսդ ոսկորներիցդ
Քաղած կլինէն արդէն: Որչափ էլ
Դու լինիս, սակայն կընի կերպարանքդ
Պաշտպանում է քեզ:

ԱԼՇՅԱՆԻ
Սառւմ են, դուքսը

•Պաջութիւն չունի:—
(Մի ՍՈՒՐՅԱՆԴԱԿ ներս է հանում):

ԱԼՇՅԱՆԻ (Սուրբանդակին):
Կանչ նոր լուր ունիս:
ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻ

Տէր, իմ Առնվալի դուքսը մեռաւ: «Երան
Դուր ծառան սպանեց, երբ կամենում էր
Կանել երկրորդ աչքը Գլոստէրի:

ԱԼՇՅԱՆԻ
Գլոստէրի աչքելուն:

ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻ
Մի ծառայ, որին

Կան սընուցել էր՝ կարեկցութիւնից
Շարժուած՝ դէմ կեցաւ այս գործին և սուրն
Հանեց իւր հըգօր տէրի դէմ: իսկ սա
Սաստիկ բարկացած վրան յարձակեցաւ
Եւ հէնց նոյն տեղումն սպանեց. բայց յառաջ
Կնքն էլ մահացու մի վերք ըստացաւ,
Որ նըրան դըրից:

ԱԼՇՅԱՆԻ
Աա հաստատում է,

Թու դուք վերեն էք, արդար աստուածներ,
Որ փոյթ պատժում էք մեր ոմիններու:—
Խեղած Գլոստէր:—Երկրորդ աչքն էլ նա կորցրեց:

ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻ
Երկուքն էլ, տէր իմ: (Գանեւելն) Տիկին, այս նամակն,
Որ ձեր քոյրից է՝ շուտով պատասխան
Է՝ պահանջում:

ԱԼՇՅԱՆԻ (Սուրբանդակին):
Կան մասամբ հաջելի

Ե այս լուրն բայց նէ երբ այրիէ այժմ—
Եւ մօտն է Գըլոստէրս՝ զիւրաւ կարողէ
Բոլոր խորհուրդներս ատելի կեանքիս
Վերայ կործանել:—Բայց միւս կողմից էլ
Ընքան անհաջոյ լուր չէ¹⁾: (Սուրհանդանին) Գընումեմ
Կամակը կարգալ և պատասխանել: (Գնումէ):

ԱԼ. ԲԱՆԻ

Երբ հանում էին աչքն՝ հուր էր որդին:

ՍՈՒՐՃԱՆԴԱՆԻ

Զեր ամուսնի հետ այստեղ:

ԱԼ. ԲԱՆԻ

Եյստեղ չէ

Կա:

ՍՈՒՐՃԱՆԴԱՆԻ

Ոչ տէր իմ: նրան ևս հանդիպեցայ,
Որ յետ էր դառնում:

ԱԼ. ԲԱՆԻ

Նա դիտէր այս չար

Գործն:

ՍՈՒՐՃԱՆԴԱՆԻ

Եյո, տէր, նա ինքն ամբաստանեց
Հօրն և ամրոցից գընաց, որ վըրէմն
Վրձակ համարձակ կատարեն:

ԱԼ. ԲԱՆԻ

Գըլոստէր,

Ես կենդանի եմ, ևս կըվարձատրեմ
Հաւատարմութիւնդ արքային առջել:

1) Գոներիլի ծրագրին էր սպանել Ալեանիին, և Էդմունդին հետ պսակուիլ յետոյ թունաւորել նոյնպէս իւր քոյրին և Կորնվալին և տիրել բոլոր Անգլիային: Ուստի նէ մէկ կողմից ուրախ է, որ Կորնվալ՝ արդէն մէջ տեղից վերցուեցաւ և իւր գործը դիւրացաւ. միւս կողմից էլ, տեսնելով որ Հռեդան այժմ այրի է՝ կասկածում է թէ մի գուցէ նէ իւլէ Եգմունդին իւր ձեռքից:

Ես կառնեմ վըրէմն աչքերիու: (Սուրհանդանին) Գընանք
Ռարեկամ, բոլոր զիացածր ինձ պատմիր (Գնումէ):

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Գաղղիական բանակը Դուվրի մօտ:

Կլինջ և մի ԱՊԵՏ ներս են մտնում:

Կլինջ

Գաղղիայի թագաւորն ինչո՞ւ համար այսպէս գնաց-
պատճառը դիտէք¹⁾:

ԸՍՊԵՏ

Մի գործ թողել էր նա տէրութեան մէջ
Կիսատ, որ այստեղ իւր գալուց յետոյ
Մեծացաւ. այնչափ այս գործն պետութեան
Վըտանդէ ազգում և աչ՝ որ անձամբ
Իւր ներկայութիւնն կարեւոր եղաւ:

Կլինջ

Իսկ որին թողեց նա հրամանատար:

ԸՍՊԵՏ

Գաղղիոյ պարոն Լը-Գէռ մարածախտն:

Կլինջ

Թագուհուն վերայ թողեց ձեր նամակն
Տըլսլութեան նըշան:

ԸՍՊԵՏ

Եյո, տէր, նամակն

Իմ ներկայութեանս կարդաց նէ. երբեմն

1) Որովհետեւ Գաղղիայի թագաւորն ուրիշ գեր չունի տէսարանին մէջ՝ Շեկսպիր նրան ժեռացրել է խմբից, այս խօսակցութեան օգնութեամբ: (Տես նաև «Լիր թաւորի նախկին նիւթը», յառաջաբանին մէջ):

Երբեմն արտասուաց մի խոշոր կաթիլ
Գլորում էր նէրա քընքոյշ այտերից
Վար. ինձ թըւեցաւ, թէ տիրուհի է
Նէ վըշտին, որ իբր ապըստամբ՝ նէրան
Տիրել էր ուղում:

Ալշնչ

Ո՞չ, ուրեմն նէ

Յուղուած էր:

ԱՍՊԵՏ

Ասկայն ոչ մինչև զայրոյթ:
Համբերութիւնն և վիշտ մըրցում էին—
Մըն կրտայ նէրան աւելի չըքնար
Երտայայտութիւն:—Տեսէլ էք արեն
Լուսաւորելիս անձրեի միջով:
Նէրա ժըպիտն էլ խառն արտասուաց հետ
Սիրուն մայիսին էր նըման: Իւր այս
Շնորհալի ժըպիտն, խաղալով հասուն
Շըրժունքին վերայ՝ կարծես չէր գիտեր,
Ո՞վ ին աչքերի հիւրեն, որոնք վար
Գըրտում էին, ինչպէս մարդարիտ
Երկու գոհարից: Մի խօսքով, վիշտը
Մի գեղեցիկ բան կըլինէր, եթէ
Ամենքին էլ տար այնպէս շընորհը:

Ալշնչ

Նէ

Ոչինչ չըհարցրեց:

ԱՍՊԵՏ

Մէկ երկու անդամ

Հայր բառը կըրծքից ծանրը հառաջեց,
Որպէս թէ ճընշուած լինէր սիրտն: Գոչեց
Նէ «քըլեր», քըլեր, նախատիւնք կանանց
Քըլեր. Աէնատ, իմ հայր, քըլեր. ի՞նչ գիշերն,
Պըրիկի ատեն. հաւատք չըմնաց

Կարեկցութեան վրայ »: Եյստեղ սըրբազան
Տուրը երկնային աչքերիցն հոսեց,
Եւ թըրջեց նէրա հառաջանքն.—յանկարծ
Տեղեց գուրս թըրուաւ, որ մինակ ողբայ:

Ալշնչ

Սստղերն են, այս, վերևի աստղերն,
Որ վարում են մեր բաղդն, ապա թէ ոչ
Մի զցդ ծընողներ սերել չեն կարող
Եյսքան միմեանցից տարբեր զաւակներ:—
Յետոյ դուք հետը չըխօսեցաք:

ԱՍՊԵՏ

Ոչ

Ալշնչ

Երքայի գնալուց յառաջ պատահեց
Եյս:

ԱՍՊԵՏ

Ոչ, յետոյ:

Ալշնչ

Լաւ: Տառապեալ Լիրը
Քաղաքում է այժմ: Երբեմն երբ խելքը
Վերան է լինում՝ ըմբընում է, թէ
Խչու եկել ենք Դուվր, բայց մերժում է
Բացարձակապէս տեսնել իւր դըստրին:

ԱՍՊԵՏ

Ի՞նչ պատճառով, տէր:

Ալշնչ

Եննըւած՝ ամօթն

Եռել է նըրան: Խըստասըրտութիւնն,
Որով զըլացաւ նէրան օրհնութիւն,
Ճակատագիրին յանձնեց նէրա բաղդն,
Եւ իրաւունքներն արւեց գայլասիրտ
Քըլերին՝ սոքա ամենն այնպիսի

Թոյնով մաշում են հոգին՝ որ սաստիկ
Ամօթը նորան հեռի է պահում
Առդելեայից:

ԱՍՊԵՏ

Խեղջ մարդ:

ԿՀՆՏ

Առնվալի

Եւ Ալքանիի բանակին վերայ
Լուր ունի՞ք:

ԱՍՊԵՏ

Նոքա ճանապարհին են:

ԿՀՆՏ

Եկ, բարեկամ, քեզ մեր թագաւորին
Մօտ տանիմ: Նըրան յանձնում եմ խնամքիդ:
Մի զօրեղ պատճառ ինձ ըստիպում է
Մնալ առժամանակ ծածուկ: բայց հենց որ
Ինձ յայտնեմ՝ հարկաւ դու զըզջալու չես,
Որ ծանօթ ես հետս: Եկ, զընանք խընդիմ: (Գնում էն):

ԶՈՐՌՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

~~~~~

Դուվրի բանակում մի վրան:

ԿՈՐԵԼԱ, ՄԻ ԲԺԻՇԿ և ՄՊԱՆԵՐ ներս են մտնում:

ԿՈՐԵԼԱ.ԻՒ.

Եւաղ, նա ինքն է: Նոր տեսան նըրան  
Կատաղի, ինչպէս վայրենի ծովս, բարձր  
Չայնով երգելիս, զըլուխը շըքեղ  
Պըսակած անարդ անձխոտով և այլ  
Անպէտ խոտերով, որ ցորենին մշջ  
Բուսնում են—եղինձ, մեծ մարդարիկոն,

Մոլախինդ, կակաչ և որոմ: (Մէ ապայէ) Մի խումբ  
Օօրք յուղարկեցէք, խոտաւէտ դաշտելն  
Բոլոր քըննեցէք, և բերէք նըրան  
Մեր առջե: (Սպան գնում է:—Ըժինն)

Արուեստն կարող է դարձնել

Նորան իւր խելքը, որից զըրկուել է:

Ով որ բըժըշկէ նըրան՝ կըստանայ

Բոլոր իմ գանձերս:

ԲԺԻՇԿ

Թագուհի, գեռ կայ

Նըրան հանգիստն է հիւանդի խնամողն.

Նորան պէտք է քուն: իսկ քուն բերելու

Կան շատ միջոցներ, որոց զօրութեամբ՝

Փակվում են վըշտի աչքերն:

ԿՈՐԵԼԱ.ԻՒ.

Նըրաշքներ,

Եւ դուք բարերար ոյժեր, ծածկըւած

Երկի ծոցին մշջ: իմ արտասուքով

Ոռոգուած՝ ելէք օժանդակեցէք

Եւ բըժըշկեցէք բարի ծերունու

Վըշտելն: (Սպանելն) Փընտուցէք, փընտուցէք նըրան,

Մի գուցէ զայրոյթը կարճէ իւր կեանքն,

Որ չունի հընար ինքնավարելու: (Գնում էն սպանելն)

Մէ ՍՈՒՐՅԱՆԴԱԿ ներս է մանում):

ՍՈՒՐՃԱՆԴԱԿ

Տիկին, մի նոր լուր բրիտանական զօրքն

Եյստեղ է գալիս:

ԿՈՐԵԼԱ.ԻՒ.

Երդէն յայտնի էր

Եյդ: Մէնք պատրաստ ենք զիմազրաւելու

Նոցա: Ով անզին հայր իմ, քեզ համար

Միայն եմ ենում կըսուի: Վեզ համար

Գաղղիոյ արքայն զիջաւ իմ սըդիս



ՎԵՐԱՊԵՏՎԻՆ

Մարդին չէ սիրում: Եյս յայտնի բան է:  
Երբ վերջին անգամ այստեղ էր՝ ազնիւ  
Եզմունդին վերայ սիրութուն աչքեր  
Եւ Ճարտարախօս հայեացք էր ձըգում:  
Դու մըտերիմն ես նէրա:

ՈՍՎ. ԸՆ. ՚Դ.

Ե՞ս ս, տիկին:

ՀՈՒՅ. Գ. ԸՆ. ՚Ե.

Ես ինչ որ դիտեմ ասում եմ: Գիտեմ,  
Դու մըտերիմն ես, ուստի և խորհուրդ  
Տալիս եմ—լըսիր: Իմ մարդը մեռաւ:  
Մենք Եզմունդին հետ արգէն խօսել ենք,  
Նա աւելի իմ քան թէ տիրուհուդ  
Չեռքին է հաւան: Մնացածը դիւրին  
Է հետեցընել: Երբ նըրան զըտնես՝  
Խընդրեմ սա նորան տուր: Երբ տիրուհիդ  
Լըսէ քեղանից այս ամենն՝ խընդրիր  
Նէրան, որ խելքը գըլուխն հաւաքէ:  
Եյժմ երթաս բարով: Եթէ դաւաճան  
Կըրի մասին լսես՝ մեծ վարձք կայ նորան  
Ով որ ըսպանէ նըրան:

ՈՍՎ. ԸՆ. ՚Դ.

Կուզէի,

Տիկին, մէկ նորան հանդիպիլ ապա  
Ցոյց կըտայէ, թէ ում եմ պատկանում  
Ես:

ՀՈՒՅ. Գ. ԸՆ. ՚Ե.

Երթաս բարով: (Գնուու էն):

յոդութիւն ունէր իւր նշանակութեան վերայ:—Եսկ ես կարծում եմ, որ այս վար-  
մունքն Ասպաւշի կողմից փոքր ինչ արուեստական է, իսկ երկրորդ գէպքում՝ բոլորովին  
անբնական. և միայն բացատրվում է սորանով, որ այս նամակն աէ՛աք էր հասնէր Եղ-  
գարի ձեռքն, ուստի չէր կարող հուեցանին յանձնուիլ նոյն նպատակով է նաև, որ  
Ասպաւշի մեռնելու ժամանակ, Ծեկոսիր (անբնականապէս) նորան յիշեցնել է տակա-  
նամակի մասին, որպէս զի Եդգար առն է այն անպատճառ:

ՎԵՅԵՐՈՐԴԻ ՏԵՍԱՐԱՆ

Դուվրի մօտ մի դաշտում:

ՖԼ'ՈՍՏԻ և Էֆֆլ գիւղացիի հագուստով ներս են մտնում:  
ԳԼ'ՈՍՏԻ:

Երբ պիտի հասնինք

Եյն ապառաժի գագաթն:

ԼՇԳ. ԸՆ. ՚Բ.

Երդէն մենք

Եյնտեղ ենք հնում: Ի՞նչպէս դրժուար է  
Ռարձրանալն:

ԳԼ'ՈՍՏԻ:

Իսկ ինձ այնպէս է թըւում,

Ուէ հարթ է երկիլն:

ԼՇԳ. ԸՆ. ՚Բ.

Սաստիկ զառիվայր

Ե՛ւ Ե՛, լըսեցէք, լըսում էք ծովը:

ԳԼ'ՈՍՏԻ:

Ու ճըշմարիտ ոչ:

ԼՇԳ. ԸՆ. ՚Բ.

Եւքերիդ ցաւիցն

Տկարացել ին միւս ըզգայութիւններդ:

ԳԼ'ՈՍՏԻ:

Ապող է լինել: Կարծեմ փոխուեցաւ  
Զայնդ<sup>1)</sup>: Դու խօսում ես աւելի խելօք

Եւ լսու, քան յառաջ:

ԼՇԳ. ԸՆ. ՚Բ.

Շատ սրիսալվում էք:

Ուինչ փոխուած չէ իմ մլջ քան հագուստուս:

<sup>1)</sup> Եդգար այն դիտաւորութեամբ է ձայնը փոխում, որ յետոյ կարողանայ նկատ-  
ուած լինել իբրև չար ողի:

ԳԼՈՒԾԵՐ

Իսկ ինձ թըւում է, թէ լաւ ես խօսում:

ԼՅԴՎԱՐ

Յառաջ եկէք, տէր, ահա այն տեղը:  
 Հանդարա կանգնեցէք:—Ո՞չ ինչպէս գրլուխս  
 Պըտըտեց: Ի՞նչպէս սարսափելի է  
 Ասկից վար նայիլ: Ի արձութեան կէսում  
 Թըռող ագռաւներն և կաշաղակներն  
 Հազիւ միջատի չափ լինին: Մի մարդ  
 Ժայռի կէս տեղում վար կախուած՝ ծովի  
 Սամիթ է քաղում:—Վատանգաւոր արհեստ:  
 Արծես իւր գրլիսից նա մեծ չըլինի:  
 Այս ձըկնորսները, որ ծովեզերքում  
 Քալում են՝ մըկի չափ են երեսում:  
 Այս խարիսխ ձրդած մեծ նաւն՝ մակոյկի  
 Մհծութիւն ունի. մակոյկը, նըման  
 Տակառի՝ հաղիւ նըշմարելի կէտ:  
 Վայրի ալեքներն, որ մըորնչում են  
 Ափի մանր անթիւ կոպիճներին վրայ՝  
 Լըսել կարելի չէ այսքան բարձրից:  
 Չեմ ուղում նայել ներքու, մի գուցէ  
 Խելքիս պըտուտը և մըթնած աչքերս  
 Ինձ այնտեղ գլորեն:

ԳԼՈՒԾԵՐ

Ինձ տար հէնց քո մօտ:

ԼՅԴՎԱՐ

Տուէք ձեր ձեռքն . . . ահա մի քայլ էք հեռու  
 Սուր գահավէժից: Ենթալուսնեայում  
 Բոլոր եղածներն էլ եթէ ինձ տան՝  
 Չեմ ցաթկի տեղումն:

ԳԼՈՒԾԵՐ

Թողլ ինձ, բարեկամ:

Մի քսակ էլ ահա. մէկ աղամանդ կայ

Մէջն, որ աղքատին ընդունելութեանն  
 Երժան է. թող այն օրհնեն աստուածներն  
 Եւ դիցուհիներն քիզ համար. իսկ այժմ  
 Նեռացիր ասկից. « մնաս բարով » ասա.  
 Լըսելի արա ինձ գընալդ:

ԼՅԴՎԱՐ

Բարի

Տէր, մընաք բարով: (Աւանալ է կէպառած):

ԳԼՈՒԾԵՐ

Շատ շնորհակալ եմ:

ԼՅԴՎԱՐ (Աւանային):

Եյսպէս խաղում եմ յուսահատութեան  
 Նետը, որպէս զի բըժըշկեմ այն:

ԳԼՈՒԾԵՐ

Ո՞վ

Նըզօր աստուածներ, բաժանվում եմ ես  
 Երկրից և թողնում եմ համբերութեամբ  
 Վըշտերս, ձեր աչքին առջեւ: Եթէ ես  
 Կարողանայի դեռ նըրան տանել  
 Առանց տըրտունջի յաւիտենական  
 Վըժիոիդ գէմ՝ ես կը թողնէի, որ  
 Պարտասած կեանքիս այս կայծակն ինքնին  
 Մարէր: Եթէ իմ Եղգարս ապրում է  
 Օրհնեցէք նըրան: (Ետքարին) Երդ, իմ բարեկամ,

Մնաք բարով:

(Ուսպառած է և հարճի երկարութեամբ ընկնած է գէտով):

ԼՅԴՎԱՐ

Գընում էք. երթաք բարով: (Աւանային):

Բայց ես չըգիտեմ, երկ'կայութիւնն  
 Մի գուցէ կարող է կեանքի գանձը  
 Գողանալ երբ կեանքն ինքնին է յանձնվում  
 Այս կողոպուտին: Թէ լինէր այնտեղ,

Ուր նա խորհում էր՝ այժմ էլ չէր խորհիր:  
(Բայց, ԳԱՀԱՊԵՐԻՆ, Քովուած յայնով):  
Անդանի էք թէ մեռած, բարեկամ,  
Լըսում էք, էշ, մէկ խօսեցէք: (ԵՐԱԿԱՅԻՆ) Երաւ  
Արող էր մեռնել այսպէս: Բայց ահա  
Ուշքի է գալիս: (ԳԱՀԱՊԵՐԻՆ) Ո՞վ էք դուք, պարոն:

ԳԼՈՒԾԵՐ

Ճեռու, և թող ինձ մեռնել:

ԵԳԳԵՐ

Թռէ սարդի

Ոստայն, փետուր կամ օդ չըլինէիր՝  
Գահավիժելով այս բարձրութիւնից՝  
Խնչպէս ձու փըշըած կըլինէիր այժմ:  
Բայց դու շընչում ես, վերադ արիւն չկայ.  
Ունիս ծանրութիւն. խօսում ես ւառողջ:  
Նաւի տասը կայմ չեն կարող համնել  
Բարձրութեանն, որից ուղղաձիգ կերպով  
Վար ընկար: Եպրելդ հրաշք է. մէկ խօսիր:

ԳԼՈՒԾԵՐ

Վար ընկայ թէ ոչ:

ԵԳԳԵՐ

Եյս ճերմակ ժայռի

Եշեղ գագաթից. Մէկ այս բարձրութեան  
Նայիր. արտօյտն իւր սուր ձայնով այնտեղ  
Ոչ տեսնվում է ոչ լըսվում: Վեր նայիր:

ԳԼՈՒԾԵՐ

Եւաղ, աչք չունիմ ես: Դըժբաղդութիւնն  
Երդեօք զըրկուած է այս բարիքիցն էլ,  
Որ մահով իրան ոչընչացընէ:  
Մըսիթարութիւնն, որ կար աշխարհումն  
Եյն էր՝ որ կարիքն կարող էր խարել  
Մի բըռնաւորի զայրշթն, ի գերե  
Ճանել նորա կամքն:

ԵԳԳԵՐ  
Տըւէք ինձ ձեր ձեռքն:  
Կանգնեցէք. այսպէս. ի՞նչպէս էք. ոտքերդ  
Ռզգում էք: Եհա կանգնեցաք:

ԳԼՈՒԾԵՐ

Եյն,

Մինչեւ իսկ շատ լաւ:

ԵԳԳԵՐ

Շրաշալի բան է:—

Բայց ի՞նչ էր այն՝ որ ժայռի գաթաթում  
Չեղնից հեռացաւ:

ԳԼՈՒԾԵՐ

Մի խեղճ խենթ աղքատ:

ԵԳԳԵՐ

Երբ կանգնած էի այստեղ՝ ինձ աչքերն  
Երկու լուսնեակի նըման երեցան:  
Ճաղար քիթ ունէր. ցըցուած եղջերներն  
Բարձրանում էին, ինչպէս ալէկոծ  
Ռովը: “Նա անշուշտ մի սատանայ էր:—  
Ուրեմն հաւատա, իմ բաղդաւոր հայր,  
Թաստուածներն, որոց փառքն է կատարել  
Մարդերի կողմից անհընար զործեր՝  
Վեղ ականապէս փրոկեցին:

ԳԼՈՒԾԵՐ

Եյն,

Խելքս այժմ յետ դարձաւ: Ես այսուհետե  
Պիտի կըրեմ խաչս, մինչեւ նա ասէ,  
«Ճերիթ է, չերիթ, մեռիթ»:—Եյն էակն,  
Որի մասին գու խօսում ես՝ իս մարդ  
Եշի համարում: “Նա միշտ մըրմռում էր  
«Զար ոգին»: “Նա ինքն ինձ այնտեղ հանեց:

ԵՒԳՆՐ

Համբերութեամբ տար վիճակդ:—Բայց ով է  
Գալիս:  
(Իի ներ է ճանում գուղքնեակ իւրաք ժամանեալ զարդարուած):  
Զըցընդուած հոգին չէ կարող  
Այսպիսի ձեռվ տէրին զարդարել:

Լ.Ի.Թ

Ոչ դրամ կըտրելու համար չեն կարող  
Ինձ ոչնչ անել ես եմ թագաւորն:

ԵՒԳՆՐ (Առանցին):

Ով սրտաձմիկ տեսարան:

Լ.Ի.Թ

Այս մասում բնութիւնն արուեստից բարձր է:—Աշա  
գրաւի փող:—Այս յիմարը աղեղը բռնել է, ինչպէս մի խըր-  
տուիլակ: Երկաթէ մի կանգուն ծուցէք ինձ համար:—Տե՛ս  
տես մուկը: Լուռ, լուռ, այս մի կտոր տապակած պանիրը  
նորա բանը կրուցնէ:—Աշա իմ երկաթէ բազպանս. նեսում  
եմ այն մի հսկայի<sup>1)</sup>: Սակրերը բերէք:—Այ, լաւ թռար, իմ  
թռչուն:—Նպատակին, ուղիղ կէտին:—(Երդարչին) Նշանա-  
բանն ի՞նչ է:

ԵՒԳՆՐ

Անուշ Մայորան:

Լ.Ի.Թ

Վացիր:

ԳԼՈՒԽՆՐ

Այս ձայնն ինձ ծանօթ է:

Լ.Ի.Թ

Աշ, Պոնէրիլ:—սպիտակ մօրուքով: Նէրանք ինձ շոյ-  
ում էին իբրև մի շան և ասում էին, թէ մօրուքիս մէջ ըս-  
պիտակ մազեր ունիմ, յառաջ քան թէ սկ մազեր այնտեղ  
լինէին: Այո, Ոչ պատասխանել բոլոր խօսքերին: Այո և Ոչ

<sup>1)</sup> Բազպան կամ ձեռնոց նետելով մենամարտի էին հրաւիրում:

միւսոյն ժամանակ՝ մի սրբութիւն չէ:—Մի օր, երբ անձրեն  
ինձ թաթաւեց, հողմն ինձ դողացրեց, երբ որոտումն իմ հը-  
րամանովս չդադարեց՝ այն ժամանակ գտայ, այն ժամանակ  
հասկացայ, թէ ի՞նչ էին նէրանք: Նէրանք հոռու, հոռու. նէրանք  
խօսքի տէր մարդեր չեն: Նէրանք ինձ ասում էին, թէ ես աշ-  
խարհում ամեն ինչ եմ. սուտ է այս, ես ջելմախտին էլ չեմ  
դիմանում:

ԳԼՈՒԽՆՐ

Այս ձայնն ինձ ինչպէս ծանօթ է գալիս:  
Թագաւորը չէ:

Լ.Ի.Թ

Այս թագաւոր,

Եմեն մի մազըս: Մէկ որ ծուռ նայիմ  
Տես, կըպատակնելս ի՞նչպէս կըդողան:  
Այն մէկին բաշխում եմ ես կեանքն: Ի՞նչ էր  
Նորա յանցանքը:—Անառակութիւն:  
Դու մեռնելու չես. անառակութեան  
Ճամար մեռնել—ոչ: Յախսալեկն անում  
Ե: նոյնն և փոքրիկ ոսկեգյն ճանճը  
Ծքնանում է արդ իմ աչքիս առջե:  
Աճիր, շընութիւն: Գլուստէրին նորա  
Սպօրէն զաւակն աւել է սիրում,  
Քան օրինաւոր անկողնում սկրած  
Գըստրէրս: Միշտ աճիր, անառակութիւն,  
Ինձ զինուոր են պէտք:—Տեսէք զարդարուած  
Այս տիկինն. նէրա դէմքից թվում է, թէ  
Չիւն կայ կըճքին մէջ: Նէ ցոյց է տալիս,  
Թէ անմեղութիւնն է նէ, և զըլուխն  
Դարձնում է, լսելով տըռփութեան անունն:  
Բայց ոչ ախոռում փակուած առոյգ ձին,  
Ոչ աքիսն այնպէս մոլեւալ ցանկութեամբ  
Չեն նետվում վերայ: Նէրանք մէջքից վար  
Յուշկապարիկ են, թէւ անկից վեր  
Աին. նէրանք մինչեւ մէջքի՝ աստուածներինն

Են միայն, բոլոր վարը՝ դեկրին:  
Ենտեղ է դրժոխք, այնտեղ է խաւալն,  
Ենտեղ ծրծումքի անդունդը, հրթեհ,  
Եռացում ու փուք ու փուտ: Ծիւռ, թիւռ,  
Փիւռհ փիւռհ. մեկ ունկի մուշկ տուր, բարի դեղավաճառ,  
Ֆրւակայութիւնս մաքրիմ: Ահա փողը:

ԳԼՈՒՏԵՐ

Ո-, թող համբուրիմ այդ ձեռքն:

ԼԻՐ

Նախ ինձ թող

Սըրբիմ. մեռելի հոտ է բուրումնա:

ԳԼՈՒՏԵՐ

Ո-վ դու կործանուած պատկեր. սոյն կերպով  
Այս մեծ աշխարհն էլ ոչընչութեան մեջ  
Պիտի կորցըւի: (Լէրն) Ինձ ճանաչում ես:

ԼԻՐ

Աչքերդ միտքս լաւ գալիս են: Ինձ թվումէ, թէ աչքով ես անում ինձ. աշխատիր, որչափ ուզում ես, կըլ Կուպիտօն, ես չեմ ուզում սիրել: Այս մենամարտի հրաւերը կարդա. զրերը մանաւանդ լաւ դիտիր:

ԳԼՈՒՏԵՐ

Եթէ նոցա տեղ մի մի արեգակ  
Լինէին՝ ոչ մինն ես չի տեսնի:

ԼՐԴԱՐ (Առանյին):

Թէ ինձ պատմեին՝ չի հաւատար.  
Բայց իսկութիւն է սա: Պատում է սիրտա:

ԼԻՐ (ԳԱՂԱՄՔԵՐՆ):

Կարդա:

ԳԼՈՒՏԵՐ

Այս աչքերիս փոսերնիը:

ԼԻՐ

Օհօ՛, գործդ այստեղ հասաւ: Ոչ աչք գլխումդ, ոչ քսակ գրպանումդ: Աչքերդ ծանր գրութեան մեջ են. քսակդ թեթև: Սակայն դու տեսնում ես, թէ ինչպէս են գնում աշխարհիս գործերը:

ԳԼՈՒՏԵՐ

Օգալով միայն տեսնում եմ:

ԼԻՐ

Ի՞նչ յիմարացել ես գուն: Աշխարհի գործերին ինչպէս գնալը կարելի է տեսնել և առանց աչքերի: Վկանջներովդ նայիր: Տես, ինչպէս այդ դատաւորը ծաղրում է հասարակ գողին:— Լսիր—ականջիդ ասեմ:— Փոխիր դոցա տեղերը և յետոյ բացուխուր<sup>1)</sup> խաղալով հանիր, որն է գողը, որն է դատաւորը: Տեսել ես, ինչպէս աւատառուին շունը հաջում է մուրացկանին վերայ:

ԳԼՈՒՏԵՐ

Այսու, տէր:

ԼԻՐ

Եւ թէ ինչպէս խեղճուկը գազանից խցս է տալիս:— Ենտեղ կարող էիր տեսնել նաև իշխանութեան մեծ պատկերը: Մարդ շանը հնաղանդում է, երբ սա իւր պաշտօնն է դործ գնում:

Յետ քաշեր, լակուա, ձեռքըդ արիւնոտ.

Ինչու մըտրակում ես պոռնիկ աղջկին:

Քո մէջըդ ծեծիր, դու ցանկութիւնից

Այրվում ես՝ նէրան հետ նոյնը գործել

Որի պատճառով ծեծում ես նէրան:

Տես, իսպերային վաշխառուն կախեց:

Ցընցոտիների մէջից տեսնվում է

Փոքրիկ յանցանքը. բայց մուշտակին ամեն

1) Handy dandy—երեխաների խաղ, որի մէջ երեխաները մի առարկայ ձեռքից ձեռք տալիս առենում են գալուուկ, և մէկը նոցանից պէտք է գտնէ, թէ որի մատն է առարկան:

Իան պարտակում է: Ոսկու մէջ պահիր  
Մեղքն, ւ' արդարութեան հրզօր նիզակը  
Առանց վնասելու յիտ կը նետուի. բայց  
Երբ որ նա հագուած է ցընցոտու մէջ՝  
Յարդի կրտորով թրզուկը նըրան  
Կըխոցէ: Ոչ ոք յանցանք չէ գործում,  
Ոչ ոք, ասում եմ, ոչ ոք: Ես նոցա  
Պաշտպանում եմ: Եյս դու միտքըդ պահիր,  
Օսօրութիւն ունիմ ես և կըփակեմ  
Եմբաստանողի բերանն: Կապակէ  
Եզքէր առ և իրը սուր քաղաքագէտ  
Զեացրու տեսնել այնպիսի բաներ,  
Որ ամենեին չես տեսնում: Շուտ, շուտ,  
Շուտ, շուտ կօշիկներս հանիր: Խիւստ խիստ լաւ:

Լ. Վ. Վ. (Վահանյն):

Ի՞նչպէս խառնվում է ցընդաբանութիւնն  
Ճշմարտութեան հիտ: Խելք և ապշութիւն:

Լ. Վ.

Եթէ ուզում ես ողբալ իմ վիճակս  
Եռ աչքերս. ես քեղլաւ եմ ձանաչում—  
Ենունդ է Գլոստէր: Պէտք է համբերես:  
Մենք լալով եկանք: Դու գիտես, որ երբ  
Օսկըսում ենք օդ շընչել լալիս ենք  
Եւ աղաղակում: Քարոզ քեզ խօսիմ,  
Աւշադիր եղիր ինձ:

Գ. Վ. Պ. Տ. Վ.

Ո՞չ, ցաւի՞ օր:

Լ. Վ.

Հէնց որ ծընում ենք՝ լակըսում ենք լալ  
Որ յիմարների այս բեմը մըտանք:—  
Եւ, խելացի միտք: Մէկ երեւել  
Աշաղմագիտութիւն կըլինէր, եթէ

Հեծելաղօրի մի գունդ պայտէին  
Թաղիքով: Ես այս ուզում եմ փորձել.  
Եւ երբ յարձակիմ փեսաներիս վրայ՝  
Եւ ջարդի՞ր, ջարդի՞ր, ջարդի՞ր: Ջարդի՞ր:  
(Մէ ՍՊԱՅ և ծԱՌԱՆԵՐ ներ Են հրանում):

ՍՊԱՅ (Յայ ապալով Լեռն):

Եհաւասիկ նա. բըռնեցէք նըրան: (Լեռն)  
Տէր, ձեր սիրելի գուստին . . .

Լ. Վ.

Վզատելու

Ոչ ոք չէ գալիս: Ի՞նչ կալանաւո՞ր:  
Ուղեղ որ բանդի թրչուառ խենթն եմ ես:  
Լաւ վարուեցէք հետս. փըրկանք ձեզ կըտամ:  
Մի բըժիշկ բերէք ինձ. ես ուղեղումն  
Վիրաւորուած եմ:

ՍՊԱՅ

Դուք այս ամենը

Առնենաք:

Լ. Վ.

Ոչ մի օգնութիւն չըկայ.  
Եյսպէս միայնակ: Ո՞չ, կարող է մարդ  
Հալել աղի պէս, գործածել աչքերն  
Իբր երկու ցընցուղ<sup>1)</sup> և աշնան փոշին  
Ի՞նկանել:

ՍՊԱՅ

Ըարի տէր:

Լ. Վ.

Ուզում եմ մեռնել  
Քաջութեամբ իբրև փեսայ: Ո՞չ ուրախ  
Ուզում եմ լինել: Ո՞չ, եկէք, եկէք:

<sup>1)</sup> Կշանակում է չափազանց շատ լաց լինել:

Թագաւոր եմ ես: Պարոններ, դուք այս  
Վիտէք:

ՍՊԸՅ

Թագաւոր էք դուք և մենք ձեզ  
Հընազանդում ենք:

ԼԵՒ

Ուրիմ կեանք դեռ կայ

Նորա մէջ: Իսկ թէ ուղում էք նըրան  
Ռըռնել՝ վաղելով միայն կըբռնէք.  
Ճը, հը, հը: (Ի՞ն-ը է իախո-մ. ծառանելն վաղ-մ էն  
Եպելից):

ՍՊԸՅ

Թըշուառ մուրացկանին մէջ

Յաւալի է այս տեսին. իսկ բոլոր  
Խօսքերից վեր է թագաւորին մէջ:  
Դու ունիս մի դուստր էլ որ բնութիւնից  
Հանում է նդշանուր անէծքը, որով  
Նրան կաշկանդեցին այն երկուքն:

ԼՅԳԱՐ (Սպայն):

ՈՂՋՆ,

Ո-վ աղնիւ պարոն:

ՍՊԸՅ

Կարճը կապեցէք,

Բարեկամ, ի՞նչ էք ուղում:

ԼՅԳԱՐ

Լըսել էք,

Որ շուառվ կըսիւ կըբացուի:

ՍՊԸՅ

Անշուշտ.

Եյդ լաւ ծանօթ է: Ով ականջ ունի՝  
Պարող է լըսել այս:

ԼՅԳԱՐ

Իսկ միւս բանակն —

Շնորհէք արէք ասել — մօտ է մեզ:

ՍՊԸՅ

Ուս է,

Եւ փուժով գալիս: Պըլիսաւոր կըսիւն  
Ըսպասելու է ժամից ժամ:

ԼՅԳԱՐ

Զեղը տէր,

Շնորհակալ եմ, իմ հարցնելիքս այս էր:

ՍՊԸՅ

Թէպէտ թագուհին այստեղ մասնաւոր  
Պատճառներով գեռ սպասում է՝ բայց զօրքն  
Դիմել է յառաջ:

ԼՅԳԱՐ

Շնորհակալ եմ տէր:

(Սպան դու-ը է գու-մ):

ԳԼՈՒՏԵՐ

Պըթած աստուածներ, դուք առէք իմ կեանքս,  
Որ էլ չար ոգին կըրկին չըդրողէ  
Ինձ մեռնել յառաջ՝ քան ուղում էք դուք:

ԼՅԳԱՐ

Լաւ աղօթք է այդ, հայրիկ:

ԳԼՈՒՏԵՐ

Իսկ նվ էք

Դուք, իմ բարեկամ:

ԼՅԳԱՐ

Մի խեղչ մարդ, բաղդի

Խիստ հարուածներից նըւածուած, որ իւր

Արքած ու զգացած վրշտերից՝ դէպի

Կարեկցութիւնը դարձել է զգայուն:

Տըւէք ինձ ձեր ձեռքն. ձեզ մի տուն տանիմ:

ԳԼՈՒԽԵՐ

Սըրտանց շնորհակալ եմ. երկնի շընորհքն  
Եւ օրհնութիւն տայ ձեզ փոխարէնք:  
(ՍԵՆԵԿԱՊԵՏ ՈՍՎԱԼԴ ԱԵՇ Է ՀԱՅԻՆ-Ը):

ՈՍՎԱԼԴ Դ (ԱՐԱԿՅԵՆ):

Խոստացուած պարգեւն. ով հազուագիւտ բաղդ:  
Աչքազուրկ զըլուսդ ինձ բարձրացնելու  
Համար է միայն: (ԳԼՈՒԽԵՐԵՆ) Դու, ծեր դաւաճան,  
Խորհրդածութիւնդ արա շուտով: Առուն,  
Որ ջընջելու է քեզ՝ դուրս է քաշուած: (ՀԱՅԻՆ-Ը Է ՀԱՅԻՆ-Ը):

ԳԼՈՒԽԵՐ

Բարեկամական ձեռքիդ մաղթում եմ  
Ես բաւական ոյժ: (ԵՐԴԱՐ ՆՈՍ ԱՅ Է ՀԱՅԻՆ-Ը):

ՈՍՎԱԼԴ (ԵՐԴԱՐԵՆ):

ԳԵՂՋՈՒԿ ըստամբակ,

Դու համարձակում ես դատապարտուած  
Այս դաւաճանին պաշտպանել: Հեռու,  
Եթէ ոչ սորա բաղդին ժանտախտը  
Վեզ էլ կըկրպչե: Թող նորա ձեռքը:

ԵՐԴԱՐ

Մինչ որ մի խելացի պատճառ չըսես՝ չեմ թողնէ:

ՈՍՎԱԼԴ

Թող նրան, անպիտան, եթէ ոչ կմեռնես:

ԵՐԴԱՐ

ԵՇ բարի մարդ. Եստուած բանդ յաջողէ, թող մենք  
ալ մեր ճամբան էրթանք: Թէ որ տաք տաք փշելով ինձի  
մէուցնել կարելի լինէր, տաստամնը ինձի օր առաջ մէռած  
կլինէի: Առ ծերին դուն մի մօտէնար. հեռու կէցիր, քեզի  
կըսեմ, թէ չէ, այ, աստուած վկայ, կփորձեմ թէ քու զըլիսա-  
գողօշտ է ամուր, թէ սա իմ կոպալս:

ՈՍՎԱԼԴ

Առբիր, կովի կու:

ԵՐԴԱՐ

Չէ, առաջ մէմ քո առկըները թող ջարդեմ: Հըրամնէ  
առաջ: Թէ կըմաշ թըրէդ ես չեմ վախէնայ: (ԿԱՅՐ-Ը Է ԵՐԴԱՐ  
ՈՎԱԼԴ-Ը Պարագանայ յդու-Ը է գետին):

ՈՍՎԱԼԴ

Ինձ ըսպանեցիր դու, թըրըւառական:  
Եռ քըսակս. թէ բաղդ ուզում ես գըտնել՝  
Թաղիր իմ դիակս և տուր այն նամակն,  
Որ դուն կըդրտնես վերաս՝ Եգմունդին,  
Գլուստէրի կոմսին: Նըրան Ենգղից  
Բանակում փընտոիր: ԵՇ զ դեռ կանուխ մահ:  
(ՄԵԿԱՆ-Ը Է):

ԵՐԴԱՐ

Եաւ եմ ճանաչում քեզ ըստըրկամիտ  
Ռոտահակ, այնքան հըլու տիրուհուդ  
Յած արաւաներին, որչափ չարութիւնն  
Ինքնին կամենայ:

ԳԼՈՒԽԵՐ

Կ՞ոչ է, նա մեռած:

ԵՐԴԱՐ

Նըրսեցէք, հայրիկ, հանգեցէք: Նայիմ  
Նորա զըրպաններն: Նամակն, որ ասում  
Եմ՝ ինձ օգտակար կարող է լինել:  
Նա մեռաւ: Միայն ցաւում եմ, որ ես  
Եղայ իւր դաշիճն:—Միրելե կընիք,  
Ներիր ինձ, և դուք, կարգ ու կանոններ,  
Մի անարգէք ինձ: Մինք մեր թըրնամու  
Դիտաւորութիւնն գիտնալու համար  
Կարող ենք նորա սիրար բաց անիւ.  
Նամակն՝ ի հարկէ աւելի զիւրաւ: (ԿԱՅՐ-Ը Է ՆԱԺԱԿԻՐ):  
«Յիշեցէք մեր երկուստէք ուխտը: Դուք լաւ առիթ-  
աներ ունիք նրան մէջ տեղեց վերցնելու: Եթէ կամքը ձեզ \*

«Հ պակասում՝ ժամանակն և տեղը ձեզ շատ նպաստաւոր էն:—  
«Եթէ նա յաղթող վերադառնայ՝ ոչինչ կատարած չենք լինի.  
«այն ժամանակ ևս նորա կալանաւորն եմ, նորա անկողինն իմ  
քանդո է: Եզատեցէք ինձ սորա ատելի ջերմութիւնից, և ձեր  
«աշխատանքին փոխարէն՝ ստացէք նորա տեղը:

«Չեր—ուր էր թէ ասէի կին—անձնանուէր գերին  
Գոնէլրիլ»:

Ո՞վ դու անշէջ հուր կանացի կամքին:  
Մի դաւ իւր աղնիւ մարդի կեանքին դէմ:—  
Եւ նորան եղբայրս յաջորդ:—Եւազում  
Եյստեղ կըհորեմ ևս քեզ, պրղծութեան  
Ո՞վ դու սրբապիղծ սուրհանդակ:—Արզայ  
Ժամանակն, երբ այս դարշելի նամակն  
Մահուան ենթարկուած կոմին աչքերը  
Կը բանայ: Ենշուշտ նա պակաս ուրախ  
Չի լինի, երբ քո մահդ յայտնեմ նորան:  
(ԷԴԳԱՐ ՇԱ-ՐԻ Է ԵԼՈ-Յ, ՇԵ-ՅԻ ԹԱ-ՀԵ-ՅԻ):

### ԳԼՈՒԽԵՐ

Երքայն—խելագար իմ խելքըս որքան  
Ճըկուն է ուրեմն, որ դիմադրում է  
Գեռ, և ըզդում եմ ևս ցաւերս: Լաւ էր  
Խելագարէի: Գոնէ զգայութիւնս  
Վըշտերիցս անջատ կինէր: Խաբուսիկ  
Երե՛կայութեամբ ցաւըս կըկորցնէր  
Ինքնազգայութիւնն:

(ԷԴԳԱՐ ՅԵ-ՅԻ ՇԱ-ՅԻ-ՅԱ-ՅԻ):

### ԼՅՈՒՌԵՐ

Տըւէք ինձ ձեր ձեռքն:  
(ՆԵ-ՅԻ-ՅԱ Ե-ՅԻ ՅԱ-ՅԻ Ե-ՅԻ ՍԵ-ՅԻ-ՅԻ):

Թըրմիկ ձայն կարծեմ լըսկումէ հեռուից.  
Գնանք, ձեզ կըյանձնեմ մի բարեկամի: (ՊԱ-Յ-ՅԱ-ՅԱ):

### ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Գաղղիական բանակում մի վրան:

Ար քնած է անկողնում: Բժիթի, ԱՄՊԵՏ և ՈՒԹԻՇՆԵՐԸ նորա շուրջը  
կանգնած են: ԿՈՄԵԼԻԱ և ԿԵՆՑ ներս են մտնում:  
Տեսարանի ետևն հանդարտ նուագ:

### ԿՈՄԵԼԻԱ

Ո՞վ իմ բարի ԱԷՆՏ. ի՞նչպէս ևս երբէք  
Պիտ' կարողանամ հատուցում անել  
Վո բարութեանդ: Ա՞խ, շատ կարծ է իմ կեանքս,  
Եւ որմէ չափ փոքր է այս կէտում:

### ԿԵՆՑ

Եյսպէս ճանաչուած լինեն մեծ վարձք է  
Արդէն, տիրուհի: բոլոր իմ ասածն  
Զուտ ճրշմարտութիւն է, ոչինչ աւել  
Կամ պակաս. ոչինչ:

### ԿՈՄԵԼԻԱ

Լաւագոյն հանդերձ  
Եռ, այդ հագուստը յիշեցնում է այն  
Զանըր ժամանակն: Ո-, ձըգիր խընդրեմ:

### ԿԵՆՑ

Բարի՛ թագուհի, դեռ ոչ: Եյժմէն իսկ  
Յայտնըւիլն վընաս է իմ դիտումիս:  
Խընդրում եմ իրեւ վարձատրութիւն, որ  
Ինձ չըճանաչք, մինչև ժամանակն  
Եւ ես՝ այն յարմար զըտնենք:

### ԿՈՄԵԼԻԱ

Թօող այդպէս  
Աինի, բարի Լորդ: (ԲԺԼԱ) Ի՞նչպէս է արքայն:  
ԲԺԼԱ

Կամ դեռ քընումէ, աղնիւ տիկին:

ԿՈՐԴԵԼԻՒ

Ո՞Վ

Գըթած աստուածներ, բուժեցէք նորա  
Խըռոված հոգու կոտորուածքն: Ո՞հ, դուք  
Վերակազմեցէք իւր ըզգայութեան  
Խանգարուած լարեն, այս տղայացած հօր:

ԲԺԻՇԻ

Երդեօք կամենումէ ձեր մեծութիւնն,  
Որ թագաւորին զարթեցնէք: Երկար  
Նա քընեց:

ԿՈՐԴԵԼԻՒ

Երէք, ինչ որ ձեր հանձարն  
Եւ կամքն հրամայումէն ձեղ.—Հաղուած է,  
Նա:

ԵՍՊԵՏ

Եյո, տիկին: Երբ նա խոր քընած  
Եր՝ նոր ըզգեստներ հաղցըրինք նըրան:

ԲԺԻՇԻ

Կացէք, թագուհի, երբ զարթեցընենք  
Նրան, եւ տարակցս չունիմ, թէ խաղաղ  
Կըլինի:

ԿՈՐԴԵԼԻՒ

Շատ լաւ: (Ես-ագարան):

ԲԺԻՇԻ

Խընդիրեմ մօտ եկէք: (Գալլ-Տէ):

Նուագարանը բարձր ածել:

ԿՈՐԴԵԼԻՒ

Ո՞Վ անդին

Հայր իմ:—Խաղգուրում, տուր շըթունքներիս  
Ըլքըշկելու ոյժ, և թող այս համբոյրս  
Փարատէ սաստիկ վիշան, որ իմ քոյրերս  
Պատճառեցին քո ծերութեանդ:

ԿՈՐԴԵԼԻՒ

ԲԱՐԻ

Խանդին թագուհի:

ԿՈՐԴԵԼԻՒ

Եւ եթէ հայր էլ.

Չլինէիր նէրանց՝ այս Ճերմակ մազերդ  
Պէտք է շարժէին նէրանց գըթութիւնն:  
Սա մի զըլուս է անսաստ մըրթիկին  
Ենթարկուելու, խոր ու սալսափելի  
Որոտումին դէմ կըռուելու, արագ,  
Խաչուող կայծակի փոյթ և սոսկալի  
Նարուածներին տակ հըսկելու—այսպէս  
Բարակ ծածկոյթով:—Ծալշնամուս շունը,  
Թէկ ինձ խածած էլ լինի—կրակիս

Եռջև կըգըտնէր մի տեղ այն գիշերն:

Խսկ դուն, խեղջ իմ հայր, ըստիպուած էիր  
Օթել խոզերի և աւազակների

Հետ, փըտած յարդի մի կտորի վերայ.

Ո՞, աւաղ աւաղ: Հրաշք է, որ քո խելքդ

Ու կեանքդ չը հանգան մէկտեղ:—Զարթում է.

Խօսեցէք հետը:

ԲԺԻՇԻ

Եւելի լաւ է

Տիկին, դուք խօսիք:

ԿՈՐԴԵԼԻՒ

Խնչպէս էք ըզգում

Զեզ, հայր թագաւոր: Զեր մեծութիւնը  
Խնչպէս է:

ԼԻՄ

Դուք ինձ ցաւ եք պատճառում,  
Գերեզմանից դուրս հանելով: (Արքելեային) Դու մի  
Երջանիկ հոգի ես. իսկ ես՝ կապուած

Նրեղէն անիւի՝ որից արտ' սուքներս  
Եռում են ինչպէս հալած արձիճ:

ԿՈՐԴԵԼԻԸ

Տէր,

Ճանաչում էք ինձ:

ԼԻՒ

Մի ոգի ես դու,

Գիտեմ երբ մեռար:

ԿՈՐԴԵԼԻԸ (Բժիշկ):

Ճեռու, դեռ հեռու:

ԾԺԱԾԿ

Դեռ նոր է զարթել թողէք մի վայրկեան  
Ճանդիստ:

ԼԻՒ

Ես որտեղ էի որտեղ եմ:

Յերեկի լոյս: Ես սաստիկ խարուած եմ  
Արեկցութիւնից ես կը մեռնէի,  
Եթէ ուղիշն տեսնէի այսպէս:—  
Չեմ գիտեր, թէ ի՞նչ եմ ասում:—Երդուել  
Չեմ կարող թէ իմ ձեռքերս են սոքա:  
Տեսնենք.—ըզգում եմ այս ասղի խոցելն:  
Մէկ գիտնայի, թէ ի՞նչ վիճակում եմ:

ԿՈՐԴԵԼԻԸ

Ո-, ինձ նայեցէք, հայր, տարածեցէք

Չեռքերդ իմ վերաս օրհնութեամբ:

(Լէր ծունկ է լուսու Ասրբելիայի առջև):

Ոչ տէր,

Ծունկ մի չոգիք դուք:

ԼԻՒ

Ո-չ, մի ծաղլեր ինձ:

Թոյլ արդայացած մի ծերուկ եմ ես,

Ութսուն տարեկան, ոչ մի ժամ աւել  
Ոչ էլ պակաս, և, ուղեղն ասելով  
Վախենում եմ—խելքս ամբողջ վերաս չէ:  
Կարծում եմ, պէտք էր ես ճանաչէի,  
Չեղ և այս մարդին (Վէնայն ցոյց պալով). բայց կասկա-  
ծում եմ,

Վասրնղի այս տեղն ես չեմ ճանաչում:  
Բողոք ուշքովս էլ չեմ կարող յիշել  
Եյս հանդերձն և այն՝ թէ վերջի զիշերս  
Ուրտեղ անցուցի: Ո-, մի ծիծաղիք  
Վերաս—ինչպէս ձիշտ է, թէ մարդ եմ ես՝  
Նոյնպէս կարծում եմ, թէ այս տիկինն իմ  
Գուստարս է, Աորդելեա:

ԿՈՐԴԵԼԻԸ

Եյո, ես եմ, ես,

ԼԻՒ

Երտասուքներդ թաց են: Եյո, ձիշտ:  
Խընդըռում եմ, մի լար, և թէ թոյն ունիս  
Ինձ համար՝ ես այն ուղում եմ խրմել:  
Գիտեմ, չես սիրում դուն ինձ, վասրնղի,  
Թէ չեմ սրխալվում, քո քոյրերդ ինձ շատ  
Վիրաւորեցին: Գէթ առիթ ունիս  
Գու, նէրանք չունին:

ԿՈՐԴԵԼԻԸ

Ոչ մի առիթ, ոչ:

ԼԻՒ

Գաղղիայնում եմ ես:

ԿԱՇԵԾ

Չեր սեփական

Թագաւորութեան մէջ:

ԼԻՒ

Մի խարէք ինձ:

**ՏՆԺԻՇ Կ (ԱՊՐԵԼԱՅՈՒ):**

Թագուհի, վըստահ եղէք. սուր զայլոյթն,  
Խնչէս տեսնում էք՝ բուժուած է. բայց դեռ  
Վըտանգաւոր է յիշեցնել նորան  
Կորցրած ժամանակն: Զեղ հետ ներս տարեք  
‘Նըրան, և մինչեւ լաւ ըրկազդուրի՝  
‘Նրան մի վըրդովէք:

**ԿՈՄԻԵՆԵԼԻՐ. (ԼԵՒ):**

Նաձնում է ինձ հետ

Գալ ձեր մեծութիւնն:

**ԼԻՒ**

Պէտք է համբերող

Լինիս թուլութեանս: Մոռացիր, ներիր  
Ինձ, ես զառամեալ ձեր եմ:  
(Գնում էն Լեւ, Ապրելէս, բժիշն և ծառանելը):

**ԱՍՊԵՏ**

Ուղեղ է

Կորնվալի դըքսի այսպէս ըսպանուիլն:

**ԿԵՇՆԸ**

Ըոլուովին ճիշտ, պարոն:

**ԱՍՊԵՏ**

Եւր զօրքին

Ո՞վ է առաջնորդ:

**ԿԵՇՆԸ**

Խնչէս ասում են,

Ապօրէն որդին Գլուխէրի:

**ԱՍՊԵՏ**

Եղգար,

Նորա արտաքսուած որդին, ասում են,  
Գերմանիա է Աէնտի կոմսին հետ:

**ԿԵՇՆԸ**

Վըրելն այլեւայլ են:—Ժամանակ է

Ծուջ նայել: Երագ մօտենում է զօրքն  
Թագաւորական:

**ԱՍՊԵՏ**

Վըճիոն, երեխ,

Ծատ արիւնաշեղ պիտի լինի: Տէր,  
Մընաք բարով: (Գնում է):

**ԿԵՇՆԸ**

Եմ հոգս ու դիտմունքս էլ

Ծուտով կըհամնեն իրանց վախճանին—

Լաւ կամ վատ— կըոռուի ելքին նայելով: (Գնում է):

**ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ**

**ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ**

**ԲՐԻՄԱՆԱԿԱՆ զօրքի բանակն Դուվրի մօտ:**

Էֆրունի, Հունան, ՍՊԱՆԵՐ և ԶԻՆՈՒՈՒՆԵՐ, թմբուկներով և դրո-  
շակներով ներս են մանում:

**ՀՅՈՒՈՒՆԵՐ (Մէ աղայն):**

Իմացէք, թէ դուքսն հաստատ է վըճուին

Եւ թէ նրան յետոյ ոչինչ չըստիպէց

Փոխելու դիտումն: ‘Նա փոփոխամիտ

Եւ տարակուսող է: Եւր վերջնական

Վըճիոն մեզ բերէք: (Սպան գնում է):

**ՀՈՒԳԵՆԵՐ**

Երեխ քոյրիս

Սուրհանդակին հետ մի զըժբաղզութիւն  
Պատաշեց:

**ՀՅՈՒՈՒՆԵՐ**

Ես էլ նոյն եմ կասկածում,

Տիկին:

ՀՈՅԳԱԸՆ

Եյժմ, ազնիւ լորդ, ձեզ յայտնի է  
Ուրչափ ես բարիք ցանկանում եմ ձեզ:  
Սաք ինձ—սակայն առանց սրտութեան,  
Զուտ ճշմարտութիւնն—չէք սիլում քոյրիս:

ԼՅՄՈՒՐԴ

Յարգանքի սիրով:

ՀՈՅԳԱԸՆ

Բայց, եղբօրս յատուկ  
Դուք ցանկապատի չէք գըտել շաւիղն:

ԼՅՄՈՒՐԴ

Դուք սըխալվում էք այս մասում:

ՀՈՅԳԱԸՆ

Ես այս

Կասկածանքն ունիմ, թէ ամենամօտ  
Յարաբերութեամբ դուք արդէն նէրան  
Աք վերաբերում:

ԼՅՄՈՒՐԴ

Պըկայ իմ պատիւս,

Տիկին, ոչ երբէք:

ՀՈՅԳԱԸՆ

Նէ ինձ ատելե  
Ես Սիրելի լորդ, հետն ընտանեբար  
Մի վարուիք:

ԼՅՄՈՒՐԴ

Հանգիստ եղէք:—Եհա նէ

Եւ դուքսը, նէրա ամուսինն:

(ԱՐԱՆԻ, ԳՈՆԷՐԻԼ՝ և ԶԻՆՈՒՐՆԵՐ ԱՐԵ-ԲԵՐԱՆ և  
ՇԵՂԱՆԵՐԱՆ ներա և մահա-մ):

ԳՈՆԵՐԻԼ՝ (Եռանչին):

Լաւ է

Մինչեւ իսկ կըսիւն կորցընեմ, քան թէ

Եյս քոյրն անջատէ նըրան ինձանից:

ԱԼ'ԲԱՌԻ (Հաւեգանչին):

Ուրախ եմ, սիրուն քոյր, ձեզ տեսնելուս: (ԵՐԱ-ՆԵՐԻՆ)

Տէր, ես լըսեցի, թէ թագաւորին իւր

Դըստրին մօտ հասաւ, հետը միասին

Ուրիշներն էլ որ տըրտընջում են մեր

Խիստ վարչութիւնից: Չեմ կարող ես քաջ

Դըտնըրւիլ եթէ ազնիւ ըրլինիմ:

Եյս գէպքում եթէ մենք զէնք ենք վերցնում

Պատճառն այս է, որ արշաւում է մեր

Երկիրն Պաղպիա, և ոչ այս, որ նա

Երքային պաշտպան է և շատերին,

Որոնք, վախում եմ, բաւական արդար

Պատճառներ ունին ապրատամբելու

Մեր գէմ:

ԼՅՄՈՒՐԴ

Ծատ ազնիւ խօսում էք, միլորդ:

ՀՈՅԳԱԸՆ

Բայց ինչու են այս խօսքերն:

ԳՈՆԵՐԻԼ՝

Միանանք

Դիմագրաւելու թըշնամուն: Տնային

Վասնաւոր վէճերն գործ այստեղ չունին:

ԱԼ'ԲԱՌԻ

Ուրեմն խորհուրդ կազմենք փորձառու

Օօրականներին հետ:

ԼՅՄՈՒՐԴ

Չեր վըրանում

Ես ձեզ կըդրանեմ շուտով:

ՀՈՅԳԱԸՆ

Քոյր, դուք էլ

Մեզ հետ չէք գալիս:

ԳՈՒՅԵՐԻՆ՝

Ոչ,

ՀՈՎԳԵՐՈՒ

Չեր դաւը շատ

Յարմար կը լինի: Գընանք, խընդում եմ:

ԳՈՒՅԵՐԻՆ՝ (Առանցին):

Ո, այս առեղջուածն հասկանում եմ: (Բացյշ) Գնանք:

(Եթե նուա պատրաստված էն դուրս ենել՝  
ԷԴԳԱՐ ներ է ճանաւ, հագուստը ինչո՞ւ):

ԼՅԴՎԵՐ (Ալբանին):

Եթէ դուք արժան էք դատում խօսել

Ինձ պէս խեղջն հետ՝ մի խօսք լըսեցէք:

ԱԼՇՈՒՐԻ (Հետապնդերին):

Ես ձեզ կը հասնեմ: (Երգաբարին) Խօսեցէք:

(ԷԴՍՈՒՆԴ, ՀՈԵԳԱՆ, ԳՈՆԵՐԻԼ' և օքանուիսբը ժնուած էն):

ԼՅԴՎԵՐ

Յառաջ

Վան կոիւ ըսկըսէք՝ կարդացէք այս թուղթն: (Տալիս է մի նամակ):

Թաէ յաղթէք՝ թըմքի ձայնով կանչեցէք  
Նըրան՝ որ տըւեց ձեզ այս: Ես որչափ  
Գնում էլ երեխի բայց ներկայացնել  
Կարող եմ ասպետ մ, որ այստեղ զըրուածն

Սպացուցանէ: Խոկ եթէ յաղթուիք՝  
Ըուանց նորան էլ աշխարհի գործերդ  
Ավերջանան, նոյնպէս և բոլոր դաւելն: (Գնալու)

Չեղ յաջողութիւն:

ԱԼՇՈՒՐԻ

Աաց, մինչեւ կարդամ

Կամակն:

ԼՅԴՎԵՐ

Եյդ խըստիւ արգելուած է ինձ:

Երբ դայ ժամանակն թող մունետիկն ինձ

Գոռչէ, և կը կին կերեիմ: (Գնաւածէ):

ԱԼՇՈՒՐԻ

Ուրիմ

Երթաս բարով: Ես կը կարդամ նամակն:

(ԷԴՍՈՒՆԴ յետ է դաշտուած):

ԼՅԴՎԵՐԻ

Մօտ է թըշնամին: Յարդարեցէք ձեր  
Օօրքն: Եշա նոցա զօրութեան ցանկն, որ  
Մեծ խուզարկութեամբ է կազմած: Բայց ձեր  
Կերկայութիւնը փութացնում են շատ:

ԱԼՇՈՒՐԻ

Պէտք է ըստ տեղւոյն և պարագային  
Շարժիլ (Գնաւածէ):

ԼՅԴՎԵՐԻ

Սէրի և հաւատարմութեան  
Երդում տըւի ևս երկու քոյրին էլ:  
Միմեանց թըշնամի ևն նէրանք, ինչպէս  
Թունաւորուածն և իժը: Ես որին  
Վոնիմ երկուքին, մէկին, ոչ մէկին:  
Ոչ մէկիցն օգուտ ևս չեմ ունենայ,  
Եթէ ողջ մընան երկուքն էլ: Եթէ  
Վյրիին առնեմ՝ Գոհէրիլ' գազան  
Աըդառնայ. բայց և սէրա հետ մի գործ  
Յառաջ չե գընայ, մինչդեռ կինդանի  
Ե իւր ամուսինն: Ոչինչ գեռ կը ռուի  
Վոնն նորանով կօգտուիմ, իսկ յետոյ՝  
Եթէ շատ ուզում է նէ ազատուիլ

Նրանից՝ թող հընար գըտնէ շուտով նրան

Մէջից բառնալու: Խոկ թէ խորհում է

Նա ինայել Լիրին և Աորդելեային—

Թող կը ռուից յետոյ նոքա մէկ մեր ձեռքն

Ընկնեն՝ էլ իրքէք ներում չեն տեսնել։  
Իմ այժմեան դիրքըս պահանջում է՝ ինձ  
Պաշտպանել և ոչ իրաւունք փընտոել։ (Պահանք)։

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դաշտ երկու բանակներին մէջ։

Ճեմի ետև կռուի աղաղակ։ Լիր, ԿՈՐԹԵԼԻԱ և ԶԻՆՈՒԹՅՈՒՆԵՐ թմբուկը ներով և գրօշակներով անցնում են տեսարանի մէջով։ Յետոյ դալիս են իրգոր և ԳԼՈԽՏԻՐ։

Ե.Գ.Գ.Ը.Բ

Այստեղ հանգչեցէք, հայր, ծառի ստուերում  
Եւ աղօթեցէք, որ արդարութիւնն  
Յաղթանակէ։ Թաէ իրքէք ևս դառնամ  
Զեղ մօտ՝ աւետիս կըրերեմ իմ հետ։ (Պահանք)։

Ե.Գ.Գ.Ը.Բ

Աստուած օրհնէ ձեզ։  
(Կառավար աղաղակ, յետոյ նահանջ)։  
ԷԴԳԱՐ յետ է ժայկ։

Ե.Գ.Գ.Ը.Բ

Փախչինք, ծերունի,  
Զեռքըդ տուր փախչինք։ Լիր յաղթըւեցաւ  
Եւ իւր դըստրին հետ միասին գերի  
Ընկաւ։ Զեռքըդ տուր։ Պընանք։

Ե.Գ.Գ.Ը.Բ

Ռէտ հեռուն  
Պէտք չէ, բարեկամ։ Այստեղ էլ փըտիլ  
Աարելի է։

Ե.Գ.Գ.Ը.Բ

Կ՞չէ, նորից սև մըտքեր։

Պէտք է համբերել ինչ աշխարհ գալուն  
Նոյնպէս և գնալուն։ Պէտք է հասուննալ  
Միայն։ Պահանք։

Ե.Գ.Գ.Ը.Բ

Այս, իրաւունք ունիս։ (Պահանք)։

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Կերս են մտնում իֆթիլին թմբուկներով և գրօշակներով, ինչպէս յաղթական, Լիր և ԿՈՐԹԵԼԻԱ իբրև գերի, ՍՊԱՆԵՐ, ԶԻՆՈՒԹՅՈՒՆԵՐ և յլ։

Ե.Գ.Գ.Ը.Բ. (Սպանելին)։

Հեռացրեք դոցա և լսւ հըսկեցէք,  
Մինչև յայտնըւի բարձրագոյն կամքը  
Վատաւորների։

ԿՈՐԹԵԼԻԱ.

Մէնք առաջինը

Զենք նոցանից՝ որ լաւագոյն դիտմամբ  
Զարագոյն բաղդի հանդիպեցան։ Վեզ  
Խըզըում եմ միայն, Ճընչուած թագաւոր։  
Մինակ՝ կարող եմ ևս խարխուլ բաղդի  
Օանակին տանել։ Պիտի չը տեսնենք  
Մէնք այն դըստրերին, այն քոյրերին։

ԼԻՐ

Ո.Հ.

Ո.Հ., ոչ, ոչ։ Պընանք բանդն. այնտեղ կերպենք  
Մէնք, ինչպէս երկու թըռչուն վանդակում։  
Դու իմ օրհնութիւնս կըխընդրես, և ևս  
Օունկ չողած՝ քեզնից ներում կըխընդրեմ։  
Այսպէս մենք կապըինք, կերպենք, կաղօթենք,  
Վւանդութիւններ կըպատմենք, ոսկի  
Օիթեռնիկներին վերայ կըխընդանք,

Խեղճ թըշուառների զըոյցներն կըլսահնք  
Մենք պալատական լըրերի վերայ.  
Նոցա խօսակից կըլինենք և մենք,  
Թէ ովէ ընկնում, ովք բարձրանում, ովք  
Շընորհք է զըտնում, ովք նրանից զըրկվում,  
Գործերի գաղտնին կըմեկնենք, որպէս  
Թէ մենք սըրտադէտ լինէինք: Այսպէս  
Ռանդի պատերին մէջ մենք կըտեսնենք  
Պալատի խաղերն ու խըմբերն, որոնք  
Լուսնի հետ աձում են ու պակասում:

ԵՒՄՈՒՆԻ

Տարեք դրանց:

ԵՒՄ

Սիրուն զաւակս, այս տեսակ  
Զոռհին վրայ ինքնին աստուածները խունկ  
Կը ծըխն: Ես քեզ գրտայ. եթէ մէկն  
Ուզէ մեզ բաժնել երկրնքից կըրակ  
Պէտք՝ առնէ և մեզ վախեցնէ նրանով,  
Երբ աղուէսներին: Եչքերդ սըրբիր.  
Ժանար մանաւանդ կուտէ նոցա միսն  
Ու կաշին, քան մեզ նոքա կըստիպեն  
Երատասուել: Եյո, նոքա մանաւանդ  
Վաղցից կըմեռնեն: Գրնանք:

(Եկը և Ասրտելիս պահապաններով գնում էն):

ԵՒՄՈՒՆԻ (Մէ աղայ):

Եյստեղ հի,

Գընդապետ, լըսիր. առ այս տոմսակը, (բալեն է մէ նորդը)  
Ռանդ գընա հետերն. քեզ մի աստիճան  
Ես բարձրացըսի արդէն, և եթէ  
Աստարես այստեղ պատուիլուածն՝ ուղեղ  
Կը հարթես գէպի բարձրագոյն պատիւն:  
Նըկատիր քեզ որ մարդն այն է լինում,  
Ինչ որ ժամանակն է, և փափուկ սիրտն

Երժան չէ սըրի: Առարկութիւն թշլ  
Տէ տալիս այս բարձր յանձնարարութիւնն.  
Կամ նրան կատարիր, կամ մի ուրիշ տեղ  
Բաղդ փընտոիր:

ԳԵՐԱՎԵՏ

Լաւ, և կը կատարեմ այն:  
ԵՐԱՎՈՒՄԵՐ

Փշթ ուրեմն. և քեզ բաղդաւոր կարծիր՝  
Երբ այն կատարեն: Լըսիր, ասում եմ  
«Խոկցն», և այնպէս արա, ինչպէս որ  
Եյստեղ գըրուած է:

ԳԵՐԱՎԵՏ

Զեմ կարող ևս կառք  
Վաշել կամ ուտել չոր վարսակ. ինչ որ  
Ճընար է մարդին՝ ևս կանեմ: (Գնումէ):  
(Փողէր. ԱՌԱՆԻ, ԳՈՆԵՐԻԼ, ՀՈԵԳԱՆ, ՍՊԱՆԵՐ  
և ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ներա ևն մասում):

ԵՐԱՎՈՒՄԵՐ

Մի՛որդ,  
Եյսօր ցցց տըւիք դուք ձեր արութիւնն,  
Եւ բաղդն էլ օգնեց ձեզ: Դուք գերեցիք  
Մեր յաղթանակի ախցեաններին:  
Նոցա ձեզանից պահանջում ենք, որ  
Վարուինք նոցա հետ, ինչպէս երկուստեք  
Թակաղիննոցա արժանիքն և մեր,  
Եպահովութիւնն:

ԵՒՄՈՒՆԻ

Լաւ համարեցի

Ես, տէր, այն թըշուառ, ծեր թագաւորին  
Կալանքի մի տեղ յուղարկել արթուն  
Պահպանութեան տակ: Նորա հասակը,  
Մանաւանդ տիտղոսն զիւթիւ զօրութիւն

Ունին զբաւելու ռամկին սըրտերը  
Եւ մեր նիղակներն մեր դէմ դարձնելու:  
Հետն յուղարկեցի թագուհուն էլ նցն  
Պատճառով: “Նոքա պատրաստ կը լինին  
Վաղը, կամ երբ ձեղ հաճց լինի” դալ  
Չեր դատաստանին առջև կանգնելու:  
Քըրտինք ու արիւն այժմ հոսում են դեռ,  
Ընկերն ընկերին կորցրեց. լաւագոյն  
Պատերազմներն էլ բորբոքած սըրտով  
Ընիծում է նա՝ որ ենթարկուեցաւ  
Նոցա հարուածին: Կորդելիայի  
Եւ հօր դատաստանն աւելի յարմար  
Տեղ են պահանջում:

ԱԼ'ԲԱՌԻ

Ներեցէք ինձ, տէր,  
Եյս պատերազմում դուք ստորագրեալ  
Իչք ինձ և ոչ եղայր:

ՀՈՒԳՎԱՆ

Հէնց այս պատիւն էլ  
Ուղում ենք նորան մենք տալ: Ապրծեմ, դեռ  
Եյգպէս չըխօսած լաւ էր հարցնէիք  
Մէր կամքն էլ: “Նա մեր զօրքն հանեց կը ռուի,  
Մէր աստիճանի և անձի պատիւն  
Նա էր կը ռում վերան, և այս իշխանութիւնն  
Կարող էր նորան վըստահութիւն տալ  
Չեղ կոչել եղայր:

ԳՈՒՆԵՐԻՆ՝ (Հաւետանին):

Ծատ մի տաքանաք.

Նրան իւր սեփական արժանիքն աւել  
Բարձրացրեց, քան ձեր պաշտպանութիւններն:

ՀՈՒԳՎԱՆ

Ինձանով զգեցած իմ իրաւունքներս՝  
Նա հաւասար է նախապատուին էլ:

ԳՈՒՆԵՐԻՆ՝  
Սմենամեծն այս կը լինէր, որ նա  
Չեղ հետ պըսակուէր:

ՀՈՒԳՎԱՆ

Յաճախ մարգարէ

Են ծաղրածուներն:

ԳՈՒՆԵՐԻՆ՝

Դադար, դադար: Աչքն,  
Որ ձեղ ցոյց տըւեց այս՝ փոքր ինչ շել է:

ՀՈՒԳՎԱՆ

Տիկին, տըկար եմ ես, ապա թէ ոչ  
Չեղ լըցուած սըրտով պատասխան կտայի: (Հաւետանին):  
Օօրապետ, առ իմ զօրքերս, գերիներս,  
Երկիրներս, տիրիր նոցա և իմ վրայ:  
Տեղի եմ տալիս քեզ վըկայ լինի  
Ծշխարհ քեզ ընտրում եմ ինձ ամուսին  
Եւ տէր:

ԳՈՒՆԵՐԻՆ՝

Յոյս ունիւս նըսան ըստանալ:

ԱԼ'ԲԱՌԻ (Գանեշէլին):

Երգելք լինել քո կամքից չէ կախուած:

ԷԴՄՈՒՆԴ

Ու էլ քո կամքից, լորդ:

ԱԼ'ԲԱՌԻ

Ենտուն լակոտ:

ՀՈՒԳՎԱՆ (Հաւետանին):

Թըմբուկ զարնել տուր և ապացուցիր  
Իրաւունքդ:

ԱԼ'ԲԱՌԻ

Կաց դեռ և լըսիր:— Էդմունդ,

Աալանաւորում եմ քեզ պետական  
Դաւի համար, և քեզ հետ խատուտիկ  
Եյս օձին (Յոյց դաշտը՝ Գառնէլլի՛ն:— Հուեգանին)

Իսկ ձեր դիտումը, սիրուն  
Քոյր, խափանում եմ ես կընիս օգտին:  
Նէ այս պարոնին հետ նըշանուելէ  
Օածկապէս, և ես, նէրա ամուսինն,  
Երգելում եմ ձեր նշանախօսութիւնն.  
Խթէ նըշանուել ուղում էք՝ առէք  
Ինձ: Եյս տիկինը խօսուած է արդէն:

ԳՈՒԵՐԻՒՆ

Աատակ է, ի՞նչ է այս:

ԵԼՇԻՌԵՆԻ

Գու զինուած ես.

Օսող հընչէ թըմբուկն: Օսէ մարդ դուրս ըզգայ՝  
Որ ապացուցէ քո ամօթալի  
Բազմաթիւ դաւերդ՝ աշա իմ դըրաւս:  
(Զին-է նորան ի-ը յեւենցը):

Քո սըրտիդ վերայ կապացուցանիմ—  
Յառաջ քան բերանս մի բան գնեմ—թէ դու  
Եյն ամենն ես՝ ինչ որ քեզ կոչեցի:

ՀՈՒԵՐԻՒՆ

Ուհ, հիւանդ եմ ես, հիւանդ եմ:

ԳՈՒԵՐԻՒՆ (Եռանչին):

Օսոյնին

Չէի հաւատայ էլ ես՝ թէ հիւանդ  
Չլինէիր:

ԵՐՄՈՒԵՐԻ

Եշա իմ հակազըրաւս: (Զին-է ի-ը յեւենցն):  
Ով ինձ դաւաճան կոչէ սըտումէ  
Նա իբր ապիրատ: Օսող հընչէ թըմբուկն:  
Ով համարձակի՝ ես նորա կամ ձեր

Կամ հէնց ամենքի վերան քաջութեամբ  
Կապացուցանիմ հաւատարմութիւնս  
Ու պատիւս:

ԵԼՇԻՌԵՆԻ

ԵՇ, մի մունհատիկ:

ԵՐՄՈՒԵՐԻ

ԵՇ, մի

Մունհատիկ. կանչէք այստեղ մունհատիկն:

ԵԼՇԻՌԵՆԻ

Քաջութեանդ վերայ միայն յշյորդ դիր,  
Վասընզի զօրքերդ, որ իմ անունովս  
Ճողովուած էին՝ արդ իմ անունովս  
Դարձեալ արձակուած էն:

ՀՈՒԵՐԻՒՆ

ԵՇ, ես սաստիկ

Հիւանդ եմ:

(ՄՈՒՆԵՏԻԿԸ նէր է հանում):

ԵԼՇԻՌԵՆԻ

Տըկար է նէ. իմ վըրանս  
Տարէք նէրան: (Հուեգանին գառնում էն): Եկ այստեղ, մու-  
նհատիկ,

Փողըդ հընչեցրու և բարձրը ձայնով  
Եյս թուղթը կարդա:

ՄՊՈՒՅ

Փողը հընչեցէք: (Փողն հնչում է):

ՄՊՈՒՅԵՏԻԿ (Կարտում է):

«Եթէ բանակին մէջ կայ մի մարդ, համապատասխան  
դիրքով և աստիճանով, որ զէնքով կամենայ հաստատել թէ  
«Եղմունդ, անուանուած Գլոստէրի կոմսն, մի քանի անդամ  
«դաւաճան է եղել՝ թող նա դուրս գայ փողի երրորդ անդամ  
«Հնչելուն: Եղմունդ պատրաստ է պաշտպանուելու»:

ԵՒՄՈՒՆԴ

ՀԱՅԵցէք: (Փողի առաջն հնալեն):

ՄՈՒՆԵՏԻԿ

Միւսանգամ: (Փողի երկրորդ հնալեն):

ՄՈՒՆԵՏԻԿ

Միւսանգամ: (Փողի երրորդ հնալեն):

(Մի ուրիշ խող պատասխանում է բեմի եպելից նույնությունը և մասնաւությունը: Մի ՓՈՂԱՐ առաջն է ինում է):

ԱԼՇԵՆԴ

Հարցրու նորանից, թէ ի՞նչ կամենում  
Ենա, և ինչու համար դուրս եկաւ  
Փողի կոչելուն:

ՄՈՒՆԵՏԻԿ

Ո՞վ էք դուք. ի՞նչ է  
Չեր անունն, ձեր դիլքն. ինչու դուրս եկաք  
Եյս մարտակոչն:

ԵՒԳԵՐ

Գիտցէք. իմ անունս  
Դաւաճանութեան թունաւոր ատամն  
Կըրծոտեց, բայց և ազնրւական եմ  
Եխոյեանիս չափ, որին հետ ուզում  
Եմ մենամարտիլ:

ԱԼՇԵՆԴ

Ո՞վ է ախցեանդ:

ԵՒԳԵՐ

Ո՞վ կայ այս տեղում, որ Գլուստէրի կոմս  
Եղմունդին յօդուտ խօսք ասէ:

ԵՒՄՈՒՆԴ

Կ՞ոչ պիտի ասես նորան:

ԵՒԳԵՐ

Հանի՞ր սուրդ,

Որպէս զի եթէ իմ խօսքս ազնիւ սիրտ  
Վիրաւորէ՝ ձեռքդ առնէ քո վըրէժդ: (Հանում է առ-ըն)  
Եհա իմն:—Յանուն իմ պատուիս, երդմանս  
Եւ ասպետութեանս՝ ևս հաստատում եմ—

Զնայելով ոյժիդ և Ճարպիկութեանդ,

Բարձրութեանդ և առոյդ հասակիդ,

Զընայելով քո յաղթական սըրիդ

Եւ նորաբովքով բաղդիդ. չնայելով

Քո քաջութեանդ և սըրտիդ՝ գաւաճան

Ես գուն. ուխտագրուժ դէպ՝ քո աստուածնելով,

Գէպ՝ եղբայրդ և հայրդ. նենգաւոր դէպի

Եյս բարձր և հրզոր իշխանն. ապիրատ

Գագաթիդ ծայրից մինչև այն փոշին,

Որ լիզումէ ոտքդ: Եթէ ասես Ո՞չ

Եմ բազուկս, իմ սուրս, իմ բարձր արութիւնս

Քո սըրտիդ վերայ, որին հիտ խօսում

Եմ, կը հաստատեն՝ թէ սուտ ևս ասում:

ԵՒՄՈՒՆԴ

Պէտք էր ինձ հարցնել անունդ. բայց քո դէմքդ

Եյնչափ գեղեցիկ, պատերազմիկ է,

Եւ խօսուածքդ այնչափ բարեկիրթ՝ որ ևս

Երհամարհում եմ խոհեմութեան մանր

Ասսկածանկները, որ ասպետութեան

Օրէնքով յայտնեն ինձ իրաւունք էր:—

Քո զլուխն իմ նետում դաւաճանութիւնն,

Սըրտիդ եմ բարդում զժոխային սուտը:

Բայց որ գեռ նոքա մօտիցդ ին անցնում,

Եռանց ազգելու վերադ՝ այս իմ սուրս

Ենցա ճանապարհ կը բանայ այնտեղ՝

Ուր նոքա ընդ միշտ կը հանգչին:—Փողէր,

Հընչեցէք:

(Փողէր: Առ-ըն-մ էն: Եդմունդ ընկնում է):

ԱԼԻՎՈՒՄ

Խոսայիր, ո՞ ինսայիր նորան<sup>1:</sup>

ԳՈՒՅՆԵՐԻՆ

Աս որոգայթ էր, ԳԱՇՈՍՏԷՐ: Դուն երբէք

Պարտաւոր չէիր, մենամարտութեան

Օրէնքով, դուրս դալ մի անձանօթի

Խոչին: Յաղթուած չես դուն, այլ խարդախուած:

ԱԼԻՎՈՒՄ

Տիկին, ձեր բերանն ըլռնեցէք, թէ ոչ

Այս թըղթով ես այն կրզոցիմ: (ԵՐԵՎԱՆԻՒՆ) Եռ այս,

Նըւաստ քան բոլոր մականունները,

Կարդաքո ամօթդ: (ԳԱՆԵՐԵՆԻՆ, ո՞ ո՞լո՞յ է Էլել նամակը)

Տիկին, մի պատռէք:

Տհանում եմ, որ դուք ճանաչում էք այս:

(Տալիս է նամակն ԵՐԵՎԱՆԻՆ):

ԳՈՒՅՆԵՐԻՆ

Հէնց ճանաչեմ էլ Օրէնքներն իմն են,

Ոչ քոնդ. Ո՞վ է ինձ դատապարտողը: (ԳԱՆՈՅԵ):

ԱԼԻՎՈՒՄ

Ճիւաղը (ԵՐԵՎԱՆԻՆ) Գիտես այս նամակն:

ԼՐԱՄՈՒՄ

Մի հարցնէք,

Ինչ որ ես գիտեմ:

ԱԼԻՎՈՒՄ (Մի աղայի):

Ենքա ետևից

Գնացէք, կատաղած է նէ, հըսկեցէք: (Աղան ժիսո՞յ է):

ԼՐԱՄՈՒՄ

Ինչ որ իմ վերաս ամբաստանեցիք՝

<sup>1)</sup> Մեկնէներից ոմանք կարծում են, թէ այս խօսքն ասում է Գոներիւ, որով չետե Ալբանին, որ Եդմունդի դաւերը գիտէր՝ չեր կարող ենդրել որ նորա կեանքին խնայեն: Ումանք էլ ասում են, թէ Ալբանին ուզում էր Եդմունդի առ ժամանակ ապրիւն, որպէս զի նորանից պէտք եղած ցուցումներն ստանայ:

Գործել եմ և դեռ շատ շատ աւելին:

Ժամանակն ամենն կը յայտնէ. նոքա

Անցան ինչպէս ես: (ԵՐԵՎԱՆԻՆ) Բայց դուն, որին բաղդն

Յաղթանակ շնորհեց վերաս՝ ով ես դուն:

Եթէ աղնուական ես՝ ներում եմ քեզ:

ԼՐԱՄ

Թողլ ներողութիւնն երկուստեք լինի:

Յեղով քեզանից պակաս չեմ, Եդմունդ,

Խոկ եթէ աւել՝ ուրեմն և աւել

Դուն ինձ վըշտացրիր: Եդգար է անունս.

Քո հօր որդին եմ: Աստուածներն արդար

Են, մեր մեղքելը հէնց մեզ պատժելու

Գործիք են շնուռն: Խաւար, յանցաւոր

Անկողինն, ուր դու ծնունդ առար՝ նըրան

Օքրիեց աչքերից:

ԼՐԱՄՈՒՄ

Երդար խօսեցար:

Անիւը դարձաւ. ես ահա այստեղ:

ԱԼԻՎՈՒՄ (ԵՐԵՎԱՆԻՆ):

Շարժուածքիցդ արդէն գուշակում էի

Քո արքայական արիւնդ: Թողլ, մէկ քեզ

Վըրկեմ: Թողլ կըսկիծն պատառէ իմ սիրտս՝

Եթէ երբէք քեզ կամ հօրդ ատել եմ:

ԼՐԱՄ

Երժանապատիւ իշխան, ես գիտեմ:

ԱԼԻՎՈՒՄ

Ո՞րտեղ թաղ կիցաք դուք և ի՞նչ կերպով

Խմացաք ձեր հօր վըշտերն:

ԼՐԱՄ

Ճըսկելով

Եղիա վրայ, միլորդ: Ես ձեզ կարծառատ

Պատմեմ: մէկ պատմեմ, թողլ այնուհետեւ

Պատառի իմ սիրուս:—Եմ արիւնալի  
Դատավըճնից, որ մօտից հալածում  
Եր ինձ խոյս տալով—(որչափ քաղցր է կեանքն,  
Որ նախապատիւ է մեզ ցաւերից  
Սմեն ժամ մեռնելն, քան միանըւագ  
Մահը)—ես խենթի ցընցոտի հագայ.  
Ըուայ արտաքին կերպարանք, որից  
Շներն իսկ խորշում են: Եյսպէս ես զբայ  
Հօրս՝ արիւնալից մատանիներով,  
Որ անգին քարելն նոր էին կորցրել:  
Խորան առաջնորդ եղայ, մուրացի  
Խորա համար և փրքիցի նըրան  
Յուս՝ հատութիւնից: Երբէք, (մեծ սըխալ),  
Ինձ չըյայնեցի նորան, մինչեւ որ  
Մօտ կէս ժամ յառաջ, զըահաւորուելիս—  
Դործի վախճանին թէպէտ մեծայցոյ,  
Էպայց չըլինելով վըստահ՝ խընդիւցի  
Խորա օրհնութիւնն և թափառական  
Աեանքըս ծայրէ ծայր պատմեցի նորան:  
Բայց, ալս, նորա սիրտն, տըկար այս կըռուին,  
Օպայրայեղցաւից և խընդութիւնից  
Ճընշուած՝ պատառուեց ժրպտելով:

### ԵՒՄՈՒՆԻ

Ը արժեց

Ինձ քո պատմութիւնն, թերեւս և օգուտ  
Ի՞րէ, բայց յառաջ տար խօսքդ. ինձ այնպէս  
Թըւում է, որ գեռ ասելիք ունիս:

### ԵԼՇԵՆԻ

Եթէ ասելիքդ նոյնպէս տըխուր է  
Լըռիր: Ես արդէն գալուկ եմ ըզգում  
Եյսափ լըսելովս:

### ԵՒՎԱՐ

Եյտպէս թըւում է

Եոցա, որ վըշտից երկիւղ են կըրում:  
Բայց մի ուրիշ ցաւ ածում լըօացնում  
Ե վիշտն, որ արդէն զեղուած էր, և մինչ  
Օպայրայեղութիւնն է հասցնում:—Մինչդեռ  
Ես ողբում էի բարձրաձայն՝ եկաւ  
Մի մարդ, որ երբեմն ինձ վատ վիճակում  
Տեսնելով իմ գարշ ընկերութիւնից  
Խոյս տըւեց. իսկ այժմ երբ նա ձանաշեց,  
Ո՛վ էր տարաբաղդ այն թըլցուառն՝ իսկցյն  
Օսորեղ ձեռքերովն վիզըս փարեցաւ,  
Գոյչեց բարձրաձայն, որպէս թէ ուղեր  
Պատառել երկինքն. ընկաւ հօրըս վըայ  
Եւ պատմեց Եիրի և իւր վրայ մի դէպք  
Եյնչափ ցաւալի, որպէս չէ լըսած  
Երբէք մի ականջ: Պատմելիս վըշտերն  
Եյնքան սաստկացան, որ կեանքին թելերն  
Կըտրատիւ ըսկան: Հէնց նոյն վայրկեանին  
Երկրորդ փողն հընչեց և ես թողի նրան  
Կըռուելիս մահի դէմ:

### ԵԼՇԵՆԻ

Բայց ով էր նա:

### ԵՒՎԱՐ

Կէնտն, արտաքսուած Կէնտն, տէր իմ, որ ծըպտած  
Ընկերակցում էր իրան հալածող  
Աղքային, նորան ծառայութիւններ  
Եր անում՝ որոնք ըստրուկին իսկ չեն  
Վայել:

(Յանկարծակի ներս է ալանում մի ԱՍՊԵՏ, արենուր դաշնուր յեւ-ին):

### ԵՍՊԵՏ

Օգնեցէք, օգնեցէք, հասէք

Օգնութիւնն:

### ԵՒՎԱՐ

Ի՞նչ կայ օգնելու:

ԱԼՇԱԿԻ

Խօսիլու

ԱՇ մարդ:

ԵԳՎԵՐ

Ի՞նչ է այդ արիւնոտ դաշոյնն:

ԱՍՊԵՏ

Դեռ տաք է. ծըխում է դեռ նա: Հենց նոր

Դուրս ելաւ ներա սըրտից: Մեռաւ նէ:

ԱԼՇԱԿԻ

Ո՞վ, խօսիլու, մարդ:

ԱՍՊԵՏ

Չեր կինը, տէր, ձեր կինն:

Եւ ներա ձեռքով թունաւորուած է

Քիջը. նէ ինքն այս խոստովանեցաւ:

ԵԳՎՈՒՆԻ

Երկուքին հետ էլ նըշանուած էի.

Եւ մէկ վայրկեանում մենք պըսակվում ենք

Երեքս էլ:

ԱԼՇԱԿԻ

Դիերն բերէք, կենդանի

Կամ մեռած: Երկնից այս գատաստանը

Սարսափեցնում է մեզ, բայց չէ շարժում

Մեր կարեկցութիւնն: (Ասպետը դեռու է):

(Եւրա է հանու կէնծ):

ԵԳՎԵՐ

Տէր, աշա գալիս

Ե ԱԷՆՈՒ:

ԱԼՇԱԿԻ

Ո՞ւ, նա է այս. ժամանակը

Ջէ ներում անել հարկ եղած յարդանքն:

ԱԷՆՈՒ

Ես եկայ մաղթել իմ թագաւորիս

Եւ իշխաններիդ՝ յաւիտենական

Գիշել-բարին: ‘Նա այստեղ չէ:

ԱԼՇԱԿԻ

ՈՒՂՅԱՆ

Մենք կարեւու բան մոռացանք: Եղմունդ,

Ուր է թագաւորն, ուր է կորդելեան:

ԳՈՆԵՐԻԼԻ և ՀՈԵԳԱՆԻ դիանելը ներ էն բերու:

Աէնտ, տեսնում ես այս տեսարանն:

ԱԷՆՈՒ

Աւազ,

Ինչու համար է:

ԵԳՎՈՒՆԻ

Բայց սակայն Եղմունդ

Սիրուած էր: Այս մէկն ինձ համար միւսին

Թունաւորեց և ինքնիրան սպանեց:

ԱԼՇԱԿԻ

Ճիշտ է:— Օածկեցէք ներանց դէմքելը:

ԵԳՎՈՒՆԻ

Հազեւ եմ շընչում... բնութեանս հակառակ

Ուզում եմ բարի գործ անել... շուտով

Մարդ յուղարկեցէք... ֆութացէք միայն—

Ամրոցն. վասրնզի իմ պատուերս Լիրի

Եւ կորդելեայի կեանքին ըսպառնում

Ե վրտանդ... շուտով, էլ ժամանակն է:

ԱԼՇԱԿԻ

Վաղէք, ու վաղէք:

ԵԳՎԵՐ

Դէպի ով, միլորդ: (Ետքունդն)

Ով է այնտեղի հըսկողն: Մի նըշան

Տուէք ներողութեան:

ԵԳՄՈՒՆԻ

Լաւ իսելք է, սուրս առ,

Տուր գընդապեախն:

ԱԼՇԲԱՆԻ

Յանուն արևիդ

Փութա: (Երդար գետ-է):

ԵԳՄՈՒՆԻ

Նա ինձնից և քո ամուսնից

Պատուեր ըստացաւ՝ Աորդելիային

Կախել բանդին մէջ և յայտնել թէ նէ

Յուսահատութեան պատճառով գործեց

Ենձնասպանութիւն:

ԱԼՇԲԱՆԻ

Թաղ աստուածները

Նոցա պահպաննեն: (Երմունդը ցոյց առաջն հարդերին):

Հանեցէք սրբան

Դուրս: (Երմունդին պահու-մէն):

(Ոիր ներ է ճանու-մ, մեռած կորդելիԱն յեռ-  
մերու-մ բանած. Էդգար և ՍՊԱՆԵՐ եպելից):

ԵՒՐ

Լացէք, լացէք, լացէք, լացէք: Ո՞հ,

Վարից էք ամենքդ. թէ ունենայի

Ես ձեր լեզուներն, ձեր աչքեր՝ նոցա

Աըգործածէի երկնից կամարը

Խորտակելու: Ո՞հ, նէ ընդ միշտ գընաց:—

Ճանաչում եմ ես, երբ մեռած է մարդ,

Երբ դեռ կենդանի: . . . Նէ իբրև երկիրն

Մեռած է: Տըւէք ինձ մի հայելի:

Երբ նէրա շունչը հայելու երեսն

Խաւարեցնէ դեռ կենդանի է նէ:

ԱԼՇԱՏ

Ո՞մ է աշխարհի խոստացուած վախճանն:

ԵԳՎԵՐ

Աամ մի պատկե՞ր է այն աշեղ օրին:

ԱԼՇԲԱՆԻ (Լեռին):

Մեռիր, գյուղթիւնդ կորցրու մի անգամ<sup>1)</sup>:

ԵՒՐ (Կորդելիայի բերանին առջև մէջ կերպութիւն):

Կարժումէ փետուրն. կենդանի է նէ.

Սպրումէ նէ. ոչ, այս երջանկութիւնն

Վարձատրումէ ինձ բոլոր վթշտերիս

Փոխանակի, որ ես երեք կըրել եմ:

ԱԼՇԱՏ

Ո՞վ իմ բարի տէր: (Օսունի է լուս-մ):

ԵՒՐ

Հեռացիր ինդրեմ:

ԵԳՎԵՐ (Լեռին):

Եղնիւ Կէնտն է սա, ձեր բարեկամը:

ԵՒՐ

Ենէծք ձեր վերայ, դուք, մարդասպաններ,

Դուք, դաւաճաններ: Դեռ նէրան վրոկել

Կարող էի ես:—Յաւիտեան գընաց

Եյժմ: Աորդելիա, Աորդելիա, կաց

Փոքր ինչ . . ձա՞ , դուն ինչ ասիր. . . Նէրա ձայնն

Փափուկ էր, քընքոյշ և քաղցր. կընի մօտ

Թանկագին է այս: Ես ըսպանեցի

Եյն ըստրուկն, որ քեզ իսկդգեց.

ՍՊԱՅ

Ճիշտ է այս,

Տէրեր, նա արաւ այս:

ԵՒՐ (Ողացին):

Եյնպէս չէ, մարդ:—

<sup>1)</sup> Կանակումէ. աւելի լաւ է քեզ մի անգամց մեռնել և գյուղթիւնդ կորցնել,  
քան թէ ապրիւլ միայն նորա համար, որ վշտեր կըն:

Ապր մի ժամանակ, երբ իմ սուր սուսերս  
‘Նոցա բոլըին կըթըոցընէր։ Եյժմ  
‘Օեր եմ ես, և այս բոլոր չարիքներն  
Կործանում են ինձ . . (Ավագին) Խընդիմ, ով էք դուք.  
Եզքերս լաւը չեն—կացէք ձեղ ասեմ. . .

ԿԼՇՆՏ

Թռէ պարծենայ բաղդն, թէ երկու մարդի  
Սիրել և ատելէ միանգամայն՝  
‘Նոցանից մէկին տեսնում ենք այստեղ։

Լ.Ի.Բ

Եզքերս մըթնում են։ Կէնտը չե՞ս։

ԿԼՇՆՏ

Ես եմ  
Ես, ձեր ծառայն, Կէնտ։ Ո՞ւր է ձեր ծառայն  
Կայիւս։

Լ.Ի.Բ

‘Նա մի քաջ տրղայ է.—ես այս  
Կարող եմ ասել ձեզ—Հինց զարնում է  
Ըստանց նայելու։ Մեռած և փրտած  
Ե նա։

ԿԼՇՆՏ

Ո՛չ անգին տէր իմ, ես եմ նա. . .

Լ.Ի.Բ

Հիմա կրտեսնեմ։

ԿԼՇՆՏ

Որ ձեր չարիքի  
Եւ դըժբաղդութեան ըսկըզեից ի վեր  
Հիտեսում էի ձեր տրխուր քայլին։

Լ.Ի.Բ

Բարով եկաք։

ԿԼՇՆՏ

Ո՛չ ոչ ես և ոչ ոք։  
Վմեն ինչ այստեղ մեռած, արխուր է։  
Քո աւագ դըստրերդ անձնասպան եղան  
Խ յուսահատութեան մէջ մեռան։

Լ.Ի.Բ

Եյժ,

Ես էլ կարծում եմ։

ԱԼՇՆՏ

‘Նա չէ հասկանում  
Խօսածն. աւելողդ է, որ մենք նորան  
‘Ներկայանում ենք։

Լ.Գ.Գ.Ը

Բոլորովին զուր։  
(Ո՞չ ՍՊԱՅ ներ է հրանու)։

ՄՊԱՅ

Տէր, Եգմունդ մեռաւ։

ԱԼՇՆՏ

Կարեռը չէ այդ։—  
Դուք, ազնիւ լ'որդեր և բարեկամներ,  
Լքսեցէք մեր կամքն։ Ինչ որ կարող է  
Եյս մեծ դըժբաղդին (Լիլին ցոյց դալով) մըխիթարել՝ այն  
Պէտք ենք կատարել։ Իսկ մենք ուղում ենք  
Եյս արքայական ծերունուն յանձնել  
Բոլոր տէրութիւնն, մինչ կենդանի է։ (Ավագին և Լշտիտին)  
Իսկ ձեր երկուքիդ ձեր իրաւունքներն  
Վերադարձնում եմ, և յաւելուածներ,  
Որոց դուք լըրիւ արժան էք։ Բոլոր  
Մեր բարեկամներն առաքինութեան  
Վարձքը կըստանան, բոլոր թըշնամիք։  
Յանցանքի բաժակն։—Ո՞չ, նայէք, նայէք։

Ա.Բ.Պ

Խեղճ գուստըս խեղդում ծ<sup>1)</sup>): Ու ոչ կեանք չըկայ:

Խնջու ապրում են մուկը, շունն և ձին,  
Իսկ գուն չես շընչում: Ո՛հ, գուն էլ չես գար,  
Ո՛չ երբէք, երբէք, երբէք, երբէք:—Ե.Յ.

Առակը բացէք խընդրեմ:—Ծնորհակալ  
Եմ, տէր: Տեսնում էք այս . . . ո՛հ, նայեցէք  
Վերան, նայեցէք, նէրա շըրթունքներն.  
Նէրան նայեցէք, նէրան նայեցէք: (Մեռնում է):

Ե.Գ.Գ.Ը

Դալկանում է նա: Միլ'որդ, միլ'որդ . . .

Ա.Յ.Տ

Սիրուտ,

Առտորուիր, խընդրեմ կոտորուիր:

Ե.Գ.Գ.Ը (Լէռն վերայ հակած):

Տէր իմ:

Եզքերը բացէք:

Ա.Յ.Տ

Մի տանջէք հոգին:

Ո՛հ, թողէք խաղաղ գընայ: Բարեկամ  
Չէ նորան, ով որ այս դառն աշխարհի  
Տանջանքին այլ ևս ուզում է նըրան  
Ենթարկել:

Ե.Գ.Գ.Ը

Ո՛հ, նա յիրաւի մեռաւ:

1) Այս խօսքն երկար վէճների առիթ եղաւ մեկնիչների մէջ, թէ ում պէտք է համանալ: Բնագրին մէջ է «poor fool»—խեղճ յիմար: Ումանք (Յէյնու՞ու, Կուլըիլ, Փրանսուա Հիւգօ) կարծում են, թէ խեղկատակի մասին է այն ասուած, մանաւանդ որ Նիր խեղկատակին շատ սիրում էր, ինչպէս քանից անգամ ցցց տուեց արդէն: Մի մէջ՝ ծանրագոյն վիճակ ունեցաւ: Իսկ մենք կըստսերներու՝ երբէք չենք տեսնի Եյս քանրան, երբէք այսքան չենք ապրի:

(Յունական արքան նուագա: Գուրգ լունային):

1) Այս խօսքն երկար վէճների առիթ եղաւ մեկնիչների մէջ, թէ ում պէտք է համանալ: Բնագրին մէջ է «poor fool»—խեղճ յիմար: Ումանք (Յէյնու՞ու, Կուլըիլ, Փրանսուա Հիւգօ) կարծում են, թէ խեղկատակի մասին է այն ասուած, մանաւանդ որ Նիր խեղկատակին շատ սիրում էր, ինչպէս քանից անգամ ցցց տուեց արդէն: Մի մէջ՝ ծանրագոյն վիճակ ունեցաւ: Իսկ մենք կըստսերներու՝ երբէք չենք տեսնի Եյս քանրան, երբէք այսքան չենք ապրի:

(Յունական արքան նուագա: Գուրգ լունային):

Ա.Յ.Տ

Հրաշք է, որ այսքան երկար դիմացաւ:  
Բըռնի էլ ապրում նա:

Ե.Գ.Գ.Ը

Դուրս ձըգեցէք  
Դոցա:—Միր վերայ այժմ ընդհանուր սուզ  
Այ: (Կէնալն Երժարին) Դուք, իմ հոգու բարեկամները,  
Առավարեցէք դուք այս տէրութիւնն  
Եւ բըժը կեցէք երկրի վէրքերը:

Ա.Յ.Տ

Միլ'որդ, Ճանապարհ կելնեմ ևս շուտով:  
Կոչում է ինձ տէրս. չեմ համարձակում  
Նորան ասել Ոչ:

Ե.Գ.Գ.Ը

Հարկ է մեզ տըխուր  
Եյս ժամանակի բեռին ենթարկուել  
Եսել այն, ինչ որ ըզգում ենք, և ոչ  
Ինչ որ վայել է: Եւագագոյնը  
Միր մէջ՝ ծանրագոյն վիճակ ունեցաւ:  
Իսկ մենք կըստսերներու՝ երբէք չենք տեսնի  
Եյս քանրան, երբէք այսքան չենք ապրի:

(Յունական արքան նուագա: Գուրգ լունային):

Ա.Յ.Տ



## ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

- Եր. 18. 17-րդ տողից յետոյ սուբլինել՝ Երկրորդ տեսարան:  
Մի դահլիճ գլ' ոստէրի ամրոցում:  
» 19. 2-րդ տողում՝ ի՞չ ապօրինի. սովորել՝ ի՞նչ ապօրինի:  
» 19. Աերջին տողը (Ժամ չէ անցնում, որ անվայել  
գործով) զնովել:  
» 39. Օմանօթ. 5-րդ տողում՝ իրանց առածին. սովորել՝ ի-  
րանց ասածին:  
» 54—56, 59, 74—79. Գորնվալ' բառը սովորել՝ կորնվալ'  
» 89. 16-րդ տողում՝ չեմ գատում քեզ. սովորել՝ չեմ գա-  
տում չեզ:  
» 125. Աերքեից 2-րդ տողում՝ Գուլինիս. սովորել՝ Գու-  
լինիս:  
» 126. 8-րդ տողում՝ Տէր, իմ կորնվալ'ի. սովորել՝ Տէր իմ,  
կորնվալ'ի:  
» 130. 3-րդ տողում՝ նէրա հառաջանքն. սովորել՝ նէրա հա-  
ռաջանքն:  
» 140. 10-րդ տողում՝ գաթաթում. սովորել՝ գագաթում:  
» 144. 14-րդ տողում բացուխում. սովորել՝ բացուխում:



960

2013

